



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Чукческий



1926

15.02.2013

491.99-8
U-65

04 MAY 2010

ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ


1009
9039

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵԿ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐՐՈՐԴ ՏՊԱԳ-ԲՈՒԹՅՈՒՆ

Խմբագրեց, վերամշակեց յիկ լրացրեց Ա. Մ. ՆՈԽԵՑՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏԵՐԵՎԱՆ - 1926

53
9039

Վողջույն ամենքիդ

Մաճկալ յեղբայրներ,
մեր տանջանքների
ու հաղթանակի
միակ ընկերներ,
վողջույն ամենքիդ.

Դուք ձեր ամրապինդ հաղթ բազուկներով
պատռում եք կուրծքը հողի արգավանդ
ու ձեր քրտնաթոր ծանր աշխատանքով
դուք կերակրում եք աշխարհ բազմամարդ:

Դուք, ցայգալուսից մինչև վերջալույս՝
առանց հօգնելու, առանց կանգնելու
աշխատում եք հար ու միշտ լիանույս,
վոր ձեր աշխատանք ձերն ե լինելու:

Մենք մուրճեր ունենք՝ հզոր ու անհաղթ,
կուռ շարքեր ունենք, անհաղթ բազուկներ.
պողպատ կրծքերի պատնեշներ ունենք
ու ձեզ հետ մեկտեղ կանգնել ենք և մենք:

Դուք՝ հարած մաճին,
մենք՝ փարած մուրճին,
զարկ տանք միասին
մեր աշխատանքին:

Մաճկալ յեղբայրներ,
մեր աշխատանքի
ու հաղթանակի
միակ ընկերներ,
գործարաններից
ու դարբնոցներից
վողջույն ամենքիդ.

Դաշտ

Այիմ դաշտ արձակ,
արձակ-ընդարձակ,
փովել ես, իմ դաշտ,
փովել, տարածվել,
փովել տարածվել,
սև ծովին հասել:
Քեզ հյուր եմ յեկել,
յեկել եմ վոտով,
մենակ չեմ յեկել,
յեկել գերանդով:
Կեսորվա քամի,

Գչիր իմ դեմքին,
հով արա, շարժիր
դաշտը ահագին:
Չընդա, գերանդի,
շողա յետ, առաջ,
աղմկիր, պառկիր,
այ հնձած կանաչ:
Ծովեր, ծաղիկներ,
կռացեք գետին,
խոտի հետ ձեզ ել
կտրեց գերանդին:

Բերքի տոնը

Ինչ եմ անում
վոսկի, արծաթ,
տոպրակներով
թուղթ, ստակ.
յես թե ունեմ,
թիկունք ունեմ,
յես կուռ ունեմ,
կուռ դաստակ.

յես հող ունեմ,
յես ջուր ունեմ,
ճակտի բրտինք,
վար-վաստակ-
ձեռքիս տոնն ե,
բերքիս տոնն ե,
պիտի փայլի
աշխատանք:

Առաջ և հիմա

Միրզենց Արզումանը գյուղի հարուստներից եր: Նրանց հարըստությունը վորդեցվորդի յեր գալիս: Միքանի տարի առաջ Արզումանը հինգ այգի ուներ, տաս դեսիատին հող, վեց զույգ լծկան, տասնհինգ կթան կով, միքանի հարյուր գլուխ վոչխար: Եղ ժամանակները նրա քեֆին քեֆ չեր հասնի: Ինչ խոսք, վոր նա յեր գյուղի տանուտերը:

— Միրզենց Արզումանը չեմ յես. ինձ Արզուման Միրզոյեիչ ասեք:

Բայց ահա մի որ այդ բոլորը ջրի նման գոլորշիացավ, ծխի նման ցնդվեց: Արզումանին մնաց մի տուն՝ իր ընտանիքով ապրելու և մի կտոր հող՝ վարելու ու ցանելու համար: Ավելորդ սենյակներում տեղափորկեցին գյուղի հիմնարկները, հողերն ել բաժանվեցին հողագուրկ գյուղացիներին,

Բայց ելի Միրզենց Արզումանը չեր կոտրվում ու թագունընկած տեղն ասում եր. «Ուղտն ինչքան սատկի, կաշին մի իշաբեռ կլինի. յես Արզուման Միրզոյեիչ ծնվել եմ, Միրզոյեիչ ել պիտի մեռնեմ»:

Հսձի յեռուն ժամանակն եր: Արզումանն ուզում եր իր արտը ժամանակին քաղի՝ մեկ նրա համար, վոր ցորենը չփչանա, մեկ ել՝ վոր Միրզոյեիչի անունը չկոտրի: Բայց արի ու տես, վոր բանը թարավել եր: Գյուղի բատրակները, վոր առաջ չնչին վարձով ծառայում եյին Միրզոյենց Արզումանին, հիմա կազմակերպվել են, ել նրա առաջարկած կես մանեթ որավարձով աշխատել չեն ուզում:

— Տո Մին, յերեկ-մեկելորը յերկու շահիով որենը ցեխ եյիր կրում ինձ համար, հմիկ մանեթ ես ուզում:

— Են գնաց, — պատասխանում եր Մին, — հմիկ աշխատանքի տերն ա:

Վո՞յ անի Արզումանը. հաշվում ե, վոր իրան քսան հնձվոր ե հարկավոր ամբողջ արտը հնձելու համար, քսան հնձվոր — քսան մանեթ. բա կալը կրելը, ծեծելն ու մաքրելը, ջրաղաց տանելը, եղ մւը կհասնի: Զե, բանը ծովել ե: Եսպես գնալով՝ աղա Միրզոյեիչը վերջը որհացի կարոտ կմա:

Ամբողջ գիշերն Արզումանը չքնեց, շուռումուռ եր գալիս անկողնում:

Մյուս որը կինը տեսավ, թե ինչպես Արզումանը սուսուփուս միքանի լավաշ կապեց շալակը, մանգաղը վերցրեց ու գնաց... իր արտը հնձելու:

— Եղ մւը, Արզուման Միրզոյեիչ, — ծաղրաբար հարցնում եյին գյուղացիք:

Արզումանը չեր պատասխանում. զլուխը կախ, մտքերի մեջ ընկած՝ շտապում եր դեպի արտը:

Ճանձ

Խոնարհ ու հեղ	ասավ. «Տն, մանչ,
մի հոգնած յեղ,	ես յեղան հետ
արորն ուսին,	վհրտեղից եղ...»:
ճանձը պողին,	Նա, ցից արած
մի իրիկուն	բիթը, ասաց.
գալիս եր տուն:	— Մենք վհրտեղից... —
Մին ել ճամպին	վարում եյինք,
մի ուրիշ ճանձ	վարատեղից.

Կարտոֆիլը

Հացից հետո մարդուս սննդի համար ամենակարևոր բույսը կարտոֆիլն է: Այդ բույսը մեր աշխարհն են բերել մոտ 300 տարի առաջ:

Պատմում են, վոր մի վաճառական Ամերիկայից, իր ծանոթներից մեկին միքանի կարտոֆիլ ե ուղարկում, թե՛ գարնանը տնկեցէք և աշնանը ձեր բարեկամներին պատվեցէք սրա համեղ պտուղներով:

Այդ վաճառականի ծանոթն այդպես ել անում է: Աշնանը մի հրավերք ե սարքում:

Ճաշի վերջը բոլորը սրտատրոփ սպասում եյին, թե նոր պտուղներից պատրաստած կերակուրն ինչ պետք ե լինի: Յերբ ամանի խուփը բաց արին, տեսան յուղում տապակած, կանաչ, կոր պտուղներ: Գովեցին տանտիրոջը, բայց կերակուրն այնքան դառներ ու անհամ, վոր չկարողացան ուտել: Տանտիրոջ քեփը փչացավ. նա բարկացավ իր բարեկամի վրա և հրամայեց իր պարտիզանին այդ ոտար, անպետք բույսը քաղել, դեն ածել:

Մացկացավ միքանի շաբաթ: Մի անգամ, յերբ նա պարտիզում մանգալիս տեսավ, վոր պարտիզանն ինչ-վոր կլոր բաներ]ե խոռովիլ կրակում, հարցրեց, թե այդ ինչ ե: Պարտիզանը խոստովանեց, վոր այն բույսի արժատն ե, ինքը պահել ե և հիմա գետնի տակից հանել:

Տանտերը աղ ցանեց վրան, համը տեսավ ու նոր համկացավ. թե այդ բույսի վոր մասը պետք ե ուտել, նա նոր հրավերք սարքեց, ու այս անգամ հյուրերը շատ գոհ մնացին:

Ցորեն և կարտոֆիլ պահելը

Ա.

Ես տարի ցորենն ու կարտոֆիլը լավ բերք տվին: Շատ ցորեն ու կարտոֆիլ հավաքեց Սաքոն, բայց բանը հո հավաքելը չի. բանը լավ ու խնամքով պահելն է:

Իսկ յեթե ցորենը տաքանա ու փշանա .. Վորպեսզի, չփշանա, Սաքոն լավ թի տվեց ցորենը, աղուն արավ, մաքրեց. ապա շտեմարանը լցնելուց հետո, շուտ-շուտ մոտենում եր շտեմարանին, պառկում ցորենի վրա և թեր մինչև ուսը մերկացնելով խրում ցորենի մեջ. յեթե տաքություն եր զգում, կնշանակի ցորենը փշա-

նում եր. ուրեմն նորից հանում եր շտեմարանից ու նորից աղուն անում, չորացնում: Մկներից պաշտպանելու համար նա բազմաթիվ թակարդներ եր սարքել շտեմարանի վրա և ներքնատան բոլոր անկյուններում:

Բ.

Կարտոֆիլը պահելն ավելի դժվար ե: Գլխավորն այն ե, վոր կարտոֆիլը պետք ե չոր յեղանակին հանել ու հավաքել, ապա պետք ե ստվերում լավ չորացնել (արևի տակ չի կարելի), հողերը, կտըրվածները, քիչ մնավածները մաքրել, տեսակների բաժանել:

Սաքոն մի փոքրիկ տակառ չհանգած կիր եր ձեռք բերել: Կիրը շատ լավ չորացնում ե ներքնատունը: Սաքոն ուտելու կարտոֆիլը չոկեց, և կտօրները ներքնատան անկյունները դրեց, կարտոֆիլը դարմանի վրա, չոր գետնին կիտեց. կրի աղդեցության տակ կարտոֆիլը չոր եր մնում ու չեր փշանում:

Իսկ պահելու կարտոֆիլի համար Սաքոն կարտոֆաման ուներ. մի փոքրիկ գետնատուն եր այդ՝ հատակն ու պատերը հողից և միայն առաստաղը փայտից: Լավ չորացնելուց հետո կարտոֆամանի հատակին հաստ շերտով հարդ ցանեց, ապա կարտոֆիլը հողին լցնելիս պատերի մոտ ծղում եր դնում, վոր կարտոֆիլը հողին չառնի: Յերբ գետնահարկը լցվեց, վրայից ել մի շերտ չոր ծղուտ դարսեց և բերանը հողով ծածկեց, շուրջը հողից թմբեր լինեց, վոր, բան ե, յեթե ջուր լինի, կարտոֆիլի վրա չհոսի:

Զմեռվա լնթացքում նա չորս անգամ պիտի նայեր, թե ջուր չկ' մտել արդյոք: Յեթե ջուր չմտնի, նրա կարտոֆիլն անվաս ու մաքուր կմնա:

Մեր բարեկամը

- Տղերք, կարելի՞ յե մեր բարեկամներին սպանել:
- Չի կարելի:
- Այն բարեկամներին, վորոնք մեզ ահազին ոգուտներ են տալիս:
- Վաչ, վոչ, վոչ:
- Իհարկե, վոչ: Բայց մի տեսեք, թե մեր գյուղերում որականի տասնյակներով բարեկամներ են կոտորում, սպանում:
- Այդ բարեկամները մեր անտառների ծառերն են: Մեր հորհրդային հայրենիքն առանց այն ել աղքատ և անտառներով: Վառելիքը քիչ ե, շինարարական փայտը՝ պակաս. բայց տեսեք, թե

մեր գյուղացիք ինչպես անխնա վոչնչացնում են մեր անտառները։ Նրանք չեն հասկանում, իհարկե, բայց պետք ե հասկացնել։ Անտառները կտրելով նվազում են աղբյուրները, պակասում ե շինարարական փայտը, ածուխը, վառելափայտը։ Անտառի ծառերն իրենց արմատներով պահում են լեռան լանջի հողը և չեն թողնում, վոր գարնան հեղեղները այդ հողը լվանան, ցած բերեն։ Այ, որինակ՝ Մարցի անտառները կոռում։ Գյուղացիք անխնա այնքան են կտրատել անտառները, վոր հողը լվացվել քշվել ե ներքե, ու առաջվա խոտավետ լեռների լանջերին այժմ հողի տակի ժայռն են ցից-ցից մնացել։

Անտառը չի կարելի կտրատել։

Նաև անտառում անասուն արածացնել չի կարելի։ Այն այծերն ու խոզերը, վոր արածում են անտառում, ավելի չարժեն, քան ինքն՝ անտառը։ Նրանք փորում են ծառերի արմատները, վոչնչացնում ճյուղերը։

Անտառասպանը մարդասպան ե։

Մեր անտառները գտնվում են կոռում, Դիլիջանում, Զանգեզուրում, Ծաղկաձորում և այլն։

Մենք պետք ե աշխատենք անտառներից դուրս գտնվող տեղերը խոտավետ դարձնել, վոր անասունների կերն առատ լինի, և Գյուղացիք ստիպված չլինեն անասուններն անտառ քշել։

Շառի կյանքը

Շառը շատ ավելի յե ապրում, քան թե մարդը։ Քիչ ե պատահում, վոր մարդը 90 տարուց ավելի ապրի, այնինչ ծառը, նույնիսկ հյուսիսային սառը կլիմայում, ապրում ե համարյա միշտ 200, 300, 400 և ավելի տարիներ։ Յեղել են դեպքեր, վորոնք ցուց են տալիս, թե մեր ծառերի միքանի տեսակները 1,000 տարուց ել ավելի յեն ապրում։ Այսպես՝ կովսովի նահանգում մի կազնի ծառ են կտրել, վոր 750 տարեկան շերտ ե ունեցել. բայց վորովհետև մեջը փտած ե յեղել ու փչակ ե ունեցել, ուստի միջի շերտերը հնարավոր չի յեղել համարել։ Յենթադրում են, վոր այդ ծառը գոնե 1,000 տարեկան պետք ե լինի։ Թե այդ կազնին ինչ հաստություն ե ունեցել, կարելի յե իմաստ նբանից, վոր տերը նրա կոճղից մի տնակ ե շինել, ուր 15 մարդ են տեղավորվել։

Բայց համեմատած ամերիկան 3,000 տարեկան հասակ ունե-

ցող, հսկա ծառերի հետ, այս կազնին ել կարող ե փոքրիկ համարվել։ Այսպես, մի անգամ Հյուսիսային Ամերիկայում մեր յեղենու տեսակի մի ծառ կտրեցին, վորի հաստությունը, արժատի մոտ, տասը մետրից ավելի յեր։ Բանվորների մի ամբողջ ընկերություն վեց շաբաթ շարունակ կտրում եր այդ ահազին ծառը։ Բնի վրա յեղած տարեկան ողակները յերբ հաշվեցին, դուրս լեկավ, վոր այդ ծառը 3,100 տարեկան ե։ Գետնում մնացած կոճղը հարթ ունդեցին (դակուով կոկեցին) ու վրան պար սարքեցին. 14 զույգ մարդ ազատ պարում եյին նրա վրա։

Հողը

Հողը բաղկացած ե յերեք գլխավոր մասից՝ 1) կավից, 2) ավագից և 3) վորևե փտվածքից կամ նույն ե՝ որգանական նյութից, վոր գոյացել ե այլ և այլ բուսական մնացորդների—չորացած խոտերի, արմատների և աղբի փտելուց։ Այդ փտվածքը հողին սև գույն ե տալիս, և վորքան դրանից շատ լինի, այնքան ել հողը ավելի բերքի կլինի, որինակ՝ սևահողը։ Յեթե վորևե հողի 100 մասից 75—90 մասը ավագ ե, ապա այդպիսի հողը կոչվում ե ավազահող, իսկ յեթե 65—75 մասն ե ավազը, կոչվում ե ավազախառն։

Կավային հողն իր մեջ պարունակում ե 50—70 մաս կավ, իսկ 25—30 մաս ավազ։

Կիսակավային կամ, նույն ե, կավախառն հողում կամ ու ավազը հավասար են։

Սելահողի 100 մասից որգանական փտվածքը կազմում ե 15%, իսկ մնացած 75% կավ ու ավազ են։

Վերջապես կա կրային հող, վորի 20 և ավելի մասը կիր ե։ ԱՎԱԶԱՀՈՂԵՐ

Ավազահողերի բերքը սակավ ե լինում, բացի գրանից՝ նրանց մեջ ջուրն ել լավ չի պահպան, ուստի և այստեղ դուրս յեկած բույսերը ևս յերաշտից չորանում ու այրվում են։ Նրանք շատ քիչ ազոտ ունեն, ուստի և շատ տեղեր ավազակույտերում հաճախ ցանում են գայլուկ (լյուպին), վորը նրանց մեջ լավ ե աճում։ Գայլուկի չորանալուց հետո նրան վարում, ավազահողի տակով են անում, ավելացնում են ֆոսֆոր աթթվուտ ունեցող պարարտանյութ և ցանում հացահատիկներ, վորոնք այս ամենից հետո շատ լավ բերք են տալիս։ Գայլուկն ուղից առնում ե հողին ե տալիս ցանքսին

անհրաժեշտ ազոտը՝ Ավազանողերի մշակելը հեշտ եւ ամեն տեսակ գործիքներով. դրա համար նրանք կոչվում են թեթև հողեր:

Այս հողերն առանձնապես տալիս են կարտոֆիլի լավ բերք, յեթե նրանք պարարտացրած են կենդանական աղբով:

ԿԱՎԱՅԻՆ ՅԵՎ ԱՎԱՋԱԽԱՐՆ ԿԱՎԱՀՈՂԵՐ

Սրանց վարը, ընդհակառակը, դժվար եւ, մանավանդ յերաշտի ժամանակ, վորովհետև քարի նման պինդ են լինում, այն ինչ անձրեային որերին դառնում են խմորի պես լվակուն, պահում են իրենց ներսում ջուրը յերկար ժամանակ, շուտ չեն չորանում և կոչվում են ծանր հողեր: Դրանք ավազանողերից ավելի սառն են, նրանց մշակելու համար պետք եւ ունենալ լավ գութան և ծանր փոցիս: Քիչ են աղդվում յերաշտից և առանձնապես հարժար են հաճարի, ցորենի, վարսակի, առվուշի, վուշի և միքանի այլ բույսերի համար:

ՍԵՎԱՀՈՂ

Սևահողերը տալիս են հացի լավ բերք, յեթե անձրևներից կուշտ են, հակառակ պարագայում բերք չի ստացվում, և հողագործն ստիպված եւ միջոցներ ձեռք առնել՝ խոնավություն հավաքել սկանդում և պահպանել այն յերկար ժամանակ նրա խորքում, վորտեղից նա անցնի ցանքսին և զուր տեղը չգործշինանա ու ոդի մեջ ցնդի:

Կավախառն և սև հողերը մշակելիս հողագործի գլխավոր նպատակը պետք եւ լինի, վոր նրանք վարելու ժամանակ ամբողջապես փոխարկվեն մանր կոշտերի այնպես, վոր կոշտը ձեռքն առած և վայր գցած ժամանակ չփոշինա, այլ ցրիվ դա մանր հատիկների, Այսպիսի վիճակում միայն նրանք կարող են լավ բերք տալ: Իսկ յեթե նրանց գութանով և փոցիսով փոշիանալու չափ մանրացնենք, չորային յեղանակին նրանք սաստիկ չորանում են և առաջին իսկ անձրեից պինդ կեղև են կապում, վորից ցանքսը խեղդվում եւ, չի զորանում հարկ յեղած չափով, ուստի և ընդուն ել պակաս եւ լինում:

ՍԵՐԺԻ ՄԱՍԻՆ

Լավ բերք ստանալու համար բավական չե հողը լավ մշակել ու պարարտացնել. անհրաժեշտ ե, վոր սերմն ել լավ և ընտիր լինի: Վնրքան հոգս ու նեղություն են պատճառում ցանքսատիրոջ անպետք խոտերը, վորոնք սերմի հետ խառն ցանքում և բուսնում են արտերում:

Այս պակասությունը հեշտ եւ վերացնել: Բերքն ել կուժեղա-

նա, անպետք խոտերն ել չեն բազմանա, յեթե միայն սերմը լավը լինի և ջոկովի:

Ուրեմն ինչպիսի սերմ պետք եւ ցանենք, վոր լավ բերք ստանանք:

Նախ և առաջ պետք եւ մաքրած սերմ ցանենք. արտում անպետք խոտերի դուրս գալու գլխավոր պատճառներից մեկը սերմի մաքրոր չլինելն ե:

Իսկ անպետք խոտերի մնասը շատ մեծ եւ, վորովհետև նրանք խլում են ցանքսի սնունդը, խոնավությունն ու լույսը, շատ անգամ ել խեղդում են նրան բոլորովին:

Ցանքսի համար պետք եւ վերցնենք հատիկները լիքը սերմ. այս տեսակ սերմից ե, վոր ուժեղ և դիմացկուն բույս և անխար ել բերք և ստացվում:

Բացի այս՝ ցանքսի սերմը պետք եւ ծլուն լինի. վոչ ծլուն սերմը ծի արձակում և, ուրեմն, անտեղի յե հողը գցվում:

Նվազ ծլունություն ունեցող սերմն այնքան թույլ ծիլ և արմատ եւ տալիս, վոր ծիլն անզոր եւ լինում հողից յելնելու և փչանում ե:

Լավ տեսակի սերմ ունենալու համար պետք եւ այն մաքրել և տեսակ-տեսակ անել քամող, ջոկջող և այլ մեքենաներով:

ԿԵՆՂԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

ԽՈԶԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վհրչափ ձեռնտու յե գյուղացնան վաճառել իր հացի ավելցուկը:

5 փութ հացահատիկը կովից առաջ արժեքը 3 ռուբլի. նույն 5 փութ հացահատիկը, խոզի կեր դառնալով՝ տալիս եւ մի փութ խոզի միս և ճարպ, վոր արժեքը ամենաքիչը 6 ռուբլի:

Գերմանացի գյուղացին հենց նրանով եւ հարուստ, վոր հացը վաճառում ե «մսի տոպրակն ածած», այսինքն՝ խոզերի, այդ կենդանի գործարանների՝ միջոցով հացը դարձնում ե միս:

Յեկ, ուրեմն, յերկու անգամ ավելի ձեռնտու յե հացը դարձնել խոզերին կեր, բան թե վաճառքի հանել:

Այդ գեռ բավական չե: Խոզերին մենակ հացահատիկներով չպետք եւ կերակրել: Խոզն ինչ ասես՝ խժողում ե. ամանների լվացուկը, մսի կտորտանք, կլեպներ, հացահատիկների փութան, վորոմ սերմարանք, խակ բանջարաթերեր, այսինքն՝ այն ամենը, ինչ վոչ թե միայն շուկա չի կարելի հանել, այլ նույնիսկ ոգտագործել չի կարելի անտեսության մեջ:

Ուրիշ անասուններին ևս ոգտավետ ե հացով կերակրել բայց ամենից ոգտավետն ե խոզերին կերակրելը:

Սակայն ամեն խոզ ել կերից չի չաղանում: Հասարակ, ցռուկն ու վոտները յերկար խոզը խժուում ե շատ, բայց քիչ ե մսակալում:

Չաղացնելու նպատակով պահեցեք դունչը բութ, կարճ-փոտ խոզերին, մաքրեցեք և լողացրեք նրանց. ցեխից ու կեղտից խոզերը հիվանդանում են ու սատկում:

Մատղաշ խոճկորներին մի տվեք նեխած ու հոտած կեր:

Չմոռանաք, վոր հիվանդացած խոզին բուժելը դժվար ե. մաքրությամբ և խնամքով ե, վոր խոզի հիվանդության առաջը պետք ե առնել:

Բազմացրեք խոզեր.

Խոզը գյուղացու խնայողության քսակն ե:

Անասնաբուժի զրույցներից

Մեր գյուղացին միշտ գանգատ ե անում, վոր նրա կովը ու յեղը լավը չեն, կովը քիչ կաթ ե տալիս, յեղը ուժով չի, մանր են, մորթելիս ել միսը քիչ ե ու ենքան ել համով չի: Ուրիշ բան ե մուսաստանից կամ ուրիշ յերկրներից բերած տավարը:

Եդ պատճառով ել գյուղացին իրա տավարի վրա ծուռ աչքով ե մտիկ անում և եդ տեսակ ել պահում և ուտեցնում:

ՈՒԽԱՍՏԱՆԻ ՏԱՎԱՐԸ ՄԵՐԻՆԻՑ ԼԱՎՆ Ե

Ճիշտ վոր՝ մեր տավարը շատ մանր, անգույն, տեսք չունի, կաթն ել, ասենք թե յեղոտ ե, բայց շատ չի, յեղն ել թույլ ե:

Դե մուսաստանի տավարին տավար կհասնի: Ո՞ւր ե են ջերան տավարի ռանդն ու ոռչտը, նրա վեղրոներով կաթը, նրա 20–25 փութ միսը. բա ուժը, մի գոմեշի ուժ ե. Փուրգոնը լըցրու մինչև գլուխ, ցնպ-ցնպ արա, ինքդ քնի-նա կտանի, տեղ կհացնի:

Մարդ եղպես տավար ունենա, վոր աժենա նրան կերակրելն ու պահելը. եղպես տավարին որը մեկ անգամ ինչպես ե վոր մեկ դաշավի չիփես, մի լավ չմաքրես, ամառն ել շաբաթը մեկ անգամ չլողացնես ու չլվանաս: Չարչարանքը չի կորչիլ, մեկ ժամ աշխատանքի համար մեկ-յերկու բաթման կաթ ավել կտանաս, կամ 20–30 փութ ավելի ապրանք կտանես:

Եսպես ե մտածում մեր գյուղացին. աչքը գցած ուրիշ յերկը-ներին՝ ախ ե քաշում ու կովին ու յեղին դարման ե տալիս: Բայց

սկի չի մտածում, թե են արտասահմանի յեզն ու կովը ինչպես են աշխարհ յեկել, հենց միշտ ել եղպես, լամփն են յեղել, միշտ ել կաթնատու, թե կամաց-կամաց լավանալով եղպես ջելրան են դառել:

ԵՆ ԼԱՎՆ ԵԼ ԱՌԱՋ ՎԱՏ Ե ՅԵՂԵԼ

Բանից դուրս ե դալիս, վոր եդ լավ տեսակի տավարն ել մեկ ժամանակ վատ ե յեղել, բայց կամաց-կամաց լավացել ե, ազնվացել: Ի՞նչն ե պատճառը, եդ ինչ հունարով են կարողացել եդ ոսուներն ու այլազգիներն ազնվացնել իրենց տավարը, վոր հիմա մենք աշքներս չենք կարողանում դրանցից կտրել:—Այ թե ինչ են դրա պատճառները:

ՏԱՎԱՐ ՊԱՀԵԼ ԶԵՆՔ ԻՄԱՆՈՒՄ

Ախր մեր տավարն ինչ ե ուտում, վոր ինչ լինի. Նրա կերածն ե դարման ու դարման: Մեկ ամառն ե, վոր խեղճը միքիչ կշտանում ե, միքիչ շունչ ե քաշում, մազը թափում, մսով լցվում ու կամաց-կամաց սկսում ե կաթն ավելացնել, ուժովանալ:

Մեր գյուղացին բանին եսպես ե մտիկ տալիս. ամառը վերջացավ, կովը ցամաքեց, աշնանացանը վերջացավ—յեղան գործն ել պրծավ՝ դե, տավար ջան, մտիր մութ գոմը. վոչ գործ ես անում, վոչ կաթ տալիս-քեզ շատ ուտեցնելուց ել ինչ ոգուտ. ենքան ըլի, վոր մինչև գաբուն չսատկես, գարնանը խոտ կբուսնի՝ կարածես:

Բայց թե վոր լավ մտածենք, կտեսնենք, վոր եդ շատ սխալ բան ե: Ամբողջ աշունն ու ձմեռը տավարը դարման ուտեցնով բոլորովին թուլանում ե, վոտքի վրա հազիվ ե կանգնում, գարնանն ել հենց առաջին խոտը յերեալու պես հանդն ե դուրս գալիս արածնու: Դե ախր են գարնան խոտը ինչ ուժ ունի, —խեղճ տավարը ման ե գալիս, գիշերը քոռ ու փոշման յետ գալիս, ելի գալիս, ման ե գալիս, գիշերը քոռ ու փոշման յետ գալիս, ելի գալիս կաթնիկը յախից բռնում և եղպես մինչև ամառը: Ամառվա կերամանի յախից բռնում և եղպես մինչև ամառը: Ամբովա կերամանին անջախ-անջախ միքիչ միս ե հավաքում, մազը թափում, տեսք ընդունում ու շնորհակալությամբ կաթ ավելացնում:

Բայց դե տես, վոր մինչև եդ ել խոտի ուժն ե կորչում. ել են խոտը չի, են ուժը չունի, ծաղիկը թափվում ե, սերմ ե բռնում, ինքը կոշտանում ե, համը-հոտը կորչում, հյութն ու նյութը պատառում: Տավարը մի կերպ գլուխ ե հանում մինչև աշունք, ելի դարմանին կպչում:

ՈՒՐԻՇ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՎՈՇ ԵՆ ՊԱՀՈՒՄ

Դանիա անունով մեկ յերկիր կա. եդ գանիացիք ամբողջ աշխարքում հայտնի յեն իրանց տավար պահելով. նրանք մեր արո-

տոատեղերը չունեն, վոր կարողանան լավ, կուշտ արածացնել իրանց տավարը, եղ պատճառով ել ամեն տեսակ փորձեր են արել և վերջը հնարը դաել:

Նրանք հաշիվ են արել վոր յեթե տավարը ձմեռը վատ պահվեց, կիսաբաղցած, կեղտոտ, մութ գոմերում, նա ենքան ե թուլանում, վոր մինչև ամառվա կեսը կաթ քիչ ե տալիս, միայն ամառվա կեսից հետո կաթը սկսում ե ավելացնել. իսկ յեթե ամբողջ ձմեռը կովը լավ ե կերակրվել, չի լղարել, չի թուլացել, նա հենց վոր արոտը դուրս յեկավ, իսկույն ուժը կաթին ե տալիս:

Յեթե հաշվի գցելու լինենք նրա ձմեռվա կերածն ու ամառվա տված կաթի գինը—դուրս ե գալիս, վոր ուտեցրած կովը կը կնապատիկ, յեռապատիկ հանում ե իր ծախսը:

Ես դեռ մեկ կողմն ե. մի ուրիշ կողմն են ե, վոր մեր յերկրի կովը գնալով լավանալու տեղ՝ ավելի ու ավելի վատանում ե, իսկ դանիացիների պահած կովը քանի գնում ենքան լավանում ու կաթնոտանում ե. նրա հորթերն ել ավելի լավը են դուրս գալիս, ավելի կաթոտ կովեր և ավելի ուժով յեզներ դառնում:

Եղանական պահելով՝ ուրիշ ազգեր կամաց կամաց իրանց տավարը լավացրել են, ազնվացրել—եղանակ են ստացվել Շվեյցարիայի, Հոլանդիայի, Ռուսաստանի և ուրիշ յերկրների մեծ արդյունք տվող, լավ կովերն ու յեզները:

Յեթե մենք ել եղանակ վարվենք, մենք ել սիրով ու խելքով պահենք ու կերակրենք, մեր տավարն ել տասնհինգ-քսան տարվա մեջ կլավանա ու մեծ արդյունք կտա:

Մեր ՀՈՂՆ ՈՒ ԶՈՒՐԸ ԶԵՆ ՎԵՐՑՆՈՒՄ

Շատ անգամ զանազան յերկրներում, զանազան ազգերի մեջ մարդիկ մտածել են եսպես. քանց թե յերկար տարիներ չարչարդել-տանջիկ և տեղական տավարը կամաց-կամաց լավացնել, ավել լավ չի՝ վերցնել են լավ տեսակի ցուկերից (բուղաներից) միքանի հատ, խառնել նախիրին և 3-4 տարուց հետո կարգին տավար ստանալ. բայց թե բանից դուրս ե յեկել, վոր եղ ճիշտ չի, եղանակով տավարը չես ազնվացնի:

Ինչքան վոր լավ տավար բերելու լինես, յեթե նրանից ստացած հորթերին մեր հորթերի պես պահես ու կերակրես, նա միքանի տարուց հետո ելի են բերարա տավարն ե դառնալու. եղ մեկ, մեկ ել են, վոր դրսից բերած տավարը մեր յերկրին սովոր չի, մեր ողը նրան չի գալիս, մեր քարբարոտ սար ու ձորերում նրա կձղակները (պձեղները) շուտով ճաքճըում. կոտրտվում են և ամենապարուր—մեր յերկրի հիվանդություններին սկի չի դիմա-

նում. Վայ թե տավարի մեջ չումա (չոռ) ընկավ կամ թե ջերմով հիվանդացավ—ամբողջ տավարը կոտորվում, վչանում ե:

Հենց եղ ե պատճառը, վոր ավելի լավ ե՝ մեր տեղական տավարը լավացնենք, նրա վրա չարչարվենք, նրան լավ պահենք, ժամանակին ենպես տավար ստանանք, վոր ուրիշ յերկրներից մեզ մոտ գան լավ տեսակի տավար առնելու համար:

ՄԵՆՔ ԿՈՐՈՂ ԵՆՔ ԼԱՎԱՅՆԵԼ ՄԵՐ ՏԱՎԱՐԸ

Յեթե մենք մեր ուշքը դարձնենք մեր յերկրի տավարի վրա, կտեսնենք, վոր մինչև անզամ մեր հայաստանի տավարն ել ամեն տեղ մեկ տեսակի չի—մեկ տեղ լավ ե, մեկ տեղ վատ, մեկ տեղ մսոտ, տեղ-տեղ ել բոլորովին բերարա: Որինակի համար՝ Լենինականի տավարը, են Աղբաբու կողմինը, լավը ե, գույնը կարմիր, աշքերը սև, կարծես ակնոց լինի հագած, վոտները սև, վորպես թե ջորաբով ըլի, ինքն ել մեծ, խոշոր, պողերը յերկար ու բարակ, պողը յերկար ու փնջով, մանգալիս ասես նորահարս լինի: Արոտից տուն գալիս կարծես թե տեղական տավար չի, այլ ազնվացրած. կուրծը ենպես լիքը, վոր սկի վոտը չի կարողանում փոխի:

Դրա նման տավար կա մեկ ել Ղազախում (Իջեանի գավառում): Ո՞վ չի լսել Ղազախի տավարի մասին. եղ տավարի կաթին հո կաթ չի համնի. կթողը բեզարում ե կթելուց, իսկ կաթը գալիս ե հա գալիս:

Հիմի, յեթե եղ տավարը լավ պահվեր, լավ կերակրվեր, ի՞նչ գուրու կգար դրանից. մեկ մտածեք:

Մեկ ել լավ տավար կա նոր-Բայազետի շրջանում, բայց թե ենտեղի տավարը ենքան կաթոտ չի, ինչքան մսոտ. եղ ել լավ ե. եղ ել հարկավոր ե, ոգտավետ ե, սրանց ել արժի պահել, ավելի լավացնել:

Ուրեմն, մենք ել աղքատ չենք տավարի կողմից, բայց նշանակություն չենք տալիս մեր հարստությանը:

Ես բոլոր ասածից յերեռում ե, վոր մենք պետք ե բերենք լավ ցուկեր (բուղաներ): Եղ բուղաները պետք ե Ղազախից, Աղբաբուց կամ նոր-Բայազետից բերել: Տավարը սկսենք կարգին պահել ու կերակրել: Են ժամանակ կառավարությունն ել վոր տեսնի, թե մենք սիրով ենք կպել մեր դործին, ինքն ել մեր կողմը կպահի, ինքը ցուկեր կառնի ու գյուղերին կրածանի, գիտուն մարդիկ կուզարկի գյուղերը, վոր ցույց տան, թե ինչպես պետք ե պահել կերակրել տավարը, և եղանակով մեր զրությունը քանի գնա՞ ավելի լլավանա, սովոր ու մահն ել կվերանան մեր ես չարչարված, տանջված յերկրիցը:

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՌԵՍՈւթյունները

(Գյուղուսուցի զրոյցներից՝

1. ԱՆԱՍԻԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անցել ես դու, ընկեր, Արագածի փեշերով, Սևանս լճի շուրջը
պսակ կապած լեռներով, Աղմաղանի բարձունքներով, Վայոց-Զորի,
Զանգեզուրի լեռնադաշտերով կամ են Լոռու-Փամբակի հպարտու-
թյուն Լալվարի ու Դվալի կատարներով։ Անցել ես ու տեսել նրանց
աղբյուրների, առվակների, գետակների գլխին ու ափերին կամ
բերատեղերում գլուխ գլխի տված՝ մակաղած և կամ ստորոտ յե-
լած, նրանց են խոտոտ ու ծաղկոտ լանջերով ու ստորոտներով
արոտի յելած ու փռված մեր վոչչարն ու այծը, գառն ու ուկը,
կոմի ու յեղը, գոմեշը, եշն ու ջորին, ձիերը, տեսել ես—դրանք
մեր անասունների հոտերն ու նախիրները, յերամակներն են՝ մեր
անասնապահությունը—մեր ժողովրդական տնտեսությունը:

2. ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

իսկ դրանց են սարի պաղ-պաղ, թանձր կաթն ու մածունը,
ծալ-ծալ սերը, կոլոլ-կոլոլ կարագը վհնց։ Զես տեսել, անուշ չեմ
արել։ Զուր։

Հապա Դարալազյազի են ճրագի պես վառվող յնւղը. մի փլավարա, մի քաշովի զցիր. նրա տեղով մեկ համ ու հոտ՝ են յեղածոր, ինկակոշտուկ հորած պանիրը, մի տաք-տաք լավաշով կոլոլած ատամիդ դիբ ու ձմոի, դեռ չեմ ասում Ղազախ-Դիլիջանի մոթալլ կամ թե Լոռու են հոլանդականը, վորի ձենը մոսկովյաներիցն ե գալիս: Մի կեր, ընկեր, մի անուշ արա, վոր ասեմ բերանիդ համն ու հոտը գիտես: Ախր, եղ բոլոր բարիքը մեր լեռնաստանի խոտից ու ծաղկից, ողից ու արեկից, քչքչան գետաղբյուրներից բղիսած կաթն ե տալիս,—մեր կաթնամթերքներն են դրանք, մեր կաթնագործությունը, մեր ժողովրդական տնտեսությունը:

3. ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Բաս իսկի եղ սարի գյուղերում հորթիրից, մորթիրից, նաևուց
ու տատից չունես, վոր մի որ, բարի բարելիսին, վոտքդ շեմքին
դրած ու չդրած՝ ճտովդ ընկնի, ես յերեսիդ մը՛ոչ, են յերեսիդ
մը՛ոչ, այ դու բարով յեկար, հազար բարով յեկար, ջանս քեզ մա-
տաղ, ցավդ առնեմ, յես ի՞նչ գիտեմ, ել ինչ ինչ մեղրալեզու բա-
ներ, ու, վերջն ել՝ «Աղջի, Շնուշան, ի՞նչ ես դքվել կանգնել վե-
տի պես, տո բեր ե, են գործածդ ազիդ գորդ ու կարպետդ դներս

բեր, ել վ՞ր որվա համար ես պահել, տնաշնչի աղջիկ, իսի՞ վոր,
դրանցից ել ավելի զլուխ հյուրի աչք ունիս...»: Եղ ասելն ե: Մեկ
ել տեսար Շուշանը կրակ կտրած ծալքն իրար տվավ, բռպեյական
գուրս բերեց ու վոտներիդ տակովն արավ կարպետ, ինչ կարպետ,
գորգ, մերդ մեռնի, ինչ գորգ: Կարծես գարնան են վառվուն
արեին Ալագյաղի կամ Լալվարի ծաղկափթիթ կրծքից հենց ես ըո-
պեյիս պոկ տվին, վոտներիդ տակովն արին. ծաղիկ ծաղիկ հետ
ե խոսում, խոտ խոտի հետ ճիտ անում, գույն գույնի հետ խա-
զում — շված՝ խելքամաղ ես ինում:

Վայ ե, վոր մի յերկու քաղցր խոսք ասացիր, գովք արի՛,
մեկ ել տեսար, դուռ ու դրկից, հարևան հարս ու աղջկի վրա պըը-
ծան:—Մեկն իր գորգն ե բերում, մյուսն՝ իր կարպետը, նա իր
նախշուն գուլպան ե դեմ անում, են մյուսները իրենց շախ ու շարֆը,
ջվաճն ու խուրջինը, յես ինչ գիտեմ, հազար ու մի՛ նուրբ գույն-
գգույն, անտիկա բրդե գործվածքներ, վոր ինչ ե, քեզնից գովքի
մի խոսք լսեն, սրտները ուրախանա: Եղ ել, ընկեր, մեր գործված-
քեղենները, մեր գորգագործությունը, վոր դրսի աշխարհում անուն
ունեն: Դրանք ել մեր ժողովրդական անտեսությունն են:

4. ՀԱՅԱՑԱՆՔԱՆ

Հապալ ի՞նչ կասես դաշտ ու հովիտ, լանջ ու ձոր կալած՝ մեր
հացացանքսի ծփուն, գոսկեզոծ արտերին։ Յեղվարդ-Ալափարսի, Բջնի-
Սոլակի են գալզալոսը, Կոտայքի կամչատկան ու սպիտակահատը,
Շիրակի կարմրահատը, Ղազախ-Դիլիջանի խոփուկն ու վեցաշար գա-
րին, Ծաղկաձորի հաճարը, Նոր-Բայազետի և Արարանի սորուկն ու
կտավիատը, մեր առվույն ու կորնգանը և այլն և այլն։ Դրանք ել
մեր դաշտային տնտեսությունն են, մեր հողագործությունը՝ ելի
մեր ժողովրդական տնտեսությունը։

Իսկ Արարատյան դաշտի բուսական աշխարհը տեսել ես, ընկերք Զես տեսել՝ շրջիք ու տես:—Այս դաշտն ե մայրը մեր բուսական հարսւստ տնտեսությունների, Նրանց հաճողակի աշխարհանք:

Են հսկա, աղեոր Մասիսի, են լայնանիստ վեհատեսիլ քառա-
գագաթ Արագածի, են կուրծքը պատուած Արայի լեռան գիրկը
մտած այս դաշտը Կոտայքի սարահարթն ել Աղմաղանի բարձունք-
ներով թիկունքն առած, Արաքսն ու իր ձախ վտակներ՝ Սև Զուրը,
Քասախը, Հրազդանը, Ազատ գետը իրենց բազմաթիվ ջրանցքներով
ու առուներով խտիտն առած, վոռոզգվելով ու ցողվելով՝ այս դաշտը
մի տես, ինչպիսի բուսական հարուստ մշակույթների հանդես բաց-
կանի առջեգ:



5. ԲԱՆՉԱՐԱԲՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Մի տես, վոնց գարնան վոչխար ու այծի, գառն ու ուլի նման մակաղել, մղղել՝ թափվել են ամբողջ դաշտով մեկ՝ են սաթի պես դեղին, մեղրածոր դութման, սեխն ու ձմերուկը, վարունգն ու դգումը, կաղամբը, մարջան պամիզորը, սև սաթի բագիմջանը, կանաչ-կարմիր տաքտեղը, բողկն ու բազուկը, պազարը, բամբան ու լորին, վոսպն ու սիսեռը... ել ինչ համեմունք, բանջարաթերեր ու բանջարներ ասես, վոր չգտնես: Այս բոլորը, բոլորը, ընկեր, մեր բանջարաբուծության բերքերն են—դարձյալ մեր ժողովրդական անտեսությունը:

6. ԱՅԴԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հապա մեկ են ծառապտղին, այգեկութին դուրս արի Յերևանի պարտեզներն ու այգիները, Քանաքեռ, Նորք, Ավան. մի անցիք եղմիածին, Աշտարակ, Ռշական, վոտքդ Դվին Արտաշարի կողմերը զիր:

Մի տես եղ տեղերի թթին ու կեռասը, բալին, են ծմակ կապած ծիրանիքը՝ թթուշ-թթուշ ժպատուն շալլախը, նշաճիրանը, մեղրածոր աղջանաբաթն ու խոսրով-շահին, մի թափահարի, խշալեն վեր բեր ու անուշ արա, ել չեմ ասում տանձն ու խնձորը, սալորն ու դամբուկը, թզին ու նոնին, տիկին ու ընկուզը, նշին ու փշտին, սերկիին ու զեղձին: Եղ զեղձին, զեղձին, զրա են համն ու հոտը, գույնը. դեռ հուսլից-հոսուշ բիթդ ու բիմքդ խտիտ են գալիս, աշքդ հորանց գնում:

Կոնսերվի անունն ել խոմ վողջ կովկասում, Ռուսաստանում հարցըրու:

Հապա խաղնղը, խաղնղը: Մի մտիր մեր եղ այգիները: Են արշալուսին կամ վերջալուսին հեռվից-հեռու մի մտիկ տուր, մի աշք ածիր: Կարծես այգիներ չլինեն առաջդ փոված, այլ՝ փարթած, վառվուն կանաչի մի-մի ծփուն լճակներ, չորս բոլորից ել ծառերը պսակ կապած կարոտով, կռացել, կարծես ցողիկը, փարվել են ուղում:

Իսկ են վազերը՝ յերամ կապած կարապների պես, թառ տված, քրքշել, փոփել են թմբերի կատարին շարեշար, կարծես լվացվելու, լողալու լինեն յեկած:

Իրենց են ճտած խուտուտիկ-մուտուտիկ վողկույզներն ել՝ վորը տերեների թափուտի մեջն ե մտել պահվել, վորն ել ստահակորեն թուած վազի կատարին թթշած կամ ճղներից ու վոստերից ճոճ ընկած, ես-են տերեկի տակից բաց-խփիկ ճիկ-վիկ ե անում, և վոնց մի մի բյուրեղ ու գոհար՝ հազար ու մի գույներով շողում, շողու-

ղում... կանչում են, հազար ու մի նազանքով որոր-շորոր գալիս... խելքամաղ անում:

Եստեղ բերնի համ խարջուն, եստեղ՝ աչքի ակն ու գոհար ասկյարին ու չամշին, միքիչ հեռու՝ կախանի զարդ ալվանը, շերե-շերին, իծապտուկը, մաղալին... կարող ես բոլորը թվեր չով ու զովի, արև ստվերի, համ ու բուրմունքի, գույների, հրճվանքի ու հմայքի մի աննման աշխարհ: Տեսնել ե պետք, բարեկամ, վայելել ե պետք:

7. ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Իսկ են գոշանքը, սուճուխը, են ալանին:

Բաս մեր գինիքը, մեր կոնյակը, մեր ողին-են ջեղին, ջեղին, մեր սպիրտը: Գիտես, ինչ անունի տեր են. վողջ Ռուսաստանն ե հոլովում դրանց անունը, և. Միությունը, դեռ արտասահմանի շատ տեղերն ել գլխովը:

Ախր, գիտես, ինչ զօրություն ունեն: Իսկի մի փորձել ես, իսկի մի տղկվել ես «զորս զու պատվիրեցեր»...: Գիտես՝ ինչ արյուն են հուզում, ինչ կրակ են վառում ներսումդ:

Լեզու չունես՝ խմեցիր, բլրու դարձար. բազաձայն ես, մի յերկու շակեցիր, արդեն ձայնավոր ես...

Մի տեսնելիք դրանց ջրովս ընկած մեր վանեցի մարդ ու կնոջ՝ կառուց կացի տված իրար սիրաշահելիս.—«Քյա խորոտիկ, քյա նազանիկ, այու վի՞րն ես... աշխարհ գիտի, ալամ գիտի, այու իմն ես»,—եսպես՝ մարդը կնկան: «Քյա խորոտիկ, քյա քյաքուլիկ, այու վի՞րն ես... ալամ գիտի, աշխարհ գիտի, այու իմն ես...»—եսպես՝ կինը մարդուն:

Մենակ դմ յե վոր: Յերկու վոաք ունես՝ մի յերկու «թարեցիր», վոնց վոր տասը վոտք ծախ առած լինես. ինչ դար, ինչ փոս, ինչ սար, ինչ քոլ-բոլորը հարթ՝ հավասար, վոնց վոր հափութիդ:

Յերկու աշք ունես, մի յերկու կուլ տվիր, վոնց վոր աշքիդ ճրադ կապես-թեկուգ մութ խավարի մեջ: Մի խոսքով: Ախր, ընկեր, մեր խմիչքների վմբ մեկ զորությունից խոսես. հազար ու մի նազ ու նամաթ ունեն, հազար ու մի սազ ու սիմ:

Բայց մի բանից զգուշանալու յե, ընկեր:—Վայ մե, վայ մե, թե չափն ու սահմանն անցար-եսոր ես մեռել, թե սրանից մի տասն որ առաջ: Եղակես են մեր խմիչքները. շափն իմացար—իմաստության ջուր, չափը կորցրիր—գժի տոպրակ:

Արարատն ե պտկել ես դաշտի գլխին—մեր սարերի գլուխն ու պսակն ե նա: «Արարատ» գործարանն ե պտկել ես դաշտի

սրտին—մեր բոլոր խմիչքները իր թնի տակ ծվարած՝ մեր գինե-
գործությունը մեր ժողովրդական տնտեսությունների գլուխն ու
պսակն և դարձրել:

8. ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հապա աշնանակեմին, իսկի շի պատահել քեզ, ընկեր, վոր
վոտքդ եղ դաշտով ընկնի, ու նրա բամբակի հանդերը առաջդ
յելնեն. բամբակենու թփերը կարծես նորահաս գարնան ծաղկա-
գարդի յելած, ձյունի պես փայլուն բմբուլիկ-թմբուլիկ բաց-փրթուկ
կնգուղները սիրազորով թխսերի նման, իրենց թեերին ու կատար-
ներին առած՝ կողք-կողքի թառ տվել նատել են արտերի յերկա-
րությամբ մեկ. իսկ յերիտասարդ ու պատանի, հարսն ու աղջիկ,
կին ու մարդ խումբ-խումբ մեջները թափված հարավի արեի տակ,
խինդ ու ծիծաղն յերեսներին, կարծես սեյրի դուրս լեկած լինեն:

Մի կողմից քաղում-փնջում են բացված կնգուղներից բամ-
բակը, մյուս կողմից ձեն-ձենի տված, «ջիգարս դադ ես արել,
սարի ջեյրան, ոյ, ոյ, սարի մարալ, ոյ, ոյ...» յերգում, սեր կա-
պում...

Դա մեր Հայաստանի են գովական բամբակն ե, վորին պլշած
աչքերով են հսկու Ռուսաստանի քո բանվոր յեղբայրը կարոտով
սպասում ե. աջ ձեռքով դու բամբակդ մեկնեցիր նրան, ձախ
ձեռքով դու նրանից քո հացդ ու հագուստդ ես ստանում:

Դա յել մեր բամբակն ե, մեր բամբակագործությունը՝ դարձյալ
մեր ժողովրդական տնտեսությունը: Գնահատիր այդ բանը, ընկեր,
հեղափոխական մեծ ժողովրդի զավակի հետ քո աշխատանքի կապի
ամենաուժեղ ողակներից մեկն և դա:

9. ՄԵՂՎԱԲՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ

Իսաս յես վճնց կարող եմ, ընկեր, լուսթյան տալ մեր մեղուն
ու մեղը: Մեր են արծաթի, աչքի արցունքի պես ցոլուն ծոր
մեղքն ասեմ, թե լուսաթաթախ խորիսխները, վոր մի մտքովդ բե-
րիր թե չե, ջուրը բերանովդ վազ ե անում, պոռշներդ լպստին
տալիս, վոնց վոր, դրուստ, բերանդ մեղը առած լինես:

Տեսնողներն ել մտածելիս լինեն, թե ես տնաշենը ինչ անուշ
բան լինի ուտելիս, վոր լեզուն պոռշներով ջաղաց ե անում: Բայց
դե, ինչ մեղը, ինչ բան: Հենց ենպես:

Ասենք թե, խեղճ դու, մեղըի են համն ու հոտը, տեսքը դու
ինչ կարող ես իմանալ: Եղ բանը դարալազյազուն ե տված, սա-
նավանդ են լոնդի լոռեցուն ու փամբակեցուն, անլվա դաղախե-
ցուն...

Մի տես, վոնց են մթնշաղին, դեռ հլա ծեզը չտված, անլվա,
անհաց, մեղվանոցի թուշին պուպուզի արած, մեղրի խորիսիը
հափոել՝ քլոլում ե, վոնց ե քլոլում, կարծես սեպտեմբերի կիսին
խարջու վազի վրա պըծած յերեանցի լինի կամ թե չե դարաբաղ-
ցի՝ յերկար ժամանակ թափանով խրոված չկերած, զկեռով ելած:

Բանից անգետ ու անտեղյակ մոտենում ես ու՝ «Բարի լիս,
Գեղամ, ինչ կա ես մթան, եղ ինչ խշոց ե, արջը խոս չի
տվել տղու»...: Տեսար ձեռքը ոդի մեջ «չե» թափահարեց ու՝ «Աս,
ո, սո, սո, վելի... ասի՝ մթիքա նհար Պնեմ»... քլոլելով պատաս-
խանում ե քեզ: Իրար վրա չարացած ժամանակն ել՝ «Այ, մեղրի
շանեն առա ու զլխովդ յեկա, ձենդ»..., կարծես գետնին վեր զցած
անարժեք ցախի մի կտոր լինի:

Ասենք թե մեղադրել ել չի կարելի: Դրանց աշխարհը մեղվի
ու մեղրի աշխարհ ե: Մեկ գարնան են ձվածեղ ժամանակ մի
վոտքդ դրանց աշխարհով պետք ե ընկնի, վոր տեսնես, թե ինչ-
պես ես սարի լանջին, են ծմակի խորքում ես ու են ձորի մեջ, աղըրի
գլխին, առվի կամ գետի ափին կամ թե հենց գուանն ու պարտեզ-
ներում մեղվի փեթակները վոչխարի հոտի պես կողք-կողքի մա-
կաղել, նստոտել են ու աչքիդ կարմրին, կանաչին, ճերմակին
տալիս:

Մեղուն սար ու ձոր, դաշտ ու արտ, թփուտ ու ծառաստան
առել բռնել ե. ես ծաղկին տղգ... են խոտին վզզ, ես ու են թփին
ու ծառին կիտված, յեռուզեռի մեջ, դըն, դըն, դըն, դըն,
հավաքում հա հավաքում, կրում հա կրում ե: Դե, ինչ ասել կուզի,
վոր ես մեղուն ու իր մեղըն ել դարձյալ մեր ժողովրդական
տնտեսությունն ե:

Խի վոր: Մենակ դրանք են մեր ժողովրդական տնտեսու-
թյունը, մեկն ե, յերկմւսը, յերեջը, վոր ասեմ պրծնի: Բաս
ուր գնան մեր շերամապահությունը, մեր կաշվեգործությունը, մեր
հանքային հարստությունները՝ մեր շափանի ու Ալլահվերդու պղնձի
հանքերը իրենց արծաթով ու վոսկով, մեր անմշակ աղասանքերը,
ծծմբահանքերը, պեմզան և ալլն:

Յեկ այլն եմ ասում, վորովիետե շատերը դուրս մնացին այս շա-
րանից, իսկ թե քանիսը դեռ նոր կարող են ստեղծվել, այդ մասին
ել չեմ խոսում:

Հին ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ՆՊԱՏԱԿԸ

Սակայն այս շարանն ել բավական ե ձեզ, բանվոր և գյուղա-
ցի ընկերներ, վոր դուք տեսներ, թե նախկին տեր ու տնորեն-

ների շնորհիվ մեր այժմ կիսավեր ու փոքրիկ հայրենիքը, մեր կիսաբնաջինց, բզկտված ժողովուրդը անտեսական ինչպիսի հնարավորությունների առաջ են կանգնած:

Դուք եք այժմ այս յերկրի ու այս ժողովրդի տեր ու անուրենը: Ձեր ձեռքին ե նրա պատմական բախտի ղեկը, դուք եք նրա նոր կյանքի կերտողը—և բոլոր աշքերը հառած՝ ձեզ են սպասում: Մեկ՝ մուրճը ձեռքին, գործարանի շեմքին, մյուսը՝ մանգաղը ձեռքին, հողի վրա կանգնած: Յերկու սպասելիք ունի մեր յերկիրը ձեզնից.—

Համաշխարհային և քաղաքացիական պատերազմները մեր անտեսություններից շատերը կործանեցին, շատերին ել ծանր վերքեր ու խոցեր հասցըն:

Դուք եք, վոր պետք ե վերականգնեք նրանց, բուժեք հասցրած վերքերն ու խոցերը: Այս նախ:

Յերկրորդ՝ նախկին տերերը այդ անտեսությունները տանում ելին թեկուզ ձեր կոշտած ձեռքերով ու կորացած մեջքերով, սակայն վոչ ձեզ համար, այլ իրենց՝ անհատների ոգտին—Բարսեղի, Կիրակոսի, Մարկոսի... յերջանկության համար: Տանում եյին, հին պապինական հասկացողություններով ու փորձով, հին գործիքներով ու մեթոդներով, սև՝ ձեռքի աշխատանքով:

ՆՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Այլ խնդիր ե դրված մեր առաջ:

Դուք պետք ե թոթափեք ձեզնից հնության փոշին: Տնտեսության, աշխատանքի կազմակերպության մեջ, գյուղացի և բանվոր ընկերներ, դուք պետք ե վորոնեք և հետապնդեք վոչ անհատական, այլ կոլեկտիվ շահ ու նպատակ—մեկը շատերի, ամենքի համար, շատերն, ամենքը մեկի համար. պետք ե ձուլվեք աշխատանքի կոլեկտիվ միջացներով:

Միամնական նպատակ, միասնական մեթոդներ և աշխատանք, Ձեզ, ձեր սև, ձեռքի աշխատանքին պետք ե փոխարինեն մերենաները, և ձեզ անհրաժեշտ ե զինվել ժամանակակից գիտության և տեխնիկայի փորձով ու մեթոդներով:

Բայց գիտության ու տեխնիկայի բարիքների տեր լինելու համար ձեղ ուսում ե հարկավոր, իսկ ուսումն համար նախադառնը պրագիտությունն ե, վորից դուք զուրկ եք: Գրադիտություն և ապա ուսում, գյուղացի և բանվոր ընկերներ,—ահա ձեր առաջն անելիքը, վորով դուք կվերականգնեք ու կծաղկացնեք մեր յերկրի անտեսությունը:

ՅԵՐԵՔ ՆԱԽԱԿ

1920 թիվն եր: Քաղաքացիական կովի ալիքները տարածվել ելին յերկրի բոլոր ծայրերը: Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակը կատաղի կովի եր մղում սպիտակ գվարդիականների դեմ: Հեղափոխական բանվորությունն ու գյուղացիությունը մի կողմից, հակահեղափոխական բուրժուազիան ու սև հարյուրակները մյուս կողմից վճռական և վերջնական պայքարի եյին յելել: Լինել-չլինելու հարցն եր վորոշվում յերկու կողմի համար ել:

Ողեստա քաղաքն ել սոսկումի և տաղնապի որեր եր ապրում: Նա անցնում եր ձեռքից ձեռք: Փոքրաթիվ հեղափոխական մարտիկներն առժամանակ ստիպված են լինում թողնել քաղաքը և նահանջել: Սպիտակ գվարդիականները մտնում են քաղաք: Նրանց հաջողվում ե ձերբակալել տասնյոթ հեղափոխական բանվոր և գյուղացի և յերեք կին:

Զերբակալվածներին սպասում եր բանտի մութ նկուղը: Տանջանք, ծաղը ու ծանակ, ծեծ ու մահվան սպառնալիք թափում են ագեն որ նրանց գլխին: Վերջապես կարդում են նրանց դատավճիռը: Մահվան դատապարտվածների մեջ են նաև յերեք հերոսուհիները: Հեղափոխական աղջիկները հանգիստ են և անվրդով: Նրանք հպարտիրենց կատարած վեհ գործով՝ պատրաստվում են հերոսաբար դիմավորելու իրենց դատավճիռը: Յեվ ահա բանտի նկուղի աղատ լուսի իրենց վերջին գրավոր հրաժեշտն են ուղղում ծնողներին և ընկերներին:

ա. ԸՆԿ. ԻԴԱՅԻ ՆԱՄԱԿԸ

Սիրելի ծնողներ,

Քսանչորս ժամից հետո ինձ կախելու յեն: Հեռանում եմ կյանքից կիտակցությամբ, վոր կատարել եմ պարտքս հեղափոխության առաջ: Զկարողացա շատ բան անել, բայց և այսպես խորը համոզված եմ, վոր «17 մարդու» գործն ավելի մեծ նշանակություն ունի հեղափոխության համար, քան նրանցից իննի մահը:

Սիրելի քույրիկ, մի ժամանակ իմ մասին, յեղիք իսկական հեղափոխական, հանգստացրու մայրիկին: Կտակում եմ քո փոքրիկին կտարել հեղափոխական ասպարիզում այս, ինչ վոր յես չկարողացա անել: Շատ աշխատ եմ, զարմանալի հանգիստ. վոչ միայն յես, այլև իմ բախտակիցները: Յերգում ենք, զրույց անում քաղաքական խնդիրների մասին: Յերկու շաբաթվա բանտարկությունից հետո հանկարծ ինձ աղատ դգացի: Յես թեկ քսան տարեկան եմ, բայց

կարճ ժամանակամիջոցում շատ ապրեցի: Այժմ իմ միակ ցանկությունն ե, վոր դուք վերաբերվեք դեպի իմ մահն այսպես, ինչպես յես եմ վերաբերվում—թեթև և զիտակցաբար:

Մնաք բարով, կեցցե կոմմունիստական հեղափոխությունը:

Իղա Կրասնոշչոկինա

բ. Ընկ. ԴՈՒԱՅԻ ՆԱՄԱԿԸ

Պանծալի ընկերներ,

Ես մեռնում եմ ազնիվ կերպով, ինչպես ապրեցի կարձատեկյանքիս ընթացքում: Ութ որից նետո կլրանա քսանյերկու տարիս, իսկ այս յերեկո ինձ գնդակահարելու յեն: Ես չեմ ցավում իմ կարուսաը: Ցավում եմ միայն, վոր քիչ բան եմ արել հեղափոխության համար: Միայն այժմ են ինձ զիտակցական հեղափոխական համարում և կուսակցական աշխատավոր: Դրա համար ել չեմ ցավում այսպիսի վախճանի համար: Զե՞ վոր յես մեռնում եմ իրեւ ազնիվ կոմմունիստ:

Բոլոր դատապարտվածներս ել շատ վայելուչ և աշխուժ ենք պահում մեզ: Այսոր վերջին անգամ լրացիք կարդացինք. մեր գործը շատ հաջող ե: Շուտով, շուտով ամբողջ Ուկրայնան ազատ կը շնչի և կսկսի նոր, ստեղծագործական աշխատանք: Ցավում եմ, վոր չեմ մասնակցելու այդ աշխատանքին: Համբույրներ իմ ամենահին ընկերոջը—մայրիկիս:

Մնաք բարով: Կեցցե կոմմունիզմը:

Դորա Լյուբարտկայա

գ. Ընկեր ՊՈԼՅԱՅԻ ՆԱՄԱԿԸ

Սիրելի ընկերներ,

Կյանք ենք ունենալու միայն քսանչորս ժամ, բայց չենք ցավում և հոգով չենք ընկալում: Մեռնում ենք լի զիտակցությամբ, թե այն արդար գործը, վորի համար մենք զոհվում ենք, շուտով հաղթանակելու յե: Լիահույս ենք, վոր մեր մահն ապարդյուն չի անցնի, բանվորությունը կտեսնի, թե ինչ բերեց իրեն կամավորական բանակը:

Մնաք բարով: Կեցցե կոմմունիզմը:

Պոլա Բարեկ

Ստեփան Շահումյանին

Աշքերդ կապույտ յեթերի նման
և հոգիդ շուշան,
սիրող խորունկ ծով, աղնիվ, աննման,
ընկեր Շահումյան:
Զայնդ զանգակի վսեմ մի դողանջ՝
թափանցել զիտեր
և վոգեորել շեշտովն իր սրանչ
վհատած սրտեր:
Խոսքդ չեր լոկ խոսք, այլ պատգամ հզոր,
կայծակնող ու վառ,
թշնամիներդ դեռ մինչև այսոր
քեզնից դողահար:
Դու հո չմեռար, նորից կյանք առար
և հաղթ քո մահով
ծլեց ու աճեց մի նոր գաղափար,
սփուց աշխարհով:

Ռմբոստի մահը

Անտառը հուզված եր, հուզված մեծապես:

Խուլ, զայրագին մի շառակ գրավել եր նրան:

Հսկա կաղնիները բուռն շարժումով կոանում եյին դեպի հացենիները, թեղին ու լորին վրդովված՝ շնչում եյին, թփերն անգամ, անճոռնի բաղեղներով գալարված, վոտները ճահճի մեջ, գաղջնողի վրա պառկած՝ անհանգիստ եյին... Անտառն ամբողջ հուզված եր:

Անսովոր մի դեպք եր տեղի ունենում ալդ բազմադարյան աշխարհում, ուր ծառերը մինչև այդ աճում եյին, մեռնում, գիշության մեջ բորբոսնում, պարագիտներով լցված, բաղեղներով կաշկանդվում, և ուր բոլորը գոհ եյին, վոչնչի չեյին ձգտում:

Բայց ահա մի որ ծառերից միքանիսը պատռել եյին ամեն պատռատակ, անցել ամեն ճահճի և արմատները փոխանակ, ըստ վաղեմի ավանդության, ձորնիվար իջեցնելու, սկսել եյին լեռնիվեր պարզել: Այդ անսովոր եր, խիստ անբնական, և ամբողջ անտառն իզուր չեր հուզվել:

Ի՞նչ...արհամարհել պապենական սովորությունը, թողնել ճահիճն ու ձորը, ճգնել ազատվելու պատուտակներից և, վոր գլխավորներ, դեպի լեռը մագլցել: Ինչի՞ նման եր այդ:

Նոր ծառերը, սակայն, անվրդով, անզգա կարծես այդ բոլոր հուղման առաջ, անցել եյին գծված սահմանը, զնում եյին դեպի վեր՝ վոստնելով ժայռերի վրայից, արհամարհելով արգելքները, պատուելով հողի կուրծքը:

Այդ ամբողջ նոր ճյուղավորության ծալքին սկսել եր ծնել մի առողջ, առուցի և հպարտ վստերով ծառ, վոր վեսությամբ նայում եր արմին, իր վոտների տակ փոփած հին անտառին և իր հպարտ շարժումով կարծես ծաղրում եր ճահճի մեջ ապրող հին ընկերներին:

- Դարձեք, խելագարներ,—գոչում եյին հները:
- Խենթացել են,—գոռում եյին կաղնիները:
- Կվոչնչանան, — շշնջում եյին թփերը:

Իսկ նոր ծառը բարձրանում եր, անդադար բարձրանում և բոլոր այդ աղմուկի վրա ժպառում ու զվարճանում:

— Բայց այդ մւր ես գնում մոլորված, — կանչեց վերջապես մի հսկա կաղնի, — ինչ գործ ունիս այդ բարձրությունների վրա, ուր իշխում ե սառնամանիքը, ուր քամին սոսկալի յե, ուր ջուր չկա, և ուր ժայռերը կոշտ են, ճանապարհը դժվար...

— Բարձրանում եմ, — ժպառց նոր ծառը:
— Բարձրանում ես, — ապշեց մեծ կաղնին. — խենթ, ինչ կարձրանալու մեջ, յեթե վոչ՝ միմիայն կորուստ: Ավելի լավ չե, վոր իշնես դեպի ձորը, գետակի ափը, ուր ստվեր կա, առատ ջուր, աննդարար հող, և ուր քամին անզոր ե, կայծակն՝ անհասկանալի...

— Բարձրանում եմ, — համառեց ծառը և մի բոպե իսկ կանգ շառավ:

- Դու կվոչնչանաս, — կանչեց ծառը:
- Բարձրության վրա...
- Կայծակն զոհ կլինես:
- Լեռների ծալքին...
- Դու անոթի կմսաս, ծարավ, պապակված:
- Բայց բարձր կլինեմ...

Ու բարձրանում եր, անհագ բարձրանում:

Ամբողջ անտառն այժմ լուս, դողոջուն, դարձած դեպի բարձրացող ծառը, սրաատրով դիտում եր նրա քաղերը, ուրախանում նրա հաճախ ապարդյուն ճիգերի վրա, չարամտորեն ժպառում, յեր նա մի խոշոր ժայռի գեմ եր առնում, և նենդամիտ, կծու խոսքեր նետում, յեր ծառը պապակված ու հոգնած կանգնում եր շունչ առնե-

լու, և կամ յերբ քամին զորեղ տարուքերում եր նրան այս-այն կողմ, ծոռում, գետնին եր քսում, կամ տերեներն ու ճյուղերը միմյանց խառնելով՝ գլխին դիղում...

Փշում եր քամին, ալրում եր արեր, անձրեն ու հեղեղները թրջում եյին նրան, ամպերը գլխին վորոտում, փոթորիկը նրան ժայռե-ժայռ խփում, կայծակը նրա շուրջը շանթող գծեր պարզում. — և սակայն ժայռը համառ, անդրդվելի՝ յելնում եր, յելնում և մշուշու, բարձր կատարների ձգտում...

Յեկ յերկար, տանջվելուց հետո կես ճղակոտոր, տերեները կորցըրած, հոգնած, ուժասպառ, խաղալիք քամիների, վորոտումների տակ, կայծակի շանթերի մեջ, անձրեներով թրջված հասավ բարձր կատարին:

Այժմ նա մշուշը ցած եր թողել ճահիճների մեջ մնացած իր ընկերներին ծածկելու, ալժմ նա դեպի արեն եր ատրածում իր թեկերը, բայց այժմ քան յերեք՝ նա մենակ եր, անընկեր, հեռու գետակից, հեռու ձորակից:

Յեկ չեր ափսոսում: Այդտեղ, բարձրության վրա հանգստացած, զմայլում եր նա հեռավոր հորիզոնով, փայլուն արևի տակ վողողված լեռների կատարներով:

Սնձրել նրան ջուր եր տալիս, լեռան հողը՝ սնունդ: Այդտեղ նա յերազում եր մի նոր, բարձր կանգնած սերունդ ստեղծել, ըլոնել կատարը, արեի լուսին մոռ լինել, ամպերի խոնավությունից հեռու կենալ և ճահճային աշխարհից միշտ ազատ մնալ:

Իսկ ցածի անտառը նայում եր դեռ նրան ծիծաղելով, նայում եր մենավորին, խենթուկին ու ասում:

— Կվոչնչանա. կայծակը կիշրի նրան. քամիները կկործանին:

Փշում եյին քամիները, կուրատում ճյուղերը, ցըիվ տալիս տերեները. գալիս եր անձրել, մերկացնում նրա ճկուն արմատները, հեղեղների տակ վողողում. գալիս եր և կայծակը, աղմկում, վըժժում, շրջակա ժայռերը ցնցում, այս ու այն թփին այրում սեացնում և հօխորտում ծառի վրա:

— Հանդնագն, մւր ես յեկել ինձ մոռ, կայրեմ քեզ:

— Այրիր, — ասում եր ծառը — կայրվեմ այստեղ, բայց կայրվեմ բարձրության վրա...

Այդպես ել յեղավ:

Մի չարագուշակ, փոթորկալից գիշեր քամիները ճղակոտոր արին ծառը, հեղեղը մերկացրեց արմատները, և ալրող, նախանձու կայծակը յեկավ վժժալով ու նրա կրծքին խփեց...

Ծառը բռնկեց, սկսեց այրվել:

— Այրվեմ ե...—քըքջաց ներքեից ճահճային անտառը:
— Նրա վերջն այդ եր,—ասում եյին թփիկները:
— Տեսար, հանդաւգն արարած,—կանչեց մեծ կաղնին, —մեռ-
նում ես այժմ ահա...
— Բարձրության վրա...—մըմնջաց ծառը:

Եեվխոր ու խավար գիշերվա մեջ նրա բոցը փայլում եր հեռ-
վից մի կրակոտ աստղի նման: Ճարմատում եր նա, ծուխ-մուխ
արձակում, և հողը նրա շուրջը կարծես տեղ եր բաց անում ըն-
դունելու իր ծոցի մեջ նրան, վոր բարձր ձգտեց և բարձրության
վրա յել մեռավ...

Մեռա՞ն՝ չկորան

Ինչպիսի հերոս ընկերներ մեռան,
մեռան, չկորան...
Կրակն եր ցայտում նրանց աշբ-ունքից,
շանթը շրթունքից,
յերբ խոսում եյին ծով ամբոխի մեջ
փիշտ ու կարիքից:
Վրեժի, ցասման հրով բորբոքած՝
նրանք բեմ յելան,
և բեմը դարձավ արյունով ներկված
զոհերի սեղան...
Ինչպիսի հերոս ընկերներ մեռան:
Սյոր բանտերում, վաղը՝ աքսորում,
մյուս որ՝ կախաղան
հանելու համար, դահիճը դաժան
կացինն ե սրում.
Բայց հերոսների շուրջերից սեղմված
նզովը չեր լսվում.
Բաժակն են ըմպում վերածնության
սյուներին կախված
ու հիմնը յերգում հեղափոխության՝
հպարտ, չհաղթված...
Ինչպիսի հերոս ընկերներ մեռան:
Հեյ, աղատության անպարտ զինվորներ,
դուք, վոր անխոռով
ներկեցիք փողոց ու գործարաններ
ձեր տաք արյունով,

նույն վայրում այսոր ջահել-ջիվաններ
ըմբոստ շարքերով
ձեր գովքն են անում...ձեր թափփած արյամբ
մնվում, ամրանում...
և անմահներիդ յերդվում են անփամբ
ու հպարտանում,
վոր դուք, հիրավի, պատփով, վեհությամբ
ձեր գործը տարաք,
մեռաք—չկորաք:

Կամո

Այս անունն ե կրում այն հեղափոխական հերոսը, վոր տասնե-
չորս տարեկան հասակից սկսած իր կյանքը նվիրել եր բանվոր
գասակարգի ազատագրման մեծ գործին:

Նա չեր կարող հեղափոխական չինել. այդ եր նրա կոչումը,
նրա բնափորության, խառնվածքի թելաղբանքը: Հանգիստ, խաղաղ
կյանքը նրա համար չեր. ընդհակառակը, կռվելը, հեղափոխությունը,
վտանգը նույնքան անհրաժեշտ եյին նրան, վորքան ողը մարդու
համար, ջուրը ձկան համար: Կամոն վազում եր դեպի վտանգը
ճիշտ այնպես, ինչպես թիթեռը գեպի ճրագը:

Կամոյի կյանքը կազմված ե աննկարագրելի սխրագործու-
թյուններից ու արկածներից և նման ե կինեմատոգրաֆիական մի
վեպի:

Բանտ, տանջանք, աքսոր, փախուստ բանտերից, պարտիզա-
նական կոփվ—ահա Կամոյի կյանքը:

Ո՞վ կարող ե ունենալ նրա անհողողդ կամքը, տոկունու-
թյունը, ձարպկությունը, անվախությունը:

Սովորական բան եր նրա համար ոռւմբեր պատրաստելը, կա-
զակների զորամասերի վրա հարձակվելը, կամ հինգ փթանոց ոռւմ-
բերով լի չեմոդանը ձեռքին զանազան տեղեր շրջելը:

1907 թվի հուլիսյան տոթ որերին եր, Թիֆլիսի Յերևանյան
հրապարակում: Ռումբի պալմոցը մեկը մյուսի յետելց շշմեցրել եր
պետական բանկից փող փոխադրող զինվորներին. կազակն իր ձիու-
հետ սպանված տապալվեց գետին, իսկ Կամոն 250 հազար ոռւրվին
զրաված՝ անցավ կառքով սպացի զգեստ հագած, պատասխանելով
հանդիպող զինվորների բարեներին: Յեվ այդ ամբողջ գումարը
գինու տակառի մեջ հասնում ե Պետրոպլատ ու արտասահման՝ ծա-
ռայելու կուսակցական պետքերին:

Սակայն միայն այդ. քանի՛ քանի՛ անգամ նա յերբեմն տղս, յերբեմն այն տարազով ծպտված կուսակցական հանձնաբարություններ և կատարել՝ հիմարացնելով իրեն շարունակ հետեւղ ցարական աղենանիրին:

Բանտն ու աքսորը նրան չեյին վախեցնում մազաշափ անգամ, նա հավատացած եր, վոր կփախչի, կազատվի. իսկ յեթե չազատվի, նա հանուն հեղափոխության պատրաստ եր անձը զոհել:

Բայց միշտ ել ազատվում եր: Հիշենք հենց նրա փախուստը Թիֆլիսի բանտից. ինչպես կոտրելով արտաքնոցի վանդակը, բարձրացավ շղթայակապ յերկու սաժեն բարձրություն ունեցող քարե պատը, նետեց իրեն Քուռը և հեղեղված Քոից, այն ել շղթայակապ, լողալով անցավ մյուս ավը:

Այդ խիզախ և անվեհեր հերոսը միևնույն ժամանակ աննման ձեւցնող (սիմուլանտ) եր: Յերբ ազատվելու ուրիշ հնար չեր լինում, նա իրեն խելագար եր ձեւցնում: Պատմությունն այնպիսի ձեւցնող գեռ չի տեսել: Յեվ այդ խնդրում նրան ոգնության եր համում նրա անսահման տոկունությունը. նա զիմանում և տանում եր ամենասոսկալի դիվային տանջանքները:

Պատմում են հետեւյալը. —

Պրովկատորի մասնությամբ Կամոն ոռւմբերով լի չեմողանը ձեռքին ընկնում ե գերմանական վոստիկանատուն Բերլինում, Ցարական կառավարությունը պահանջում եր Կամոյին գերմանական իշխանությունից:

Կամոն ձեանում ե խելագար. պատառոտում ե վրայի հագուստը, ջարդում, կոտրատում բանտի կահ-կարասիքը, կրծոտում ձեռքերի մսերը մինչև վոսկը, փետում գլխի մաղերը... .

— Վոշ, անհավատալի յե, — ասում ե հոգեկան հիվանդանությունների մասնագետ պրոֆեսորը, — անկարելի յե, վոր առողջ մարդն իրեն այսպիսի տանջանքների յենթարկի: Նա անպայման խելագար ե:

Յեվ Կամոյին տարան հոգեբուժարան «փորձերի» յենթարկելու: Ամբողջ յերեք տարի մնաց նա այնտեղ խելագարի վիճակում և այդպիսով մոլորեցրեց Բերլինի ամենահայտնի հոգեբույժներին:

Նա կամովին դարձել եր անզգա: Մախաթներ եյին ցցում նրա մարմնի մեջ, վողնաշարը, արյում ելին շիկացած յերկաթով ձեռների և վոտների ծալըերը, բարձր աստիճանի ելեկտրական հոսանք անցկացնում մարմնի միջով: Կամոն անդրդվելի յե, նա տանում ե այդ դիվային տանջանքները, նրա կամքը նրան չի դավաճանում: Նա զիմանում եր այդ բոլոր տանջանքներին աներկայելի, գեր-

ժարդկային տոկունությամբ: Յեվ ալգոքս ամիսներ, տարիներ, հոգեկան հիվանդների, կատաղի խենթերի շըջանում...

— Անպայմանի խելագար ե: Խենթ ձեանալ յերեք տարի՝ մարդկային ուժերից գեր ե.՝ վճռեցին վերջապես պրոֆեսորները և վորոշեցին ուղարկել կամոյին Ռուսաստան վորպես խելագար:

Վերջին անգամ նրան այցելեց իր փաստաբան Կարլ Լիբլինեխար: Նա համոզված եր, վոր Կամոն իսկապես խելագար ե, և վախենում եր նրան մոտենալ:

Բայց Կամոն առանձին եր Լիբլինեխարի հետ. ձեացնելու ել կարիք չկար. նա խոսեց իր փաստաբանի հետ առողջ մարդու լեզվով...

Լիբլինեխարի ուրախությանը, մանավանդ զարմանքին չափ չկար:

— Ի՞նչպես, դուք խելագարված չեք, դուք, ուրեմն, առողջ եք. այդ անկարելի յե, յերեք տարի շարունակ խելագար ձեանալ ե առողջ մնալ—այդ գեր ե մարդկային ուժերից:

Բայց Կամոյի ուժերից գեր չեր... Կամոն արդեն Թիֆլիսի հիվանդանոցումն ե, նոր «փորձերի» ենթակա:

Ասեղը խրել են նրա մեջը և ասեղի ծայրով ամենաբարձր աստիճանի ելեկտրական հոսանք թողել նրա մարմնի մեջ:

«Յամի անսասելի յեր, — պատմում ե ինքը Կամոն, — մեջը վառվում եր, և տապակած մսի հոտ բարձրանում... Դատախազը կանգնում գիմացս՝ լարված հայացքով գիտում ու նայում եր աչքերիս մեջ, չի նկատի արդյոք ցավի մի նշուլ... Նա բժիշկներին չեր համարական բնիքն եր փորձում: Յես նայում եյի նրա աչքերին անմիտ, բութ հայացքով և հոհուում ալուշին հատուկ ծիծաղով... Դատախազը թքեց, հայինեց ու զնաց»:

Յեվ այս դիվային տանջանքները տանում եր Կամոն հանուն հեղափոխական սարտիկի կանքն ու գործունեյությունը, վիպական մի սքանչելի կերտված:

Սակայն հատորների նյութ ե այդ «առասպելական» հեղափոխական սարտիկի կանքն ու գործունեյությունը, վիպական մի սքանչելի կերտված:

Բանվորուհու որորը

Մի լար, վորդիս, վոր չես լսում
ել մայրական քաղցր որոր.
յես մեծ կռվի յերգ եմ հյուսում
որոցքիդ մոտ ամեն որ:

Դու լսում ես այնտեղ, դրսում
շաչ ու շառաջ, լաց ու կոծ,—
մեր արյունն ե այնտեղ հոսում,
ներկած և տուն, և փողոց...

Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ,
բանվոր գնդեր ահարկու,
քաջ մղում են մի մեծ կռիվ—
աշխատանքի և վոսկու...

Այնտեղ վոսկին տեր-տիրական,
վորպես դահիճ դժնաղեմ,
սուր ե պարզում մեր որական
թույնով շաղախ հացի դեմ...

Այնտեղ հայրեր, այնտեղ վորդիք
մի նոր կյանքի յեզերքում,
վորպես մի-մի հերոս մարտիկ
մանն են գրկում ու յերգում...

Յեկ թնդում ե յերգը ահեղ
պատնեշների շարքերում,
վորպես լեռնից վազող հեղեղ,
վորպես վորոտն ամպերում:

Այնտեղ ե մեր աչքի լույսը,
մեր ոջախի վառ ճրագ՝
հայրդ կռվում, սիրտն ալեհույզ,
սրտում և թույն, և կրակ:

Մի լար, վորդիս, վոր չես լսում
ել մայրական քաղցր որոր.
յես մեծ կռվի յերգ եմ հյուսում
որոցքիդ մոտ ամեն որ:

Հունվարի 9-ը

Զմեռվա մի սաստիկ ցուրտ առավոտ եր. 1905 թվի հունվարի
9-ին (22) Լենինգրադի բանվորական թաղերից ահագին ամբոխ եր
առաջ շարժվում: Սուաջից տանում ելին թագավորի ու սրբերի պատ-
կերները. յետեկից գնում ելին բանվորներ, բանվորուհիներ ու նրանց
յերեխաները տոնական հագուստներով:

Ուր եյին գնում և ինչնու:

Սովոր ու կարիքն եյին ստիպել նրանց՝ սիրտ անել թագավորի
մոտ գնալ ու խնդրել, վոր իրենց պաշտպանի անպատկառ գործա-
բանատերերից ու վոստիկաններից:

Թագավորին ուղղած իրենց ինդրում նրանք գրում եյին.

«Թագավոր, մենք՝ բանվորներս, մեր կանայքն ու յերեխաները
և մեր ծերունի ծնողները յեկէլ ենք քեզ մոտ արդարություն ու
պաշտպանություն խնդրելու: Մենք ծայր աղքատության ենք հասել,
մեզ հարստահարում, ծանրաբեռնում են անտանելի աշխատանքնե-
րով, մեզ անպատկում, մեզ մարդու տեղ չեն գնում, մեզ ստրուկ
են համարում, վոր պետք ե միայն համբերենք ու լունք: Այդ ել
արինք—համբերեցինք ուլուցինք, բայց մեր աղքատությունը, իրա-
վունքներից զուրկ լինելն ու տղիտությունն ավելի յեն մեծանում:
Բռնակալությունն ու կամայականությունը մեզ խեղդում են, մենք
շնչասպառ ենք լինում. ել ուժ չմնաց, թագավոր, մեր համբերու-
թյունը կտրվում ե, հասել ե այն սոսկալի ըռակեն, յերբ մեռնելն
ավելի լավ ե, քան չտեսնված անարգանքներ կրելը»:

Յերկու հարյուր հազարից ավելի բանվոր-ամբոխ մոտենում եր
Զմեռվային պալատին:

Գնում ելին հանգիստ, առանց յերգերի, առանց կարմիր դրո-
շակների... Գնում ելին խնդրելու, աղերսելու...

Յեկ հանկարծ՝ համազարկ...

Առաջին շարքերում շփոթություն ընկավ. կարծեցին, թե ինչ-
վոր սխալ բան կատարվեց. շարունակեցին առաջ գնալ, նորից հա-
մազարկ: Ամբոխի առաջ յելան կազմակեր՝ մերկացած սրերով, Ա-
ղաղակ բարձրացավ... Մեկն ընկավ կուրծքը վիրավոր... Մարդկա-
յին ծովը կանգ առավ... «Միթե չպիտի հասնենք թագավորին, մի-
թե կրակում են մեզ վրա», — շնչացին ամենքը:

Վոստիկանությունը քնած չեր. համազարկերն իրար հաջորդե-
ցին. տասնյակներով ու հարյուրներով անմեղներ ընկան, ընկան
արյունվա, միմիայն նրա համար, վոր պահանջելու փոխարեն հա-
մարձակվեցին խնդրել թագավորին իրենց ծանր լուծը թեթևացնե-

լու մասին... Ամբոխը շվարեց... Սկսեցին լեղապատառ փախչել, փախչել այդ սարսափից և արյունից, վոր թափեցին արքայի գահիները: Թագավորի զորքերը «հաղթականորեն» ջարդեցին խաղաղ յերթը:

Հինգ հազար հոգի վիրավորվեց, հազար յերկու հարյուր տասնվեց հոգի սպանվեց. և այդ բոլորը մի որում, արյունոտ կիրակի որը, հունվարի 9-ին (22):

Լավագույն բանվորների հետ թագավորն այս ձեռվ հաշիվ մաքրեց:

Այդ որից բանվորները հասկացան, վոր՝ քանի թագավոր կա, նա միշտ բուրժուազիայի կողմը կլինի, բանվորն որ չի ունենա, պետք ե գահից վոնդել թագավորին:

Տասն ամիս անց՝ ամբողջ Ռուսաստանում գործադուլ հայտարվեց: Թագավորը զիջումներ արավ:

Նա թղթի վրա խոսքի ու ժողովների ազատություն տվեց, իսկ հետո խարեց: Բանվորները հարկավոր չափով պատրաստված չեյին, տւստի ջարդվեցին: Մոսկվայում գեկտեմբերին ապստամբեցին, բայց այս անգամ ել խեղդվեցին իրենց արյան մեջ:

ԼԵՆԻՆ

(ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ՈՒԼՅԱՆՈՎ)

Վլադիմիր Ուլյանովը ծնվել է 1870 թվի ապրիլի 10-ին Սիմբիրսկ քաղաքում: Նրա հայրը ժողովրդական դպրոցների տեսուչ եր և վայելում եր իր շրջանի ուսուցիչների ջերմ սերը:

Յերբ Վլադիմիր իլյիչն ավարտեց գիմնազիան, Ուլյանովների ընտանիքը ծանր հարված կրեց: Ալեքսանդր III ցարը գլխատեց նրա մեծ յեղբօրը՝ Ալեքսանդր Ուլյանովին՝ նրա գեմ մահափորձ պատրաստելու համար:

Ընտանեկան այս վիշտը խորապես ազդեց պատանի իլյիչ վրա: Նա մտածում եր, թե ինչ միջոցներով և ինչպես կարելի յեղնել ժողովրդին, վոր նա ազատվի վոչ միայն ցարերից, այլ ամեն տեսակ ձնշումներից:

Այդ մտածումներով նա մտավ կազանի համալսարանը ուսումը շարունակելու: Բայց մի ամսից հետո ուսանողական ցույցերին մասնակցելու պատճառով Վլադիմիր իլյիչը վոնդվեց համալսարանից և ուսման ընթացքն ավարտեց միքանի տարի հետո:

Վլադիմիր իլյիչի գործունեյության առաջին շրջանը 90. ական

թվականներին անցավ ուսանողական խմբերի մեջ: Յերբ նրան կազմանի համալսարանից արտաքսեցին, գնաց Պետերբուրգ:

Այն ժամանակ չկային բանվորական շարժման նվիրված մարդիկ, իսկ բանվոր դասակարգը գեռ նոր-նոր եր հաղորդակից լինում քաղաքական կյանքին:

Ու ահա պատանի իլյիչը 1—2 տարի հետո Պիտերում առաջին բանվորական միությունն ե ստեղծում, իր շուրջն ե համախմբում բանվորական գործին նվիրված հեղափոխականների առաջին խումբը:

Կարճ ժամանակից հետո նա զրական ասպարեզ ե յեխում իր կեղծ անունով և կատաղի պայքար սկսում նարոդնիկների գեմ:

Սրանց կարծիքով Ռուսաստանի գլխավոր ուժը գլուղացիներն են, իսկ բանվորները յերբեք չեն բազմանա այնչափ, վոր կարողանան տապալել ցարին:

Վլադիմիր իլյիչը պնդում եր, վոր հեղափոխական շարժման ղեկավարը պետք ե լինի բանվոր դասակարգը: Նրա փայլուն հոգվածները գրավում եյին ընդհանուրի ուշադրությունը:

Բայց վլ. իլյիչը չի բավականանում գրական ասպարեզով: Նա նույնպես, գուցե և ավելի, գործի մարդ եր:

Նա կազմակերպում ե առաջին գաղտնի բանվորական զորեղմիությունը. գիշեր ու ցերեկ անց եր կացնում բանվորական թաղամասերում:

Շատ չանցած, ցարական կառավարությունը իլյիչին ու նրա ընկերներին ձերբակալեց ու միքանի տարի բանտում պահելուց հետո աքսորեց Սիբիր:

Վլադիմիր իլյիչն ապրում եր հեռու ընկած կենա գետի մոտերքը, վորից նա ժառանգեց իր յերկրորդ անունը՝ կենին:

Սակայն բանտն ու աքսորը չեյին կարող ընկած կենինի նման մարդուն: Այստեղ նա ավելի ամրապնդվեց իր մտադրությունների մեջ, իսկ վորպեսզի ժամանակն իզուր չկորչի, նա սկսեց թե ինքը սովորել և թե ուրիշներին սովորեցնել:

Այդ շրջանում գրեց միքանի նշանագործ գրքեր: Նա բարողում եր, թե անհրաժեշտ ե կազմակերպել առանձին բանվորական կուսակցություն, վոր այժմ իսկ կոիվ մղի ցարի և բուրժուազիայի գեմ:

1900 թվին կենինին հաջողվում ե փախչել արտասահման, վորտեղ կարելի յեր աղատ գրքեր տպագրել: Այստեղ նա տառապում էր ինչպես առյուծը վանդակում: Նրա փրկությունը այն եր, վոր ինչպես առյուծը վանդակում: Նրա կացնում ցարավարաններում, գրքերի վրա, որական 15 ժամ անց եր կացնում գրադարաններում, գրքերի վրա, և զուր չե, վոր նա մեր ժամանակի ամենազարգացած մարդկանց մեջն եր:

Լենինը անխնա յե յեղել բանվոր դասակարգի ամեն տեսալը թշնամիների հանգեպ: Նա կատաղի պայքար ե վարել վոչ միայն բուրժուազիայի, այլ և այն սոցիալիստական կուսակցությունների դեմ, վորոնք սխալ ճանապարհով են տանում բանվորա-գյուղացի-ության ազատագրական շարժումը:

Ու նա չսխալվեց: 1917 թվին Հոկտեմբերյան հեղափոխությունը հաղթանակեց, հայտարարվեց բանվորա-գյուղացիական իշխանություն: Կանգուն ե Խորհրդային առաջին մեծ պետությունը: Այդ պետության առաջին քարն ե դրել նրա հմուտ դեկավար—Լենինը: այդ ե պատճառը, վոր ամբողջ աշխարհի աշխատավորությունը ջերմ ու անկեղծ սիրում ե Լենինին:

Այդտեղ ե նրա ուժն ու մեծությունը:

Վ. Ի. Լենինին

Կանգնել եմ ահա պատկերի առաջ,
դիտում եմ նրա գծերը դեմքի.
սա հանձնար ե մի, թե զորավար բայ,
վոր պաշտամունքը դարձավ ամենքի:

Գանգը լյառ ե մերկ, անհաս ու հպարտ,
ճակատը անհաշտ—կոիմների դաշտ—
խոր աշքերի մեջ այրվող անապատ,
անողոք իրա հրով կոապաշտ:

Նայում ե հեգնոտ անցած աշխարհին
և կարծես ծաղրում հին բուրժուային.
— Վորքան ել ուզես վեր կենալ նորից՝
դատապարտված ես մահվան այս որից:

Հոկտեմբերը—դեղջուկին

Յես ձեղ կասեմ,
թե ինչ տվեց 17 թվի
Հոկտեմբերը գեղջուկին,
են որերը թե ինչ տվին
տանջված, թշվառ խեղճուկին:

Մինչ եդ որը վիզը ծռած
դեղջուկը՝ խեղճ, կիսամեռ—
աշխատում եր, գերի դառած՝
դարուն, ամառ թե ձմեռ:

Նա չուներ հող, նա չուներ արտ,
վոչ ել հանգիստ ու դադար,
տանջանք ուներ և միայն դարդ
ու չարչարանք անդադար:

Աշխատում եր, վարում, ցանում
տիրոջ համար անկշտում,
զրկանքների բովում տանջվում,
միշտ անդադար, անհատնում:

Միշտ հնազանդ ու հպատակ՝
իր տեր՝ տերտեր-մեծերին,
միշտ յենթակա ու նահատակ՝
տանջանքներին, ծեծերին:

Բայց ահա մեծ Հոկտեմբերը
նրանց կապերն արձակեց,
նրանց համար ազատության
վառ արշալույս ստեղծեց:

Գեղեցիկ հեքիաթը

Նստել ե բանվոր Սարգիսը շքեղ պալատում և ինքն իրեն մտա-
ծում ե.

— Թե յես եմ, եստեղ ինչ ունեմ. յես ով, ես շքեղ դահլիճի,
ես վոսկեզոծ աթոռների տերն ով...

Նայում ե իր կոշտացած ձեռքերին, հիշում ե, վոր ինքը փա-
կանագործ ե, ծխի ու մրի անբաժան ընկեր, հիշում ե և այն, վոր
տանը հազար մի կարիք ունի, բայց և այնպես սիրան ուրախ ե,
զգում ե, վոր գտնվում ե այն դրության մեջ, վորին յերջանկու-
թյուն են ասում:

Զե, սա մի հեքիաթ ե, վոր հարյուր տարին մի անգամ հազիվ
կատարվի...

Ընդմիջումին դուրս ե գալիս նա պատշգամբը. նրա առաջ բաց-
վում ե հինավուրց մի այգի. միշտ առանձնության սովոր ծառերը

Նայում են մոայլ իրենց հաստացած ու սևացած բներով, միայն կատարներին նոր բողբոջները պատռել են կեղեները և արագ-արագ դեպի դուրս են ձգտում...

Նայում ե բանվոր Սարգիսը և աչքին չի հավատում:

Այո, սա են ալգին ե, վորի առջեկց անցնելիս նա իր փոքր հասակում միշտ մտածել ե, թե այս բարձր պարսպի յետելը մի խորհրդավոր վայր ե, մի առանձին աշխարհ, ուր ոճն իր պորտով, դուշն իր թևով չի կարող մտնել:

Յեկ հանկարծ նա ինքն այստեղ ե և տեսնում ե, թե վորտեղից եր գալիս այն արտասովոր բուրժունքը...

Ահա ընդմիջումը վերջանում ե, նորից սկսվում ե բանվորական խորհրդի ժողովը: Սարգիսը նորից իր տեղն ե. Նա լսում ե այն խոսքերը, վորոնք մուրածի հարվածներով ցնցում են բոլորին, և վորքան տարորինակ են հնչում նրանք այս շքեղ պալատի մեջ, վոր յերբեք, յերբեք չե լսել նման խոսքեր:

Լսում ե Սարգիսը և ակամա մտածում. այս արդուզարդը, այս նուրբ քանդակները, վորքան ել նուրբ լինեն, դարձյալ շինված են մարդկային ձեռքով, և հարյուրավոր կոշտացած ձեռքեր ցեխոտվել ու մղկտացել են այս գեղեցկությունը ստեղծելիս. և այս բոլորը, ինչպես վոր կատարվում ե, մի դատաստան չե, վոր մոտեցնում և ստեղծողներին իրենց ստեղծածին:

Այո, միայն մոտեցնում ե... գեռես հեռու լի այն որը, յերբ աշխատանքի պտուղները խորթ մայր չեն լինիլ իրեն աշխատողի համար:

Վերջանում ե ժողովը. նա դուրս ե գալիս փողոց. խուռն բազմությունը շարժվում է առաջ, ասես տարված մի հզոր վոգու առաջնորդությամբ:

Հնչում են ճառեր, հնչում ե յերգը. կյանքը յեռում ե մի նոր, չտեսնված թափով:

Ա՞հ, սա այն քարացած աշխարհը չեր, վոր տարիներով կապված եր այն վիուկների ձեռքով. և այժմ, ահա, վերացել են վիուկները, և ամեն ինչ շարժվում է ու ապրում...

Նայում ե Սարգիսը և բոպեյապես մոռանում ե այն տանջանքը, վոր նա կրել. ե այս նոր կյանքի համար բանտում, աքսորում:

— Յես ել իմ լուման ձգեցի այս շարժման համար. յես ել շարժեցի անիմսերը. բայց այսպիսի նոր կյանքի համար կյանքս չեմ ինայիլ:

Յեկ նա միանում ե ընդհանուր յերթին:

Կոմմունիստական կուսակցությունը

Ի՞նչ բան ե կոմմունիստական կուսակցությունը և ի՞նչ ե նա ուղղում, — հարց են տալիս բանվորներն ու գյուղացիները:

Ի՞նչ բան ե կոմմունիստական կուսակցությունը, — այդ պետք ե իմանան բանվորներն ու բանվորուհիները, վորովհետեւ կոմմունիստական կուսակցությունը նրանց կուսակցությունն ե, վորն անում ե այն բոլորը, ինչ վոր կարելի յե, վորպեսզի նրանք դուրս գան անխոս ստրուկների վիճակից բւ սկսեն ապրել այնպես, ինչպես վայել ե գիտակից պրոլետարիատին:

Կապիտալիստական յերկրներում թե բանվորները և թե բանվորուհիները պետք ե աշխատեն միայն նրա համար, վոր լցնեն կապիտալիստների գրպանները:

Իսկ յերբ բանվորներն ու բանվորուհիները բողքում են, ձգում են աշխատանքը, իրենց պահանջներն են հայտնում, բուրժուական կառավարությունը, վոր միացրել ե կապիտալիստներին իրենց շահերը պաշտպանելու համար, նրանց ծեծում մտրակներով, բանտ ե նստեցնում և գնդակահարում:

Բանվորներին ու բանվորուհիներին կապիտալիստն ասում ե.

«Յես ձեզ վերջնում եմ իմ ֆաբրիկան, վորովհետեւ դուք յերեխաներով ծանրաբեռնված եք, վորովհետեւ դուք արհամարհված եք ու տգետ ու գործադուլներ չեք անի, այլ անմոռնչ կերպով կը-ծառայեք իրեւ իմ մեքենայի մի ավելորդ անշունչ մասը»:

Այդպես ե խոսում կապիտալիստը բուրժուական յերկրներում: Յեկ բանվորներն անտրտունջ գնում են գեպի նրա ֆաբրիկայի դարպանները ու բախտավոր են, յերբ այդ դարպանները բացվում են նրանց համար, վորովհետեւ նրանք այլևս ուրիշ տեղ չունեն գնալու:

Այդտեղ գոնե կաշխատես և գոնե հացի մի կտոր կստանաս: Իսկ տանը սպասում ե նրան ընտանիքի, քաղցած, մերկ ու վոտաբորիկ յերեխաների դառն հոգսը:

«Այդպես ե լինելու միշտ, — ասում ե կապիտալիստը, — իշխանությունը իմ ձեռքումն ե: Յեթե քո ապրուստը վատ ե, գնա յեկեղեցին. կրոնը անդորրություն կտա քեզ», և ինքն ել այդ ասելիս խոչ ե հանում յերեսին:

«Հերիք ե: Շատ համբերեցինք, — ասում են բանվորներն ու բանվորուհիները, — վերջ տվեք»:

«Յեկեք կազմենք արհեստական միություններ, — միության մեջն ե ուժը»:

«Մենք կաշխատենք բարելավել մեր դրությունը, կռիվ մղելով
աշխատավարձը ավելացնելու համար, աշխատանքի պայմանները
բարելավելու համար»:

Սակայն շուտով բանվորներն ու բանվորուհիները համոզվում
են, վոր այդ ճանապարհն ել նրանց չի տալիս փրկություն:
Կապիտալիստներն ել են միանում, միություն կազմում:
Այն բանվորը, վոր կապիտալի դեմ մի արարմունք ե յուց տալիս,
արտաքսվում ե: Նրան տալիս են, այսպիս կոչված, գայլի անցագիր,
վորով նա այլևս չի կարող մտնել վոչ մի գործարան:

Անգործների բազմությունը ամեն մի ըոպե պատրաստ ե գրա-
վելու կապիտալիստների դեմ պայքարող բանվորների տեղը:

Բանվոր դասակարգի տառապանքները շարունակվում են:
Բուրժուազիան իր իշխանության, իր մեքենաների, դրամի, զին-
վորների, վոստիկանության, որենքների ամբողջ զորությամբ գրոհ
ե տալիս բանվոր դասակարգի վրա: Յեզ այդ՝ չնայելով այն բանին,
վոր կապիտալիստական յերկրների բոլոր հարստությունները՝ ֆար-
բիկաները, տները, — բոլորն ել ձեռք են բերված բանվորների ու
բանվորուհիների աշխատանքով և պետք ե նրանց ել պատկանեն:
Կապիտալիստները հափշտակում են բանվորների ու բանվորու-
հիների աշխատանքը:

Բանվորներ ու բանվորուհիներ, բոլոր ֆաբրիկաները, բոլոր
գործարանները, յերկաթուղիները, տները ձեզ են պատկանում:
Դուք մենակ ստեղծել նրանց ձեր ձեռքերով, դուք ել պիտի
վայելեք ձեր ձեռքերի պտուղները. վրա համար անհրաժեշտ ե,
վորպեսզի իշխանությունը լինի վոչ թե կապիտալիստների, այլ
բանվորների ձեռքում:

Թող կորչեն ուրիշի աշխատանքը շահագործողները, բոնակալ
ֆաբրիկանտներն ու գործարանատերերը, — ասում ե Կոմմոնիստա-
կան կուսակցությունը:

Առաջավոր, գիտակից բանվորները, վորոնք հասկացել են բան-
վորների ու բանվորուհիների, չքավոր գյուղացիների և գեղջկուհի-
ների սպառնալիքների պատճառը, միանալով կազմել են անհաշտ
կովի մի կուսակցություն հանուն բանվորների և գյուղացիների իշ-
խանության, հանուն նոր հասարակակարգի, վորտեղ չեն լինելու
վոչ շահագործողներ և վոչ ել շահագործվողներ, — ահա թե ինչ բան
ե Կոմմոնիստական կուսակցությունը:

Հավասար աշխատավարձ հավասար աշխատանքի համար բան-
վորուհուն և բանվորին, Հասարակական սնունդ: Մայրականության
և յերեխաների պաշտպանություն:

Բանվորուհու յերեխաների համար մսուրներ, մանկատներ, վոր-
պեսզի բանվորուհին գազգյահի մոտ աշխատելիս հանգիստ լինի
իր յերեխայի համար, իսկ որվա աշխատանքն ավարտելուց հետո
կարողանա ժողով գնալ, գրքեր կարդալ, հաճախել ակումբ, թատ-
րոն, — ահա թե ինչի համար ե պայքարում Կոմմոնիստական
կուսակցությունը:

Միայն Կոմմոնիստական կուսակցությունն ե իսկական բան-
վորական կուսակցություն:

Հապա ինչու մեզանում՝ Խուսաստանում, ուր իշխանությունը
բանվորներն են պահում իրենց ձեռքում, կյանքը դեռևս չե
կանոնավորվել:

Վորովինետև բանվոր դասակարգը շատ թշնամիներ ունի, վո-
րոնք կռիվ յելան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն-
ների Միության դեմ և խանգարեցին բանվոր դասակարգին խաղաղ
կերպով տնօրինելու իր կյանքը:

Ամեն կողմից նրանք հարձակվում եյին Խորհրդային Խուսաս-
տանի վրա, և մեզանում միքանի տարի շարունակ բոլոր ուժերը
վատնվում եյին վոչ թե շինարարական աշխատանքի վրա, այլ թշնա-
միների դեմ կռվելու համար:

Վորովինետև բանվոր դասակարգը դեռևս շատ աշխատանք պի-
տի թափի մեր Խ. Ս.-Հան մեջ, վորպեսզի կարողանա կարգի
գցել կյանքը կոմմոնիստական ձևով:

Առանց ձեռքները ծալելու աշխատում են գիտակից բանվոր-
ներն ու բանվորուհիները և կոչ են անում ամբողջ բանվորական
մասսային յետ չմնալ, աշխուժորեն աշխատել, կազմալուծման առաջն
առնել, վերացնել այն բոլոր գժվարությունները, վոր կանգնած են
բանվոր դասակարգի ճանապարհին հանուն կոմմոնիգմի մղվող
կովում:

Հեռու չե այն ժամանակը, յերբ կտանենք ամբողջ աշխարհի
բանվոր դասակարգի հաղթանակը լնդգեմ կապիտալիստների:

Կոմմոնիստական կուսակցությունները ամբողջ աշխարհում
կատարում են իրենց գործը:

Նրանք կոմմոնիստական հնտերնացիոնալի դըռշի տակ են
կոչում ամբողջ աշխարհի բանվորներին ու բանվորուհիներին:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն-
ների Միություն
(Խ. Ա. Հ. Մ.)

Խորհրդային Հանրապետությունների Միությունը ստեղծելու ձգտումը կար թե Ռ. Խ. Ֆ. Հ. Հ. մեջ, և թե մասն խորհրդային պետություններում:

Կայացավ միջմիութենական համագումար, վորն ընտրեց իր կենտրոնական Գործադիր Կոմիտեն:

Խորհրդային հանրապետությունների միջև ստորագրվեց դաշնագիր:

Այդ դաշնագրի հիման վրա բոլոր հանրապետությունների համար սահմանվում ե Կարմիր բանակի վրա մի ընդհանուր ղեկավարություն և հրամանատարություն, մի ընդհանուր ղեկավարություն և կառավարություն հաղորդակցության ճանապարհների, պոստի և հեռագրի, արտաքին քաղաքականության և առեւտրի վրա:

Կենտրոնական միութենական ժողկոմատներին յենթակա յեն իրենց գործունեյության մեջ առանձին հանրապետությունների ժողկոմատները՝ ֆինանսական, պարենավորման և տնտեսական քաղաքականության, ինչպես նաև աշխատանքի ու բանվորա-գյուղացիական տեսչությանը վերաբերյալ հարցերի շրջանակում:

Բայց պետական շինարարության մնացյալ բոլոր ճյուղերում միության մեջ մտնող հանրապետությունները միանդամայն աղաւեն իրենց գործողությունների մեջ:

Միությունն ստեղծված ե փոխադարձ վստահության և լիակատար աղատության սկզբունքների վրա: Այդ յերեսում ե նրանից, վոր յուրաքանչյուր խորհրդային յերկիր իրավունք ունի մտնելու և աղատորեն դուրս գալու Միությունից:

Հանրապետությունների Միության նշանակությունը մեծ է:

Ռուսաստանի, Ռուկայնայի, Վրաստանի, Աղբքաշանի, Հայաստանի, Բելոռուսիայի ու ռուսական մյուս բոլոր ազգությունների պրոետարեների լուելյան միությունը կալացել ե վաղուց, դեռևս ցարիզմի դեմ կռիվների ծանր տարիներում:

Խորհրդային տան կառուցվածքի ավարտումը, պրոլետարական հանրապետությունների միություն կազմակերպելու միջոցով, լոկ սկիզբն ե Խորհրդների համաշխարհային շենքի վիթխարի կառուցվածքի, հիմքն ե համաշխարհային պրոլետարական հեղափոխության:

Աշխատավորների իրավունքները

Խորհրդների անդամ ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն Խորհրդային հանրապետությունների յերկու սեռի պատկանող հետեւ վյալ քաղաքացիները, անկախ նրանց կրոնական դավանանքից, ազգությունից, բնակավայրից և այլն, վորոնց հասակը ընտրության որը տամանութից պակաս չե.

ա) Այն անձինք, ովքեր իրենց կյանքի ապրուստը հալթայթում են արտադրական ու հասարակական-ոգտակար աշխատանքով, նմանապես և նրանք, ովքեր կատարելով տնալին գործեր, ապահովում են առաջինի համար արտադրական աշխատանքի հնարավորությունը, այն ե՝ արդյունաբերության, առևտրի, գյուղատնտեսության մեջ և այլ աշխատանքներով զբաղված բոլոր տեսակի ու կատերիայի բանվորներն ու ծառայողները և այն գյուղացիները, վորոնք չեն ոգտվում վարձու աշխատանքից շահ ստանալու նպատակով.

բ) Խորհրդային բանակի ու նավատորմի զինվորները:
Ով ե ԶՐԿՎԱԾ ԻՐԱՎՈՒԹԻՑ ԽՈՐՀՄԱԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Զեն ընտրում և ընտրվել ել չեն կարող, թեկուզ նրանք մըտնում լինեն վերոհիշյալ կատեգորիաներից մեկն ու մեկի մեջ:

ա) Այն մարդիկ, ովքեր դիմում են վարձու աշխատանքի ոգնությանը՝ շահ ստանալու նպատակով.

բ) Նրանք, ովքեր ապրում են վոչ աշխատանքային յեկամուտով, այսինքն դրամագլուխների տոկոսիքով, ձեռնարկությունների յեկամուտով, կայքից ստացվող մուտքերից և այլն.

գ) Մասնավոր վաճառականները, վաճառականական և առևտրական միջնորդները.

դ) Յեկեղեցական ու կրօնական պաշտամունքի վարդապետներն ու հոգեռորական սպասավորները.

ե) Նախկին վոստիկանության, ժանդարմաների հատուկ կորպուսի ու պահնորդական բաժանմունքների ծառայողներն ու ազենտները.

գ) Նրանք, ովքեր սահմանված կարգով ճանաչված են հոգեկան հիվանդներ և տկարամիտներ: Նմանապես և այն անձինք, ովքեր դրված են խնամակալության տակ.

է) Նրանք, ովքեր շահասիրական և վարկաբեկիչ հանցագործությունների համար դատապարտված են որենքով կամ դատական վճռով վորոշ ժամանակով:

Մարդու ծագումը

«Յեվ ստեղծեց աստված մարդուն իր պատկերի նման», — այս ելին պատասխանում մեզ մանուկ հասակում, յերբ հարց ելինք տալիս, թե «Վնրտեղից և ինչպես ե առաջ յեկել մարդը յերկը իրավու վրա»:

Դրանից հետո մեզանից շատերը բազմաթիվ գրքեր են կարդացել, մտածել այդ հարցի մասին և իմացել, թե ինչ ե ասում գիտությունը, ինչ են մտածում գիտնականները այդ հարցի մասին:

Բայց և շատ-շատերը հնարավորություն չեն ունեցել վոչ միայն գիրք կարգալու, այլև մտածելու դրա մասին: Ու մինչև որս ել հավատացած են, թե մարդկությունն առաջ ե յեկել Ադամ ու Յեփակից, «աստված ե ստեղծել մարդուն իր պատկերի նման»:

Յեվ յեթե աստծուն նման չե, բա ում ե նման մարդը: Տեսնենք:

Մարդու կմախքին, վոսկրներին ամրացած են մկանները (միսը), ներսում բարձակում ե սիրտը, գանգի մեջ ուղեղն ե տեղավորված, իսկ սնունդը մարսվում ե ստամոքսում:

Բոլոր կենդանիները ունեն և վոսկը, և միս, և սիրտ, և ուղեղ:

Այսպես, ուրեմն, մենք տեսնում ենք, վոր մարդը նույն կազմությունն ունի, ինչ վոր կենդանիները:

Մարդու սաղմը ունի նաև պոչ, վոր հետո կորչում ե, ունի խոիկներ, ինչպես ձկները:

Բոլոր կենդանիները սաղմավորվելիս վոչ այլ ինչ են, յեթե վոչ մի բջիջ (բոլոր կենդանի արարածները բաղկացած են բջիջներից, այնքան փոքր, վոր դիտել կարելի յե միայն խոշորացուցով):

Վորքան մեծանում ե մարդու սաղմը, այնքան նմանությունը մյուս կենդանիների՝ ձկների, ճագարների և այլ սաղմերի հետ քշանում ե:

Բայց միաժամանակ մարդու սաղմն սկսում ե ավելի ու ավելի նմանվել կապիկների սաղմերին: Պատահում ենույնպես, վոր մարդու սաղմը ծածկված ե լինում մազերով: Ի՞նչ են ապացուցում այս ամենը:

Բոլոր այս փաստերը գալիս են ասելու, վոր մարդու նախնիքները ունեյին և խոիկներ, և պոչ, և մազեր: Սաղմի աճեցողության հետ այս բոլորը հետզհետե կորչում են:

Նորածին մանուկը թե խելքով (ուղեղը զարգացած չե) և թե

շարժումներով շատ ավելի նման ե կենդանու, քան հասակավորը: Գուցե դուք տեսած լինեք, թե ինչպես կապիկները գազանանոցում ցատկուաւմ են ձողիկների վրա:

Նրանք բոնում են վոտի մատներով մի վորեե առարկա (այդ նրանց հաջողությունը ե, վորովիետե վոտի բութ մատը հեռու յե մյուսներից), իսկ ձեռները գցում են հիշյալ առարկային և այդպես հաճախ մնում են կախված: այս ձեռվ կապիկները շրջում են ամբողջ անտառները:

Սակայն միթե միայն սաղմերն ունեն պոչ, մազեր և առհասարակ կենդանական բոլոր նշանները:

Յերբեմն ծնվում են յերեխաներ բոլոր այս պաճուճանքներով: Թեև այս դեպքերը բացառիկ ալլանդակություններ են, բայց ցույց են տալիս, վոր մարդը թեև կորցրել ե այս ամենը, սակայն անցյալում, շատ հեռու անցյալում ունեցել ե այն ամենը, ինչ վոր այժմ ունեն կենդանիները:

Ծնվում են նաև այնպիսի մարդիկ, վորոնք ունենում են միքանի զույգ ծծեր:

Անշուշտ դուք հարց կտաք. «Զե վոր մարդը ընդունակություն ունի մտածելու, խոսելու իր նմանների հետ, իսկ կենդանիները զուրկ են այդ ընդունակություններից»:

Գիտությունը ապացուցել ե, վոր մտածելու ընդունակությունը կապ ունի ուղեղի հետ: Հետեւաբար՝ ով ուղեղ ունի, նա կարող է մտածել: Ինչ վերաբերում է խոսելուն, ապա կապիկները գործ են ածում պայմանական նշաններ (հատուկ ձիչեր), թոշունները յերածում պայմանական նիմունքներ: Զե վոր յեղել ե կենդանիների մեջ ևս կան խոսքի հիմունքներ: Զե վոր յեղել ե գտամանակ, յերբ մարդու լեզուն այսպես հարուստ չի յեղել, մարդիկ ունեցել են բառերի շատ սահմանափակ պաշար:

Բայց նվ ե մարդու մոտավոր ազգակիցը. — կհարցնե անշուշտ ընթերցողը: Գիտնականները փորձել են վարակել զանազան կենցի ներգործել: Բայց սրանից՝ խառնում ելին մարդու արյունը կենցի ներգործել: Բայց սրանից՝ խառնում ելին մարդու արյունը կենցի ներգործելի արյան հետ, և նա իսկույն քայլայվում, փշանում եր. անփոփոխ և մնում միայն կապիկի արյան հետ խառնելիս:

Մարդու նմանությունը կապիկն կարելի յե հասարակ աշքով անգամ տեսնել:

Կապիկներից ամենից շատ նմանում են մարդուն գիրքոնը, գորիլլան, շիմպանզեն, որանգ-ուտանզը, Գիբբոնը նույնիսկ յերգանման ձայներ ե հանում:

Ալսպես, ուրեմն, կենդանիներից ամենից շատ մոտ են մարդուն կապիկները, բայց, իհարկե, անմիջական ցեղակիցները չեն։ Մարդու և կապիկի մեջ կան վորոշ տարբերություններ։

Վորոնք են այդ տարբերությունները։ Որինակ, մարդն ուղիղ է բայլում, կապիկը կռացած է, բացի դրանից՝ գանգի, յերեսի կազմությունները տարբեր են. կապիկի ծնունները դուրս ցցված են, աշքերը շատ խորն են, ճակատը դուրս ընկած։

Այս բոլորից բացի կապիկները ծանոթ չեն կրակի գործածության, չունեն արտադրության գործիքներ, վոչ կացին, վոչ նետաղեղ և վոչ, իհարկե, դանազան տեսակի մեքենաներ։ Նրանք գործ են ածում միայն քարեր ու փայտե ձողիկներ։

Թվում եր, թե անհնարին եր գտնել մարդու մոտավոր ազգակիցները, բայց այն տեղերում, վորտեղ ապրում են կապիկները, որինակ, Յավա կղզին, գիտնականները պեղումներ կատարելիս գտել են այնպիսի վոսկըներ, վորոնք նմանում են մասամբ մարդու, մասամբ կապիկի կմախքին։

Կերարտադրելով այդ արարածի պատկերը, անվանեցին նրան «ուղիղ կանգնող», այսինքն այնպիսի կենդանի, վոր թեև նման է կապիկն, բայց ման և գալիս մարդու նման, ուղիղ կանգնած։

Անկասկած այդ կենդանին, վոր այժմ գոյություն չունի, շատ ավելի նման է մարդուն, քան կապիկը։ Բացի սրանից՝ քարանձավներում գտնվել են կմախքներ, շատ բաներով նման մարդկայինին, և նրանց արտադրության գործիքները՝ քարե կացիններ, նետեր (այն ժամանակ դեռ յերկաթ չկար)։ Մյուս կողմից նրանց կմախքը փոքր ինչ կռացած եր, ինչպես կապիկներինը, վոտի բութ մատը ջոկնվում եր, իսկ ծնուար դուրս եր ցցված։ Այս բոլորը ցույց ե տալիս, վոր այդ արարածն իր կողմության շատ կողմերով նման է յեղել կապիկներին, իսկ կենցաղով ավելի մոտ է յեղել մարդուն. այդպիսի մարդիկ շատ են գտնվում զանազան քարանձավներում, վորտեղ, ըստ յերեսության, ապրում եյին նրանք։

Մեր այս բոլոր պատմածներից կարելի յերգակացնել, վոր բոլոր կենդանիները ցեղակից լինելով իրար, ցեղակից են և մարդուն, վոր մարդը առաջ է յեկել ուրիշ կենդանիներից, հետզհետե փոփոխման յենթարկելով իր մարմնի կազմությունը։

Մարդը և աշխատանքը

Մարդու կազմվածքը մի բարդ մեքենա յե։ Մնունդը նրա վառելիքն եւ, Ստամոքսի մեջ այդ սնունդը յենթարկվում ե վերամբ-շակման։ Շունչ բաշելիս մենք ներշնչում ենք ողի թթվածինը*։ Մնունդային նյութերի միանալը թթվածնի հետ կատարվում ե այլ վելու միջոցով։ Մննդի նյութերը կազմվածքի մեջ այրվում են և առաջացնում ջերմություն։

Մարդը աշխատամ ե։ Նա պետք է աշխատի վոչ թե վաստակ ստանալու համար միայն. աշխատանքը մարդուն անհրաժեշտ առողջության համար։ Անգործ մնալուց մեքենան ժանգոտում է, իսկ մարդը նիհարում ու թուլանում։ Նրա մկանունքների շարժումները դառնում են գանդաղ։ Անգործությունը նույնըան վասակար է, վորքան վոր չափազանց ծանր աշխատանքը։ Աշխատանքը պետք է լինի կանոնավոր, վոչ հոգնեցուցիչ և կատարվի առողջության համար անվաս պայմաններում։

Բանգորի մկանունքները կարիք ունեն հանգստի լավ մննդի։ Մկանունքներն իրենց սնունդն ստանում են արյունից և շարժումները կատարում ջղերի ոգնությամբ։

Հետեւապես, հարկավոր է արյունին տալ լավ սնունդ։ Մեր ստացած կերակրի ոգտակար նյութերը, մարսվելով ստամոքսի մեջ և աղիքներում, խառնվում են արյունին։ Իսկ սիրտը և նրանից ճյուղավորված արյունատար անօթները սնունդ են տալիս մեր մկանունքներին, վոսկըներին, ներքին գործարաններին, ջղերին, դլմի և մեջքի ուղեղին, վորոնցից բաժանվում են գեպի զանազան կողմեր քոլոր նյարդերը։

Այդպիսով մենք տեսնում ենք, թե ինչ ահագին նշանակություն ունի արյունը մարդու կյանքի համար։ Առնասարակ լավ պայմաններում աշխատող մարդիկ, որինակ, մեծ շենքերում, վորտեղ թե լույսն է շատ, թե ողը, առույդ են և դեմքների գույնը լավ։

Մինչդեռ այն բանվորները, վորոնք հարկադրված են աշխատելու փոշոտ գործարաններում, վատ կերակրվելու, չափազանց հոգնելու, գունատ են ու նիհար։ Այդպիսիների մասին մենք սովորաբար ասում ենք, վոր նրանք արյան պակասություն ունեն։

Ինչու ողը այդշափ անհրաժեշտ է մարդու առողջության համար։ Ողը մաքրում է արյունը։ Փոքրիկ արյունատար անոթները միացած են թոքերի հետ։ Այնտեղ արյունը հանձնում է ողին մար-

* Թթվածինը շնչառության համար անհրաժեշտ ողի մի մասնիկն է։

մայց հավաքած ածխաթթվուտը և փոխարենը ստանում ե նրանից՝
թոքերի ներշնչման համար անհրաժեշտ՝ թթվածինը։ Իսկ յեթե
բանվորն աշխատում է փոշոտ գործարանում, փոշին թոքերի մի-
ջոցով մտնում ե արյունի մեջ և նրա միջոցով ել անցնում բան-
վորի մարմնի բոլոր մասերը ու թունավորում նրա կազմվածքը։

Առանձնապես աշխատանքի ծանր պայմանները վնասակար
ներգործություն են ունենում բանվորուհիների վրա հղիության և
էրեխաներին ծիծ տալու ժամանակաշրջաններում։

Մայրը թոքերով ներշնչելով ոդը, սնունդ ե մատակարարում
վոչ միայն իր մարմնին, այլ և յերեխալին, յերբ վերջինս դեռևս
գտնվում է մայրական արգանդում, և հետո յել, յերբ ծնվում է ու
ծծում մոր կաթը։ Մոր ստացած կերակուրը վերամշակվում ու
դառնում է կաթ յերեխայի համար։

Վատ սնունդը, անսաքուր ոդը, լուսի ու ջերմության պա-
կասը կորստարեր ներգործություն են անում մեր և յերեխաների
վրա։ Յերեխան ծնվելուց հետո պահանջում է յերկարատես խնամք։
Նույնիսկ մեծացող, հասակ քաշող յերեխան չպետք է աշխատի-
նրա վոսկրները դեռևս թույլ են, կազմվածքը չի ամրապնդվել,
վաղաժամ աշխատանքը կարող է այլանդակել նրան։

Յերբ են ավելի ուտում

Մի գիտնական իրան կշում եր թե մինչև ուտելը, թե ուտե-
լուց հետո, թե աշխատանքի ժամանակ, թե հանգստյան ժամին, թե
տաք, թե ցուրտ սենյակում, — և բոլորը գրի յեր առնում, թե յերբ
է պակասում, յերբ է քաշն ավելանում, կամ ինչքան ե ինքն ուտում
և ինչքան խմում։

Այդպիսի դիտողություններից պարզվել ե, վոր աշխատանքի
ժամանակ մարմնի քաշն ավելի յե պակասում, քան հանգստի ժամա-
նակ։ Իսկ այդ կորուստները փոխարինելու համար պետք է ավելի
ուտել։

Ամենքին հայտնի յե, վոր ձիուն ավելի շատ են կերակուրում,
յերբ աշխատում ե, և ավելի քիչ՝ յերբ անգործ ե։

Ամենքը զիտեն, վոր խիստ աշխատանքի ժամանակ բանող
մարդուն առատ և լավ կերակրել ե պետք։ Յերբ մարդ շատ ե աշ-
խատում, նրա սիրտն ել ուժեղ և արագ ե խփում, արյունը արագ
ե հոսում յերակների մեջ։ Նրա կուրծքն ավելի արագ և խորն ե
շնչում, քրտինքն ավելի առատ ե հոսում։

Յեթե ուզում ես, վոր ձին ավելի ուժեղ լինի և ավելի լավ
աշխատի, պետք ենրան ավելի լավ կերակրես։ Յեկ առածն ասում
ե։ «Ձին մտրակով մի քշի, գարով քշի»։

Գիտնականներն այն ել իմացան, թե մարդիկ ցուրտ ժամանակ
ավելի շատ են ուտում, իսկ տաք ժամանակ՝ ավելի սակավ։ Այս
ինչներ ցուրտ յերկրներում մարդիկ չափազանց շատ են ուտում, իսկ
տաք յերկրներում՝ քիչ։ Ասում են, վոր սամոյեղներն որական կես
փթի չափ միս ու ճարպ են ուտում։

Ճանապարհորդները պատմում են՝ ինչպես յերեք սամոյեդ,
առանց տեղից վեր կենալու, մի ամբողջ հյուսիսային յեղջերու յեն
կերել։ Կերակուրն այդ մարդկանց համար վառելիքի պես բան ե-
նա նրանց մարմնի տաքությունը պահում է։ Փայտը վառվելով տա-
քացնում է վառարանը, իսկ կերակուրը՝ մարդուն։

Դուք կասեք, վոր տաքությունը կարելի յե մարմնի մեջ պա-
հել, յեթե մարդ տաք հագնվի և ապրի տաք բնակարանում։ Այդ
ձիշտ ե, և դրա համար ել, վորքան տաք են բնակարանն ու հա-
գուստը, այնքան մարդիկ սակավ են ուտում։ Զուր տեղը չե, վոր
ցուրտ յերկրների բնակիչներն այնպիսի տաք զգեստներ են հագ-
նում։ Տաք մուշտակը մարմնի համար նույն բանն ե, ինչ վոր տան
համար պատերը։ Յերբ պատերը ձեղքեր չունեն և տաքություն
դուրս չեն թողնում, մենք վառարանը փայտ քիչ ենք դնում։ Յերբ
տունը ձեղքեր ունի և շուտ ե ցրտում, մենք փայտ շատ ենք բա-
նեցնում։ Յեթե սամոյեղներն այնպիսի տաք հագուստներ չունե-
նային, ավելի շատ կուտեյին։

Մի զուղացու ախոռը ցուրտ եր։ Ախոռում ձեղքեր կային։
Այդ ձեղքերը կարելի յեր մամուռով խցկել ու կավով սվաղել, և
ախոռը ավելի տաք կլիներ, բայց զյուղացին այդ չեր անում։

Նրան հարցրին, թե ինչներ յե ախոռը ցուրտ պահում։

Գյուղացին պատասխանեց. «Յուրատ ժամանակ տավարն ավե-
լի առողջ ե լինում—ցուրտ ժամանակ շատ ե ուտում»։

Վոր ցուրտ ժամանակ տավարն ավելի առողջ ե լինում՝ այդ
ձիշտ չե, վոր ցուրտ ժամանակ տավարը շատ ե ուտում՝ այդ ձիշտ
ե։ Բայց զրանից տերը վոչ թե ոգուտ ունի, այլ վնաս։ Յեթե այդ
գյուղացին ձեղքերը մամուռով խցեր և կավով ել սվաղեր, նրա
տավարը ավելի քիչ կուտեր և ավելի առողջ կլիներ։

Միկրոբներ

Մեր աչքերը թեև շատ բաներ են տեսնում, բայց նրանք չեն լարող տեսնել ամեն ինչ։ Աշխարհիս յերեսին գոյություն ունեն միլիոնավոր կենդանիներ, վորոնց մենք չենք կարող տեսնել առանց խոշորացուցի։

Մենք այդ կենդանիներին գիտենք, վորովհետև տեսնում ենք, թե ինչ են անում նրանք։ Այդ կենդանիները այնքան մանր են, վոր նրանց մենք սովորական աչքով չենք կարողանում տեսնել։ Նրանց միկրոբներ են անվանում։

Միկրոբների մեծամասնությունը վոչ պատ են բերում և վոչ ել ոգուտ։ Կան հազարավոր բազմատեսակ միկրոբներ, վոր մեր լավ բարեկամներն են հանդիսանում, կան և հազարավոր ուրիշներ, վոր մեր ամենավոխերին թշնամիներն են։

Յեթե հօտում ե միսը, թթվում կաթը կամ բորբոսնում ե հացը—այդ բոլորը միկրոբների գործն ե։

Խնձորը փոտում ե, յերբ նրան քաղում են ծառից, խաղողի շիճուկը գինի կամ քացախ ե դառնում շնորհիվ դարձյալ նույն միկրոբների։

Յեկ այդ միկրոբներն այնքան յեռանդուա են ու այնքան բաղմաթիվ, վոր մի կտոր փչացած մսին կամ փտած խնձորին համարձակ կարելի յե ասել միկրոբների թագավորություն, վորովհետև այնտեղ բուն դրած ապրում են միլիոնավոր միկրոբներ և աշխատում ամենայեռանդուա կերպով։

Միկրոբները շարժվում ու բազմանում են սարսափելի արագորեն և բնակություն են հաստատում այնպիսի տեղեր, ուր իրենք հարմար են տեսնում։

Միկրոբները ավելի արագորեն բազմանում ու բայքայիշ աշխատանք են կատարում ավելի տաք տեղերում, քան ցուրտ, և այդ պատճառով, յերբ հարկավոր է լինում, վոր կաթը յերկար ժամանակ մնա քաղցրահամ, նրան դնում են ցուրտ տեղ, սառուցի վրա։

Պետք ե նկատել, վոր միկրոբները սառչելուց չեն վոչնչանում, ընդհակառակը, նրանք ամենաղաժան ցուրտը ավելի լավ են կարողանում տանել, քան ամենաառողջ մարդը։ Բայց կարեռը այս յերեւութի մեջ այն ե, վոր թե սառչելուց միկրոբները չեն վոչնչանում, չեն ել կարողանում բազմանալ և իրենց ավերիչ գործը տեսնել։

Թվում ե թե, յերբ միկրոբները կարողանում են դիմանալ ամենասոսկալի սառնամանիրին, նրանք կարող կլինեն դիմանալ նաև

առաքությանը։ Բայց իսկապես այդպես չե։ Կրակը, ինչպես և յեռացող ջուրը, վոչնչացնում ե միկրոբներին, վորի մեջ, իսկապես վոր, կայանում ե մեր բախտավորությունը։

Ամեն ժամանակ, յերբ մենք շնչում ենք, հազարավոր միկրոբներ ենք կուլ տալիս ողի հետ միասին։ բացի դրանից, յերբ մենք կերակուր ենք ուտում կամ մի բան խմում, նրանց հետ բազմաթիվ միկրոբներ ենք ներս ընդունում մեր ստամոքսը։

Միկրոբներ նույնապես հավաքում ենք մեր ձեռքերի և յերեսի վրա, յերբ մենք նրանցով կպչում ենք վորեւ իրի։ Թեև միկրոբներից շատերը մեզ միմիայն բարիք են անում, բայց շատ-շատերը մեծ մասնիւ են հասցնում։

Միկրոբները կարող են առաջ բերել մեջ աչքի բորբոքում, տիֆ, թոքերի բորբոքում և շատ ուրիշ հիվանդություններ, վորոնց թվելը նույնիսկ դժվար ե։

Այդ հիվանդությունները մեզ մեծ տանջանքներ կարող են պատճառել, անկողին գցել, նույնիսկ մեռնել։

Միկրոբները մեր ամենափոքրիկ, բայց ամենաառժեղ թշնամիներն են, և մենք պետք ե իմանանք՝ ինչպես պետք ե պաշտպանվել նրանցից։

Թագավորի դինվորը

Աղի արցունք եր թափում «նանը», յերբ վորդուն զինվոր եյին առանում։ Հառաջում, վողբում եր «նանը», վորովհետև սիրու ցավում, մղկում եր։

Ախր ինչու փտել զորանոցներում։ ում համար և ինչ նպատակով արյուն թափել։

Ստիպում եյին զինվորներին կովել ներքին թշնամիների գեմ։ Յարական ստոր ժանդարմներն ու հու կամակատարները հարկադրում եյին բանվորի և գյուղացու վորդուն կրակ բանալ իր իսկ հարազատների գեմ։

Դաժան գեներալների պատժիչ զորախմբերը քշում եյին խեղճ զինվորներին հեռու, անծանոթ վայրեր, վորպեսզի արյան մեջ խեղճ զեն բանվորի և գյուղացու ըմբոստացումները։

Իսկ ինչ եր սպասում զորանոցում մուրճ ու մանգաղից կալը ված պատճանուն։

— Տուրուղմիոց։

Միթե զինվորը մարդ եր կամ մարդատեղ եր դրվում. նա ռանցան անասուն» եր:

Հիշում եք հրապարակների, հասարակական տեղերի ցուցանակները.

«Զինվորների ու շների մուտքն արգելվում ե»...
Տրամփայների գրությունները.

«Զինվորներին թույատրվում ե կանգնել միայն առաջին և յետի բաժանմունքներում»:

Ապրանքատար վագոնների վրա գրվում եր՝ տեղափորվում էն «8 ձի կամ 40 զինվոր»:

Իսկ ճվ եր մտածում զինվորների կրթության մասին: Յեվինչու պիտի մտածեցին: Կրթված զինվորը հին կարգերի աչքի փուշն եր:

Նրան միմիայն սովորեցնում եյին.

— Ովքե՞ր են պետության ներքին թշնամիները:

— Զնուղները, ուսանողներն ու սոցիալները:

— Ո՞վ ե պետության գլուխը:

— Թագավոր կայսրը:

Իսկ ինչպես եյին վարվում զինվորի հետ. — տանջում, չարչարում եյին որնիբուն:

— Յերկու ժամ վագել տեղում:

Յեվ այս ամենը կատարում եյին խեղճ զինվորները ահագին պայուսակը շալակած, ավազով ու խիճով լցրած:

Յեվ գիտե՞ք ինչու համար:

Պատիվ չի տվել մեծավորին կամ սրա նման մի ուրիշ բան:

Ինարկե, այս բոլորը համեմատած եյականի հետ՝ հասարականմեր բաներ եյին. գլխավորն այն եր, վոր զինվորը նպատակ չուներ, նա վոչ թե իր հեռավոր տունն ու ոջախն եր պաշտպանում, իր քույրերին ու յեղբայրներին...

Վոչ, նա կովում եր «թագավորի և հայրենիքի» համար, նա կովում եր կալվածատերերի, բուրժուաների, իր վրխերիմ թշնամիների իշխանության համար:

Անա այսպիսի աննպատակ ու անասնական կյանք եր վարում նախկին զինվորը, «նորին մեծությունների ու գերազանցությունների» գոենիկ ու տգետ միջավայրում...

Կարմիր զինվորը

Այդպես չե այժմ:

Այժմ կարմիր զինվորը հավասար քաղաքացի յե խորհրդային հանրապետությունների: Ամբողջ յերկիրը սիրով ու գուրգուրանքով ե վերաբերվում կարմիր զորանոցին:

Մի մտե՞ք յերեկոները զորանոցը:

Այստեղ, այստեղ, սեղանի մոտ, ընթերցարանում, թախտի վրա զբաղված են յերիտասարդները. վորը գրում ե, վորը կարդում:

Շատերն առաջին անգամն են կարդում՝ գիր կապելով: Կարմիր բանակը՝ կյանքի և պայքարի դպրոց ե:

Կարմիր բանակն ավերիչ հարվածներ ե հասցնում անգրագիւղությանը:

Կարմիր բանակը սերտ կապված ե բանվոր դասակարգի հետ... Տոն որերին գալիս են շեֆերը, փայլում են բանվորուհիների դեմքերը ժպտով, կարմիր թշակինակները փողփողում են, ընկերաբար ձեռները սեղմում՝ կոռւմ կոփվում ե մուրճի, արորի և հրացանի ամուր դաշինքը:

Յերբեմն ամենահասարակ ընծան՝ թուղթ, մատիտ, բլոկ-նոտ՝ անհուն բերկեանք ու հրճվանք են պատճառում: Մեծ ե ժողովրդի սերը դեպի իր զինված վորդիները:

Իսկ յերեխաների ընծաները կարմիր զինվորներին:

Ի՞նչ արժե մանկական այդ մաքուր, անդաման սերը:

Անսպառ ուրախություն ե տիրում, յերք մանուկները հյուր են գալիս «Կարմիր բանակին»:

Ո՞վ կարող ե տոն որերին մոռանալ կարմիր զինվորին: - Վոչ, վոք:

Կուլտուրան անսպառ աղբյուրով մտնում ե կարմիր բանակ:

Գնացեք քննությանը՝ ձեր առաջ կբացվի մի ուսանելի տեսարան:

Ամեն մեկը լավ պատասխաններ ե տալիս:

— Ի՞նչպես պետք ե հրամանը կատարել:

— Առանց տատնեման, բայց զիւակցարաց:

Յեթե կարմիր զինվորը անգրագետ ե, հեռանում ե իրեն զրագետ, լայն աշխարհայացքով, գրքերի սեծ կապոցով և սաեղծագործական արթնացած կարողություններով:

Կարմիր բանակը՝ կուլտուրայի ոչախ ե:

Կարմիր բանակը՝ խաղաղության գրավականն ե:

Ով այսոր կարմիր բանակն ե մտնում, նա արժանանում է սիրութիների մեջ:

Կարմիր զինվորի յերգը

Յես զինվոր եմ կարմիր յերկրի,
ճակատու բաց ու հպարտ,
սուլու կարմիր, կտրուկ ու հաղթ
ու սվինս միշտ անպարտ:

Ճակտիս աստղը՝ հավերժ փայլուն,
ճամպես լուս ե և ուրախ,
ու յետես՝ շարքեր կանգուն.
—Դեպի առաջ, դեպի կյանք:

Դրոշը իմ ծածանվում ե
կապուտներում լայնարձակ.
—Առաջ, առաջ... ֆնում ենք մենք
դեպի կարմիր հաղթանակ:

Ինչու յե մեզ հարկավոր մշտական բանակը

«Հողը՝ գյուղացիներին, ֆաբրիկաները՝ բանվորներին, խաղաղություն՝ ամբողջ աշխարհին»:

Այդպես հայտարարեցին կոմմունիստ—բայլշեիկները սրանից հինգ տարի առաջ: Այդպես ե նույնպես մեր Հանրապետության չիմական Որենքի՝ Սահմանադրության իմաստը:

Յեվ իսկապես, հողը անցել ե գյուղացիներին ոգտվելու համար, բացառությամբ աննշան մասի, վորով վերցրած ե խորհրդային տնտեսությունների համար և կառավարվում ե դարձյալ բանվորաց յուղացիական իշխանության միջոցով:

Ֆաբրիկաներում տեր ու տնորեն ե դարձել բանվորը: Բոլոր գլխավոր ֆաբրիկաները, գործարանները, հանքերը և բոլոր յերկաթուղիները հայտարարված են բանվորաց յուղացիական պետության սեփականություն, նրանց կառավարում են բանվորները պատգամավորական խորհուրդների ու նրանց մարմինների միջոցով:

Իսկ յերբ ե լինելու վերջապես «խաղաղությունը՝ ամբողջ աշխարհին»: Յերբ պիտի վերջանան պատերազմներն ու պառակտությունները:

Անա այդ ե, վոր մեղնում դեռ չկա: Հապա ինչու համար խորհրդային իշխանությունը հարյուր-հազարավոր մարդիկ ե պոկում

խաղաղ աշխատանքից ու պահում զորանոցներում: Ինչու մենք, բանվորներս ու գյուղացիներս, ստիպված ենք պահել զենքի տակ այդշափ ժողովուրդը:—

Հենց այն միակ պատճառով, վոր մեր յերկրում հողը ամբողջապես գտնվում ե գյուղացիների ձեռքում, ֆաբրիկաները՝ բանվորների, և բոլոր իշխանությունը՝ գյուղացիների ու բանվորների մոտ: Այդ բոլորից հետո ինչպես չզայրանային պարոնայք կալվածատերն ու կապիտայիստները: Յեվ նրանք լարել ելին իրենց ուժերը հին կարգերը վերականգնելու համար, վորպեսզի նորից տրորեն իրենց վոտների տակ աշխատավոր ժողովուրդը:

Սակայն նրանց սեփական ուժերը քիչ ելին: Յերկու-յերեք ամսվա մեջ նրանց գեներալական բանդաները ջարդվեցին մեր կարմիր գվարդիայի կողմից:

Այդ ժամանակ նրանց ոգնության հասան արտասահմանյան կապիտալիստները:

Իսկ դրանք ինչ են ուզում: Արտասահմանյան կապիտալիստներն ել մեծ վնասներ կրեցին Ռուսաստանում բանվորաց յուղացիական հեղափոխությունից: Շատ ֆաբրիկաներ, գործարաններ ու հանքեր Ռուսաստանում պատկանում ելին ոտարերկրյա կապիտալիստներին: Կալվածատիրական հողերից շատերը գրավ ելին դրված նրանց բանկերում: Քիչ դրամ չեն տվել պարտք արտասահմանյան կապիտալիստները ցարական ու բուրժուական կառավարություններին: Պատեները ցարական ու բուրժուական կառավարություններին: Պիրագմից առաջ, եղած պարտքերը մոտավորապես հասնում են 8 միլիոնմից առաջ, եղած պարտքերը՝ 6 միլիոնից: Ընդամենը իր հաշվելով բուրժուազիան ուզում եր մեզնից պոկել 20 միլիոնմից ավելի վոսկի ուուրիներով:

Խորհրդային իշխանությունը առանց վորևե վճար տալու խլեց այդ ֆաբրիկաները, գործարանները, հանքերն ու հողերը: Խորհրդային իշխանությունը հրաժարվեց վճարել արտասահմանյան բանկերին ցարական պարտքերը:

Մեր հեղափոխությունը հարված հասցրեց արտասահմանյան կապիտալիստների գրաններին: Անա դրա համար ել նրանք ատում են խորհրդային իշխանությունը:

Յեվ դարձյալ նրա համար են ատում ոտարերկրյա հավշտակիչ-ները խորհրդային իշխանությունը, վորովիետն նրանք վախենում են, թե մի գուցե իրանց լորկությունն ել քաղաքի և գյուղի չքավոր դասը որինակ առնի ոռւսական բանվորներից: Զե վոր այն ժամանակ ամբողջ աշխարհի կապիտալիստների վախճանը կլինի:

Հոգնածությունը հաղթում եր Շուշանին։ Նրա աչքերն ուզում՝
ելին փակվել, բայց նա ուժ եր անում լսելու։

— Այսորվա տոնի նպատակն ե, — շարունակում եր ճառախոռ-
ում, — ազատել կնոջն ընտանեկան ստրկական վիճակից, տնային հոգ-
սերից։

«Այս, ուր եր», մընջաց Շուշանը, և նրա մտքերը թուան քըռջ
տունը, իր Սուրբիկի մոտ։

— Ռուսաստանում առաջին անգամ, — շարունակեց ճառախոռ-
ում, — փորձեցին տոնել այդ որը 1913 թվին, բայց ճառախոռներին
բոնեցին։ Նույնը պատահեց նաև 1914 թվին. ցարական կառավա-
րությունը բանաարկեց Սամոյլովային և նիկոլայևային։ 1917 թվին
այս որը աշխատավորուհիները փողոց դուրս յեկան «հաց և ազա-
տություն» պահանջով։

«Հաց, ազատություն», կրկնում եր Շուշանն անգիտակցաբար։
Նրա կոպերն ավելի և ավելի ծանրանում ելին։

— Խորհրդային իշխանությունը փշրեց բնաության բոլոր շըդ-
թաները, — ասում եր ճառախոռը։ — Այժմ աշխատավոր կինը հավա-
սար ե տղամարդուն։ Նա ազատ կերպով տոնում ե իր Միջաղգային
որը։ Նա կուլտուրապես ել համնելու յե տղամարդին։ Նա միանա-
լու յե համաշխարհային պլողետարիատին և ընդհանուր ուժերով
ջախջախելու յե կապիտալիզմի հիքերն ու հաստատելու սոցիա-
լիզմի, կոմմունիզմի տիրապետությունը։

Շուշանի աչքերը վաղուց փակվել ելին։ Նա քնի մեջ կցկառու-
բառեր եր արտասանում։

— Սպասիր, Սուրբիկ ջան, ճաշից հետո հաց կրերեմ...

Ինչ զոր շշնջուն բարձրացավ Շուշանի մոտ նստած բանվորու-
հիների մեջ։ Ճառախոսի աչքերն ուղղվեցին դեպի այն կողմը, և նա
նկատեց քնած Շուշանին։

«Նայեցեք այս կողմը, — ուղղեց նա մատը դեպի Շուշանը։ —
Վարքան այդպիսի բանվորուհիներ են տանջվում ընտանեկան հոգ-
սերով։ Գործարանային 8 ժամ աշխատանքից հետո նրանք շարու-
նակում են իրենց աշխատանքը տանը մինչև ուշ գիշեր և այդպես
հոգնում, ուժից ընկնում։

«Մարտի ութի նպատակն ե ազատել բանվորուհուն այդ մաշող
տնային աշխատանքից։ Հասարակական ճաշարաններ, լվացքատուն,
մսուր, մանկատուն... ահա ինչ պիտի տա մարտի ութը։

«Բանվորուհին պիտի ազատվի ոջախից, լվացքից, որորոցից, նա
ազատ ժամանակ պետք է ունենա, զոր ժողով, ընթերցարան, գրա-
դարան, ներկալացում հաճախի, կրթվի, զարգանա, լուսավորվի։ Այդ
ե մարտի ութի նպատակը, դա յե աշխատավոր կնոջ Միջաղգային

տոնի նպատակը։ Կեցցե աշխատավոր կինը, կեցցե նրա Միջաղգա-
յին որը։

Բուռն ծափահարություններն արթնացըին Շուշանին։ Խեղճը
շվարած կանգնեց և յերկար, ապշած նայում եր չորս կողմը։

Սակայն ընկերուհիները շտապով մոտեցան նրան, հանաք ու ծի-
ծաղով մոռացնել տվին անհարմար դրությունը։ Շուշանի ձայնն ել
միացավ «Խստերնացիոնալ»-ի հնչյուններին, և բոլորը միասին դուրս
յելան դահլիճից։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

(Նմանություն)

Նույնիսկ չի լսվում
շների ձենը.
Խաղաղ ու հանգիստ
քնած ե շենը։

Զիթի ճրագն ե
միայն ճարճատում
իր աղոտ լուսով
մի հին խրճիթում։

Չնայած իրա
ձերմակող մազին՝
քուրսու տակ նստած
գեղջկուհի ազին՝

գրիչը ձեռքին
թուղթն ե խզմզում,
եղ տարիքի մեջ
զրել սովորում։

Հոգսերով լիքն ե
թեև գեղջկուհին,
բայց թե զրելուն
տալիս ե մեծ զին։

Նա հասկացել ե
անցյալն ու ներկան.
մի կերպ ճարել ե
մի հին քերեկան։

Չմոան գիշերը
նստել ե արթուն՝
ամուսնուց ծածուկ
գրում ե, կարդում։
Շատ դժվար հարց ե. —
հա մարդն ե փնչում,
լացկան մանկիկը
հանգիստ չի ննջում։

Նա խիստ ուզում ե
դառնալ գրագետ.
բայց միտքը թույլ ե...
կովի գրքի հետ։

— Քնիր, ա կնիկ,
հերիք ե կարդաս.
դու որ ծերության
տերտե՞ր պիտ դառնաս։

Խնդրելով մարդուն,
կաթ տալով վորդուն,
մեր գեղջուկ ազին
զրում ե կարդում։

Գիտության լույսն ե
գյուղում ճառագել,
գեղջուկ պարզ հոգին
նորով վարակել։

Մանիշը

Արեն արդեն մայր եր մտել, յերբ Մանիշը տուն վերադարձավ ժողովից:

— Եղ վճր ջնանամից ես գալիս, — լսվեց սկեսուրի կոպիտ ձայնը, — յերեսիդ աբուռ չունես. չինչ են կապ-կտրած Աշխենի խելքով ես ընկել:

Մանիշը լուռ եր. նրա սիրտն արագ-արագ բարախում եր. նա ամբողջ մարմնով դողում եր:

— Դե, դե, ներս կորի, ինչ ես ցցվել կանգնել. հրես տղամարդիկ կգան:

Մանիշը յերեսը շուռ տվեց ու լուռ ներս մտավ սենյակը. Նա շափազանց հուզված եր. ձեռները վոչ մի գործի չեյին կպչում:

Նախիրն արդեն հանդից վերադարձել եր: Յեկավ նաև Մանիշի ամուսինը — Ապոն:

— Հը, ախչի, Մանիշ, ինչ ես քիթդ կախել. ասում են՝ եսոր կնանոց ժողով եյիր գնացել, համա... դե, չըլեմ շիմանամ, վոր դու մեկ ել ժողովի գնաս: Մենք նամուսով ժարդիկ ենք. եղ տեսակ բաներ չենք տանի. լսում ես, — գոռաց Ապոն, նստելով քուրսու վրա: — Դե, դե, յեկ վոտնամաններս հանի:

Մանիշը շոքեց Ապոյի առջև, վոր վոտնամանները հանի. բայց մի ծանր բան ճնշում եր նրան: Նա ուզում եր ճշալ, գոռալ, վոր այդպես չի կարելի, վոր ինքն ել մարդ ե:

Բայց ճախը խեղդվեց կոկորդում...

Գիշեր եր. Սկեսուրն ու ամուսինը քաղցր քնի մեջ խոմիում ելին: Բայց Մանիշի աչքերին քուն չեր գալիս: Ժողովում խոսածները, սկեսուրի ու Ապոյի կոպիտ վարմունքը հրդեն ելին վառել նրա հոգում: Նա անհանգիստ շուռումուռ եր գալիս անկողնում: «Յերբ պետք ե ազատվեմ այս լծից. չե վոր դեռ տասնյոթ-տասնութ տարեկան ջահել կին եմ: Կյանք, լույս, ազատություն», — հեկեկում եր նա գիշերացին խավարի մեջ:

*
**

Զմեռվա որերից մեկն եր: Մանիշը չոքած թոնրի առջև հաց եր թխում, սկեսուրն ել նստած բուրդ եր մանում:

— Մանիշ, Մանիշ, — դրսից բարձր կանչելով ներս մտավ Աշխենը: Ախչի, վնրանեղ ես, ժողովի չեյիր յեկել: Քեզ զյուզի խորհրդի անդամ ընտրեցին... յերեք կին անցկացրին: Լավ կաշխատես, տես, յերեսներս պարզ արա...

— Եղ եր պակաս, վոր հիմի յել տղամարդկանց հետ նստենք վերկենանք, — բղավեց Մանիշի սկեսուրը: — Ել վոչ ամոթ ե մնացել յերեսներիդ, վոչ աբուռ. ամեն ինչ զոտի տակ եք տվել:

— Եհ. դուք՝ պառավներդ եղպես ապրել եք, եղպես ել պտի մեռնեք, մեզ ջահիներիս համար նոր ե ծագել կյանքը: Եհ, յես գնացի, Մանիշ ջան, ուշք մի դարձնի, ինչքան ուզում են փնթփունթան, — ասաց Աշխենը Մանիշի ականջին ու դուրս գնաց:

— Ինչ լավ, ինչ լավ. — կրկնում եր ինքն իրեն Մանիշը առանց լսելու սկեսուրի մըթմըթոցը: — Ինչ ուզում են ասեն. յես կգնամ խորհրդի մեջ կաշխատեմ ու ցույց կտամ, վոր կինն ել կարող ե աշխատել: Մանիշն այնքան տարվել եր իր մտքերով, վոր չնկատեց, թե ինչպես Ապոն ներս մտավ:

Պառավն Ապոյին տեսնելուն պես խելագարի նման վրա վագեց և ձեռներով ճնկներին խփելով.

— Տններս քանդվեց, բալա ջան, — բղավեց, — հերիք չե, վոր Մանիշը կնանոց ժողով ե գնում, հիմի յել ուզում ե տղամարդկանց

— Հա, ախչի, — աչքերը չոելով գոռաց Ապոն, — են աննամուս Աշխենը դրուստ վոր քեզ ճամպից հանել ե: Մեկ ել վոր նրան ես տեղ տեսա, քեզ կսպանեմ. լսում ես, թե չե:

Յեկ մինչ Ապոյի բոռնցքը դեռ ճոճում եր ողում, Մանիշը ճշաց դողդոջուն ճախնով.

— Սխալ եք, Աշխենը նամուսով ե. նա վոչ մի մեղք չունի: Ինձ գյուղն ընտրել ե, և յես պարտավոր եմ աշխատել. սրա մեջ վոչ կատ բան չկա: Դու վոչինչ չես հասկանում, վորովհետև վոչ մի վատ բան չկա: Դու վոչինչ չես գնում. դրա համար ել մութն ես մնացել:

Ապոն խոսք չեր գտնում ասելու. նա բարձրացրեց ձեռը և ուզեց խփել Մանիշին:

— Թող, հեռացիր, — հպարտ բացականչեց Մանիշը յետ մղելով Ապոյին. — անցել են այն ժամանակները, յերբ կնոջը կարելի յեր վիրավորել և ծեծել: Խելքդ գլուխդ ժողովիր, աչքերդ բաց արա, նայիր շուրջդ և տես նոր կյանքի պալծառ շողերը:

Ապոն բոռնցքը ցած թողեց և լուռ ու մտախոն դուրս յեկավ սենյակից:

Նոր կյանքի շեմքին

Մեր նոր կյանքի պայծառ շեմքին
ալ մեխակներն են բացվում,
և թափապատ, կանաչ հովտին
ուրախ գարունն ե ժպտում:

Հին դարերի ստրկության
անարդ լուծը փշրելով՝
դեպ լուսաշող նոր ապագան
մենք դիմում ենք վառ հուսով:

Դե, յել, քնայր իմ, յեկ, միացիր
մեր ալ կարմիր դրոշակին.
հերիք քնես, շուտ սթափիկը
ուժեղ կովի վեհ ժամին:

Յերկուշաբթի

(Սոտիկ անցյալից)

Թանձր մշուշի մեջ կորած ե ամբողջ Բալախանին: Տոթ ե. մուխը,
կարծեք, ճիգ ե թափում վեր բարձրանալ, բայց հուսահատված՝
քանի գնում, ավելի յե թանձրանում: Մըի փոքրիկ հատիկները թրոշ-
կոտում են ողի մեջ: Վիշկաները տիուր սեռոված, կասես կուչ են
յեկել, փոքրացել: Ամեն կողմից իրար են խառնվել կանչերի ձայ-
ներ, Գոլորշին խողովակներից հեալով դուրս ե վիժում: Փողոցնե-
րում անցկացրած խողովակներից մազութը խփում ե պատերին,
հուսահատ ձայներ հանում, մի վայրկյան լուսում և նորից նույն յե-
անդով խփում ու առաջ ե սահում:

Առավոտ ե: Արել կամաց-կամաց բարձրանուժ ե, մառախուղը
հետզհետե նոսրանում: Տեղ-տեղ նորահարսերի նման սպիտակին են
տալիս չայրվող վիշկաները, վորոնք այդ սկ շրջապատի մեջ շոյում
են մարդու նյարդերը: Յերեմն զանազան ծայրերից լսվում են ուշ
մասցած կանչերի ձայները, վորոնք դողալով, վախվիելով, լալկան
ձախներ են հանում, լուսում ու նորից տեղի տալիս ճնշող, խոռո
դղբդոցին:

Յերկուշաբթի յե: Նավթահանքերում կյանքը մի լարված մե-
քնայի պես պատվում ե, մարդիկ վոտից մինչև զլուխ շաղախված

մազութի մեջ, տեսդու յեռանդով վխտում են մեքենաների, վիշ-
կաների շուրջը:

Նավթահանքերից առանձնացած ընկած ե Սաբունչի գյուղը,
նեղ, ծուռումուռ, կեղտոտ փողոցներով: Համարյա ամեն մի քայ-
լափոխում պատահում են ուռած դեմքերով մարդիկ: Նրանք որոր-
վելով դիմում են դեպի ողետուն, վորտեղից լսվում են խմողների
խոպոտ ձայները: Ողեանից վոչ հեռու, պատերի տակ՝ փողոցի մի-
ջում թափթփկած են ալլանդակված դեմքերով մարդիկ: Դեմքի մի
մասը թաղված գարշահոտ ցեսի մեջ, կիսաբաց ուռած շըթունքնե-
րից մի ինչ-վոր հեղուկ ե ծորում:

Յերկուշաբթի յե: Ողետունը շարունակ լիքը: Դուրս են գալիս,
մտնում: Յուղոտ սեղանների առաջ նստած են նրանք: Սեղանների
վրա զրված ե ողի, մի կտոր սկ հաց, մի ափսեցի մեջ թթու դրած
վարունդ կամ աղի ձուկ: Բոլոր սեղանները բռնված են. բոլորի
առաջ նստոտած են մարդիկ՝ կաշվի նման սկ, փայլուն շորերով,
դեմքերը, մազերը, ձեռները կեղտոտ, մըոտ:

Ողետունն ել իր հաճախորդների նման կեղտոտ ե: Հատակի
զրա մի մատնաչափ կեղտ, վորը յերեկ տարիներով չի մաքրված:

Սեղաններից մեկի մոտ, ձեռները կրծքի վրա ծալած կանգնած
եր նիհար, հիվանդ դեմքով, մոտ 27 տարեկան մի կին: Նա անթարթ,
լու նիհար, հիվանդ դեմքով, մեկի վրա, վորը առանց ուշք դարձը-
լուս նայում եր նստածներից մեկի վրա, վորը առանց ուշք դարձը-
լուս մեկը մյուսի լետեկում եր ողու բաժակը ու խըռ-
պոտ ձայնով մի ինչ-վոր կտոր յերգ յերգում:

— Գնանք... յերկշոտությամբ ասաց կինը՝ դառնալով նըան:
— Բավկական ե, գնանք,—աղաչելով կրկնեց նա, քաշելով նըա

թեկից:

— Կորիր գլխից, — առանց նայելու նըա վրա, գոռաց նա՝ ողու-
քաժակը ամուր խփելով սեղանին: — Փողերը իմս են, յես եմ աշ-
խատել, ինչ կուզեմ, կանեմ... Արի դու յել խմիր... խմիր:

Նա լցրեց բաժակը և կանգնելով մոտեցավ կնոջը:

— Առ, խմիր:

— Յես չեմ ուզում, կորցրու:

— Յես հրամայում եմ. յես քո մարդն եմ, դու իմ կինն ես,

թե չե. ամուսինդ հրամայում ե, պետք ե խմես...

— Խմիր... խմիր... ձայնակցեցին սեղանակիցները հոհուլով:

— Անիծվեք դուք... անիծվեք... արցունքները սեղմելով մղկտաց
նա՝ հրելով իրանից բաժակը:

— Զես ուզում... յես ինքս կսմեմ... իսկ դու ունդ... թե չե կը-
ջարդեմ, — բոռնցքը սեղանին խփելով վորոտաց նա, նստելով տեղը:

— Հո... հո... հո,—գոռաց հարևան սեղանի մոտից մեկը կանգնելով:

— Կորիր այստեղից, թե չե կջարդեմ...

— Ամաչիր, մարդ ես, յերեխայք ունես, տանդ հաց չկա...

— Զհանդամը ձեր գլուխը... ուղ, շան աղջիկ, թե չե ատամ-ներդ փորդ կթափեմ:

Կինը վախեցած մի քայլ յետ գնաց, նայեց նրան, շրթունքնե-րը դողացին, գեմքը ծամածովեց, արցունքները սկսեցին հոսել նրա գունատ այտերի վրայով:

— Դու... դու... մկմկաց նա և ել չկարողացավ շարունակել, Արցունքները խեղդեցին նրա ձայնը, և նա արագ դուրս գնաց:

— Եյ... կես շիշ ողի...

Յերկուշաբթի յե, ծանր որ. այսոր շատերն են խմում, շատերը գործի չեն գնացել, հինգ որ անընդհատ աշխատել են, կիրակի խմել, խկ այսոր թարմանում են:

Խմում են ողետներում, խմում են փողոցներում, խմում են իրանց տներում: Յերկուշաբթի Սաբունչիում ամեն տեղ խմում են: Հետո ելի կսկսվեն աշխատանքի ծանր որերը՝ սև փողեր աշխատե-լու, վոր կիրակի նորից խմեն, մոռանան շաբաթվա ծանրությունը:

Յերկուշաբթին ծանր որ ե: Խսկ մնացած որերը ավելի ծանր:

Մի որավար հող

(Ծորտատիրական անցյալից)

Սոնան և իր ամուսին Մարտիրոսը աղքատ գյուղացիներ ելին: Ունեյին-չունեյին՝ մի զուգ այծ, վորոնց կաթնով ապրում ելին, մի ճախարակ, վորով Սոնան բամբակի թելեր եր մանում վաճառքի համար, և մի բան, վոր ամեն որ վաղ առավոտյան Մարտիրոսն ուսին դրած՝ գնում եր գյուղամեջ և այնքան վիզը ծուծ կանգնում, մինչև վոր դրացիներից մինը, միքանի արասի վճարելով, վարձում եր նրան և ամբողջ որը բանեցնում իր դաշտում:

Այդպիսի դառն աշխատությամբ դարձաւ գոհ ելին նրանք, յերը կարողանում ելին իրենց խրճիթի մեջ հանգիստ բուն վայելել: Իսկ այդ բախտը խիստ սակավ եր աշողվում նրանց:

Նրանց գյուղն ուրիշ շատ գյուղերի հետ պատկանում եր մի պարսիկ խանի, վորի վորդին—Ռիզա-բեկը հոր մահից հետո կա-ռավարում եր նրա կալվածները:

Մի որ Մարտիրոսին իր մոտ կանչեց գյուղատեր խանի վոր-դին—Ռիզա-բեկը:

Յերկուշաբթից խեղճ գյուղացու շունչը կտրվեց մինչև խանի վոր-դու մոտ համսելը, բայց տեսնելով նրա ուրախ գեմքը, ազատ շունչ քաշեց ու մինչև գետին խոնարհվելով՝ յերկրպագեց նրան:

— Ինչով ես պարապում, Մարտիրոս,—հացըրեց Ռիզա-բեկը:

— Աղքատի պարապմունքն ինչ պետք ելինի, աղա, վոտացդ մոխիր դառնամ. որ դադում եմ, որ ուտում,—պատասխանեց գյու-ղացին կրկին գլուխ տալով:

— Դու ուժեղ և առողջ տղամարդ ես, Մարտիրոս,—դու կա-րող ես ունենալ քո արորը և որավարը, վոր պարապես հողագործու-թյամբ:

Մարտիրոսը, չդադարելով գլուխ տալուց, պատասխանեց.

— Յես աղքատ մարդ եմ, աղա, քեզ մատաղ դառնամ:

— Հիմար,—հպարտությամբ գյուղացու խոսքը կտրեց բեկը,— իմ հպատակներից ովք ե հարուստ. բայց յես տալիս եմ նրանց հող, սերմ և բոլոր պարագաները, վորոնք հարկավոր են վարուցանքով համար, և նրանք դրանով ապրում են:

— Դուք միշտ վողորմած եք դեպի ձեր ծառաները, տեր իմ:

— Յես քեզ նույն նպատակով կանչեցի ինձ մոտ: Յես գիտեմ, վոր դու աշխատավոր մարդ ես. յես չեմ կամենում, վոր դու աղ-քատ ապրես. գնա տանուտիրոջ մոտ, յես հրամայել եմ նրան տալ քեզ պիտույքները վարուցանքի համար:

— Աստված քեզ յերկար կյանք տա, աղա, աստված իմ կյան-քից կտրի, ձերի վրա ավելացնի, — ասաց գյուղացին ու շնորհակա-ռությամբ հեռացավ:

Գարնան սկիզբն եր:

Մարտիրոսի յերգի ձայնն արդեն լսելի յեր լինում դաշտից, ուր նա հերկում եր իր որավարը:

Միքանի շաբաթից հետո նրա ցանքն սկսավ բուսնել, կանա-չել ու աճել, բայց նրա հետ աննկատելի կերպով աճում ու բազ-մանում եր տոկոսը նրա պարտատոմսակի, վոր նա տվել եր խանի վորդուն:

Անցավ ամառը, յեկավ աշունքը, Մարտիրոսը հնձեց իր արտը, կալ կալսեց և զուտ ցորենի շեղջը կիտեց կալի մեջ: Ուրախությամբ նայում եր իր հունձքի պտղաբերության վրա, շմտածելով, վոր այդ իրեն չի պատկանում:

Յեկավ կալվածատիրոջ գործակալը, ցորենը չափեց, տասա-նորդը վեր առավ վորպես հողի վարձ, մի մասը վեր առավ դիվա-նի տուրքի փոխարեն, մի մասը վեր առավ իրենց սերմի վոխա-

ըեն, մի մասը վեր առավ նրա պարտքի տոկոսի փոխարեն, կալի մեջ մնաց միայն հարդը և այնքան ցորեն, վոր բավական չեր խեղճ յերկրագործին նույն ձմեռվա ապրուստին:

Կոտրած սրտով խեղճ աշխատավորը դարձավ իր տունը:

— Ինչու յես այդպես տխուր, — հարցրեց կինը:

— Այնպես, քեզս տեղը չի... — պատասխանեց Մարտիրոսը:

— Ասա, ինչ ե պատահել, հիվանդ ես, ինչ ե:

— Ե՞ս, ել ինչ պետք ե լինի, ամբողջ տարին աշխատեցի, մաշվեցի, վերջը ելի դատարկ մնացի:

Յեկ Մարտիրոսը պատմեց կնոջը, թե ինչպես այդ որը կոռոպտեցին իրեն:

— Գոնե պարտքդ թափեցիր, — հարցրեց կինը:

— Պարտքը մնաց ելի այնպես, ինչպես կար, — պատասխանեց Մարտիրոսը խոր հոգոց հանելով:

— Հիմա ինչ պետք ե անես:

— Տեսնենք, գուցե յեկող տարի, աստված աջողի, կարողանամ աշխատել ու տալ:

*

*

Անցան միքանի գարուններ, անցան միքանի աշուններ:

Դյուզից դուրս, իր փոքրիկ յերեխան կրծքին սեղմած, կանգնած եր Սոնան: Արտասուրն աշքերին, նա ճանապարհ եր դնում ամուսնուն դեպի ոտար աշխարհ:

— Կգնամ, Սոնա, յերկրե-յերկիր ման կգամ, կմաշվեմ, կը-տրորվեմ, փող կվաստակեմ և կազատեմ քեզ և իմ յերեխային պարտատերից. — ասաց խեղճ դյուզացին ու համբուրելով տղայի յերեսը՝ հեռացավ դեպի պանդխտություն:

Գիշերն անտառում

Ես, ինչ վոր պիտի պատմեմ, հենց իմ գլխովս անցկացած մի դեպք ե:

Ճիշտ ե, արդեն քսանուհինդ տարի յե անցել եղ որից, բայց մինչև հիմա յել հիշելիս մազերս փշաքաղվում են, մարմինս սարսուում: Իսկապես սոսկալի գիշեր եր, դեպի պատմեմ, լսեցեք:

Չորս սայլորդ եյինք, վարձով ապրանիք եյինք տարել քաղաք, ենտեղից վերադառնում եյինք: Հունվար ամիսն եր. Լոքի մեծ անտառում մթնեց, պետք ե գիշերեյինք: Գրիգոր քեռին, վոր ամենիցս մեծն եր և մեր կարավանի գլխավորը, մի հարմար բացատընտրեց:

Յեղներն արձակեցինք, ծառի ճյուղերից մի մեծ մսուր շինեցինք և յեղներին խոտ ու դարման տվինք: Ապա, կացիններ ունեյինք, յերկու հոգով սկսեցինք չոր ճյուղեր կարտել ու փայտ հավաքել, իսկ մյուս յերկուսը յերկար ձողերով սալերի մոտի ճյունը մաքրեցին: Յերկու մեծ կրակ վառեցինք, մեկը յեղների այս կողմը, մյուսն այն կողմը, վորպեսզի յեղներն ել չմրսեն:

Քաղաքում առաջ սպիտակ հաց ունեյինք և ձուկ. քեռին հանց պաշարը. իրենք մի-մի բաժակ ել ողի խմեցին. ինձ չտվին—են ժամանակ յերիտասարդներն ողի չեցին խմում: — Լավ կերանք, մոտիկ աղբյուրից ել կուշտ ջուր խմեցինք (անտառում ձմեռն աղբյուրները չեն սառչում), կրակին փայտ ավելացրինք և մեր յափրնյիներում փաթաթված, կրակի առաջ պառկեցինք:

Շատ ժամանակ եր անցել թե քիչ, չգիտեմ—մեկ ել Մելքոն ապերը գոռաց.

— Վերկացեք, այ տնաքանդներ, զիլանն եկան, ես ինչ պիտի անենք:

Վա, ինչ տեսարան եր... հեռվից լսվում եր գայլերի ահոեցինոցը. մեկը վոր սկսում եր, մյուսները շարունակում եյին. — Նրանց աշքերը ենպես եյին պսպղին տալիս, վոր կարծես յերկնքի աստղերն իջել եյին յերկը վրա: Յեղները թողել ելին իրենց խոտը և մեջքներն իրար արած, գլուխները կախած, անհանգիստ աշքերով դիտում եյին հեռուն և փնչացնում:

Յես շատ վախեցա. իսկուն վեր թուա, գլխարկս գտա, յափընչիս գցեցի ու չգիտեյի ինչ անեմ:

— Կրակը, կրակը մեծացըեք, թեժացըեք, — աղաղակեց Գրիգոր քեռին արթնանալով. նա վայրկենապեո հասկացավ, թե ինչ ե կատարվում:

Յերկու կրակի վրա յել փայտ լցրինք. կայծերը յերկինք բարձրացան: Գայլերը լոտեցել, շրջապատել եյին մեղ. կրակի բոցով շատ լավ տեսնում եյինք նրանց անոելի յերախները և փայլուն աշքերը. միաժամանակ լսում եյինք նրանց ատամների շխչխկոցը. — ու, եղ ատամների շրիկոցը... մինչև մահս չեմ մոռանալ... մազերը բիզ-բիզ կանգնեցին:

— Վայ, Գրիգոր ջան, կորած ենք, ինչ պիտի անենք, — ասում եր վախկոտ Մելքոն ապերը:

— Իսկի մի վախենաք, վոչինչ չի լինի. մսի հոտ են առել անիրավաբերը... այ մի հրացան լիներ հա... — ասում եր քեռին հանդիստ ու անվրդով:

Թե ինչքան ժամանակ տեղ ես սարսափը, չես կարող ասել:

եղպես շարունակել չեր կարելի. լույսն ել հեռու յեր, իսկ գալերի ողակը հետզհետե նեղանում եր... ու ենքան ել շատ ելին... չեր յերեսուն ասեմ, դու քառասուն իմացիր:

Յերբ գայլերն ենքան մոտեցել ելին, վոր կարելի յեր փայտը շպրտելով հասցնել նրանց, քեռին հրամայեց, վոր բոլորս միասին մի-մի վառվող ածխակոթ շպրտենք գալերի վրա:

«Դե, շնւա» վոր ասեց, բոլորս ել կալծերով վառվող փայտերը շպրտեցինք գայլերի վրա: Նրանց մեջ իսկույն իրարանցում ընկավ ու յետ-յետ գնացին, եղ միջոցին քեռին վերցրեց մի ահագին վառվող ձող և ուղղակի հարձակվեց ամենամոտ գայլի վրա. սա սոսկալի վոռնոցով սկսեց փախչել. մյուսները վայրկենապես հետևեցին նրան: Դու մի ասիլ, վոր քեռին շատ լավ գիտի, թե իր մոտիկը վոհմակի առաջնորդն ե, ու հենց նրան պետք ե փախցնել:

Հինգ րոպեյից հետո գայլերի վոռնոցը շատ հեռվից եր գալիս: — Ել չեն գալ, անհանգիստ մի լինեք, — ասաց քեռին, — տեսեք յեզներն ինչպես ուղղվեցին, հանգստացան ու սկսեցին խոտ ուտել... նրանք շատ լավ են հասկանում՝ յետ կցան, թե չե:

Իսկապես, սպասեցինք ելի տասը-տասնուհինգ րոպե, և գայլերը չվերադառնան:

— Շատ յետ յեկածն ես հա, Գրիգոր, — ասաց Մելքոն ապերը ուրախ ժապտով:

Իսկ Գրիգոր քեռին փաթաթվել եր իր յափնջու մեջ և արդեն քնել եր հսկայի քնով:

Փորձանք

Գյուղաքաղաքի հիվանդանոցի նախասենյակը լի յեր ամեն հասկի և ամեն տեսակի այցելուներով՝ կին, մարդ, աղջիկ, յերեխա... Նրանցից շատերը՝ տեղ չլինելու պատճառով՝ կանգնած են. վոմանք անհամբեր հերթի յեն սպասում բժշկի ընդունարանի դըռների առջև, վոմանք նստած են:

Քրտնքի, տրեխի և յոդոֆորմի հոտ ե գալիս: Նախասենյակի մի անկյունում, կարմիր նստարանի վրա նստած են յերկու մարդ և խօսում են իրար հետ: Նրանցից մեկի, — վոր ունի սև մազերով հաստ դեմք, խիտ հոնքեր և չինացու քիթ, — աջ ձեռքը կապած ե կըծըն: Իսկ մյուսի (վորը ունի ալեխառն փոքրիկ միրուք, հաւաշարժ աչքեր և մեջքին արծաթե բարակ գոտի) գլուխը կապած ե սպիտակ փաթաթանով:

— Յես զարմանում եմ, Պետրոս աղա, — ասում ե չինացու

քթով, ձեռքը կապած մարդը իր հասակավոր հարկանին. — յերկու ոռաջ յես քեզ տեսա վողջ-առողջ, իսկ այսոր գլուխով պատընկած: Ի՞նչ ե պատահել...

— Ել մի հարցնի, Ավետիս, — ասաց Պետրոս աղան գլխի փաթաթանը շոշափելով:

— Կոիվ ե պատահել, ի՞նչ...

— Ի՞նչ կոիվ, ի՞նչ բան:

— Հապա ինչի՞ց յեղավ եղ բանը:

— Մի փուչ բանից:

— Վոնց թե. վեր ես ընկել, թե խփել են:

— Ի՞նչ վեր ընկնել, ախպեր. իմ պարոն ծառան ե խփել. պարզերես կենա...

— Ծառան, են Մինասը թե Դավիթը:

— Դավիթ ե, ինչ անասուն ե, — նեղացած ասաց Պետրոս աղան և նորից շոշափեց փաթաթանը:

— Են, վոր այգին պահում ե: Ինչու խփեց ախը...

— Յերեկ իրիկունը գնացի այգի, փետը վեր կալավ ու տուր թե կտաս գլխիս մեջտեղը:

— Վահ—զարմացավ Ավետիսը՝ կապած ձեռը շարժելով. — առանց դես ու դեմի... Լավ չեմ հասկանում...

— Իհարկե չես հասկանա. յերբ բանը դլիից չասես, թարս դուրս կգա, — սկսեց Պետրոս աղան աշքի պոշով նայելով մյուս սատողներին: — Եղ Դավիթ ե, ինչ փուչ կենդանի յե, դու գիտես, ամսական հինգ մանեթ եմ վոր այգին պահում ե, և դըա համար ամսական հինգ մանեթ եմ տալի՝ հացն ել ինձանից. իսկ ամսական, ամենաքիչը, նա կուտի տասնուհինգ մանեթ, դեռ հացն ել առանց պանիր չի ուտում: Հինգ մանեթն ել եղ տասնուհինգ մանեթի վրա՝ քսան մանեթ. իսկ բան մանեթը քնչ փող չի. դրանով կարելի յե մի կով առնել: Հա տրեխներ ել եր ուղում չտվի: Հա, ախպերս վոր դու յես, եղ մի մըրի վորդին իբր թե այգի յե պահում: Ամեն որ գնում եմ տեսնում՝ ծառերի ինձորները, տանձերը պակաս: Ասում եմ.

— Այ տղա, Դավիթ, ես ծառերի ինձորներն ուր են:

— Յես ի՞նչ գիտեմ, աղա, — ասում ե:

— Վոնց թե, — ասում եմ, — բա վոր դու չգիտենաս, ով գիտի: Զեն չի հանում:

Դեռ եղ վոչինչ, վոր մեծ ծառերի ինձորներն ելին պակասում. ինձ համար ավելի վատ յեղավ, յերբ մի որ ել տեսա՝ Ծունեթի մի թեթև ծառ կա, նրա ինձորներն ել պակսեցին: Եղ ծառը առել եմ վարդանի տղից:

Մի որ յեկավ, թե՝ «Պետրոս աղա, մի խորոմ խոտ տուր, խոտ չունեմ»։ Ասի՛ «Տար, համա քու այգու պատրուսներից մեկը կտաս»։ Մարդը խոստացավ ու տվեց։ Եղ տարի եղ ծառը բոլ բռնել եր։ Ինքը կարձ, թեթև բան ե, բայց լավ բռնել եր։ Կարկուտը շատ մասը վեր արավ և քիչը մնաց։ Եղ քիչը համբարեցի, դուրս յեկավ հիսուն-հիսուներկու հատ։ Եղ քանի որը վոր գնացի այգի, — ասենք՝ ամեն որ եմ գնում, համա այս վերջին անգամ վոր գնացի, տեսա եղ ծառի խնձորը պակաս-համարեցի, դուրս յեկավ 48 հատ։

Կանչեցի եղ անիծած Դավթին։

— Արի եստեղ, — ասում եմ։

Վազեվազ յեկավ ու դիք դադանակի պես աւաշիս տնկվեց։

— Ի՞նչ ե, — ասում ե, — աղա։

— Աղեն աչքդ հանի։ Այ տղա, — ասում եմ, — ես ծառի խնձոր մւր ես։

— Վրեն ե, ուր են, — ասում ե, — աղա։

— Վանց թե վրեն են, — ասում եմ, — եստեղ հիսուն, հիսուներկու խնձոր կար, հիմա 48 հատ ե. Վար ջհանդամն են գնացել։

— Յես ի՞նչ գիտեմ, աղա, — ասում ե։

Ասում ե ու ծառին ե մտիկ անում, մթամ թե նոր ե տեսում։

— Բա վոր դու չգիտես, ով գիտի, — ասում եմ. — Ել ի՞նչի այգի պահող ես, վոր չգիտես։

— Չդիտեմ, — ասում ե, — աղա։

Ասում ե ու ելի ծառին ե՝ մտիկ անում, ենպես վոր աչքերս չտեսնի։

— Ամոթ ե, — ասում եմ, — այ տղա, հոգուդ մեղք մի անի, թե ուտում ես, ասա՝ ուտում եմ, հո յես բան չեմ ասի դրա համար։

— Չե, — ասում ե, — աղա, ուտում չեմ։

— Վոր ուտում չես, — ասում եմ, — ապա ուր են գնում։ Կամ գողանում են, կամ ուտում ես, ուրի? Ել ի՞նչ կա. Հո յերկինք չե՞ն թռչում։

— Չե, — ասում ե, — աղա, վոչ ուտում եմ, վոչ գողանում են։

— Եղ վանց կլինի, — ասում եմ, — յերկուսից մինը՝ կամ ուտում ես, կամ գողանում են՝ դու չես տեսնում։

Չե վոր չե։

— Վոչ ուտում եմ, — ասում ե, — վոչ ել գողանում են։

— Թող եգպես լինի, — ասի, ու մտածում եմ՝ դրուստ վոր նա ուտիւ չի, բայց կծախի։

Մեկ ել, մտածում եմ ինքս ինձ, շատ կարելի յե՝ գողանում են, բայց ինքը քնում ե ու չի տեսնում... վերջապես, ասում եմ, պետք ե իմանալ՝ իմ այգին գող ե մտնում, թե չե։

Ենպես մտածելով հասա տուն ու յեղածը պատմեցի սանամորդ։ Նա յել ասավ, վոր ծառան ուտիլ չի, բայց շատ կարելի յե՝ գողանում են, ինքը քնած ե լինում։ Եղ ել վոր նա ասավ, մտածեցի՝ դանակ, մութը մթնելուց հետո մի թագուն մտնեմ այգի, խնձոր քաւակ, անիծած եղ անիծածը ինձ նկատում ե, թե չե։ Թե նկատի, դեմ, տեսնեմ եղ անիծածը ինձ նկատում ե, թե չե։ Թե նկատի, են ե հո՛ լավ ե մտիկ տալի այգուն, թե չե հո՛ այգիս անտեր ե, գողերը թալանում են։

Մտածեցի ու արի։

Հիմի, քավոր Ավետիս, գու կասես թե՝ յես միքանի խնձորի համար դարդ եմ անում։ Սկի յել չե։ Իս դարդը խնձորները չելին։ Թքած խնձորների վրա։ Յես ուզում ելի իմանալ՝ իմ այգին գող ե մտնում, թե վոչ։

Հենց եգպես, յերբ մութը լավ մթնեց, մի փետ վերկալա, դուրս յեկա տանից ու ճամպա ընկա դեպի այգի։ Մութ, շատ մութ գիշեր եր. ենպես մութ, վոր աչք աչքի չե տեսնում։

Յերբ հասա այգուն, սիրտս տրպալաց. մի տեսակ վատ բան զգացի։ Լավ կլիներ՝ հենց եղ ժամանակ ել յետ դառնայի, ել ես բացի անիծածի. բայց կարծես սատանան բոթեց թե՝ գնա, գնա, նը չեր պատահի. բայց կարծես սատանան բոթեց թե՝ գնա, գնա...»

Յես ել մտածեցի՝ քանի վոր յեկել եմ, մտնեմ մի փորձեմ եղ անիծածին, տեսնեմ՝ նկատում ե թե չե. Թե չնկատի, վայն յեկել ե, իրան տարել. պոչը կկտրեմ, թող ուր ուզում ե գնա։

Ենպես մտածելով, մոտեցա այգու պատին։ Մոտեցա ու լոք տվի նրա վրով, ու հենց լոք տվի թե չե, յերկու քար վատ ելին դրված, ինչ եր, — իրար հետ ընկան պատից... Յես մտա այգի ու մնացի կանգնած։ Ասում եմ՝ տեսնեմ մարդու ձեն-ձուն, վոտի ձեն լըսցի վում ե, թե չե։

Հենց մտել ումտածում եյի, մեկ ել տեսնեմ՝ վոտի ձեն լսվեց։ Մինը դեպի ինձ եր գալիս։ Ասի՝ ով գիտի հենց գող ե։ Համա չե։ Յեկավ, մթի մեջ միքիչ հեռու կանգնեց ու ձեն ավեց։

— Ո՞վ ե, — ասում ե։

Ասողն եղ վրբ վրբ վորդին եր. ձենից են բոպելին ձանաչեցի, համա ձեն չհանեցի։ Ասում եմ՝ ով գիտի հենց ենպես հավայի յե դուռում, առանց բան տեսնելու։

— Ո՞վ ես, — ձեն տվեց նորից:
 Յես ելի ձեն չեմ հանում, Նա փնթփնթաց, հայհոյեց, հեր ու
 մեր աշեց ու նորից.
 — Ո՞վ ես, — ասում ե, — դուրս արի:
 Յես թարսվել, կողքիս եմ ընկել ու ձեն չեմ հանում: Ասում
 եմ՝ իրանից դուրս ե գոռում: Քարերի ձենը լսել ե, դրա համար:
 — Դուրս ես գալիս, թե չե, — մին ել գոռաց նա:
 Ու հենց եղ գոռալը տեսա. մեկ ել ֆոռալով մի հաստ փետ
 յեկավ ու տրաքեց զլիսի:
 — Վայ, դու անիծվես, — ասի ու գլուխս բռնեցի:
 Գյաղես ձենիցս ճանաչեց ու մնաց սառած. ել ձեն չհանեց:
 Քիչ հետո տեսնեմ՝ զլիցս արուն ե գալի:
 — Վայ, — ասի, — յես քու...
 Գյաղի լեզուն կապ ե ընկել. բան չի խոսում, վերջը կմկմաց.
 — Աղա, — ասում ե, — յես ի՞նչ գիտեյի՝ դու յես...
 — Աղեն աչքդ հանի, — ասում եմ, — լիրը լրբի վորդի... Շատ
 ել քեզ ասել են այգուն մտիկ անես. պետք ե ուրեմն փետը քա-
 շես մարդ սպանես:
 — Ի՞նչ ես ասում, — զարմացավ Ավետիսը, կապած ձեռով չի-
 նական քիթը տրորելով:
 — Հապա, — հառաչեց Պետրոս աղան զլիի կապոցը ուղղելով. —
 Եսենց փորձանք բերեց իմ զլիին են լիրը լրբի վորդին...
 — Պետրոս Միրզոյան, — կարդաց հիվանդների ցուցակը սպի-
 տակ շոր հագած յերիտասարդ Փելդերը և, նայելով Պետրոս աղա-
 յի կողմը, ասաց. — ձեր հերթն ե
 Պետրոս աղան զլիարկը վերցնելով՝ դրեց կոնատակը և մտավ
 բժշկի մոտ...

Պարիզյան Կոմմունայի որը

(ՄԱՐՏԻ 18.Ը)

1871 թվի մարտի 18-ին աշխատավոր մասսաները, խորտա-
 կելով Պարիզում բուրժուազիայի իշխանությունը, ստեղծեցին աշ-
 խատավորական հեղափոխական Կոմմունա, աշխարհիս վրա առաջին
 բանվորական կառավարությունը:
 Կոմմունան պըոլետարիատի դիկտատուրայի առաջին փորձն եր:
 Պարիզյան Կոմմունան տևեց 2 ամիս:
 Պըոլետարիատը այդչափ ժամանակամիջոցում քաջության ու

տոկունության հրաշքներ ցույց տվեց: Բայց և այնպէս նա չկարողա-
 ցավ պահել եր իշխանությունը այն պատճառով, վոր,

1. Զինվորական գործում չկար հիմնավոր կազմակերպություն,
 կապ չկար Պարիզի բանվորների ու արհեստավորների մեջ, նույն-
 պէս ամբողջ յերկրի գյուղացիության հետ, ուստի Կոմմունան աջա-
 կցություն չգտավ:

2. Չկար մի ընդհանուր միասնական ղեկավարություն ինչպես
 քաղաքական հարցերում, այնպէս ել տնտեսական ու զինվորական:

3. Պարիզի պատերի տակ կանգնած ելին գերմանական գորքերը,
 վորոնք կարող ելին ջախջախել Կոմմունան:

Մայիսի 28-ին ընկավ Կոմմունան: Բուրժուազիան տոնեց իր
 հաղթանակը: 25 հազար բանվորներ սպանվեցին այդ կովում, գըն-
 դակահարվեցին ու տանջանքի մատնվեցին: Նրանց մեջ կային կա-
 նայք ու յերեխաներ: 15 հազար հոգի ուղարկվեցին աքսոր, ուր
 նրանք յենթարկվեցին տառապանքի և մահացության:

Կոմմունայի նշանակությունը ահագին ե: Նա ցույց տվեց պրո-
 լետարիատի դիկտատուրա հաստատելու անհրաժեշտությունը:

Խորհրդային Ռուսաստանը ծնունդ առավ 46 տարուց հետո և
 շարունակում ե Պարիզի բանվորների սկսած գործը:

Ինտերնացիոնալ

Առաջին ինտերնացիոնալը — Բանվորների Միջազգային Ընկերու-
 թյունը — հիմնվել է 1864 թվին Լոնդոնում:

Ինտերնացիոնալը կոիվ հայտարարեց բոլոր յերկրների բանվորա-
 կան դասակարգը ազատագրելու, աշխարհի բոլոր աշխատավորների
 համար հավասարություն հաստատելու և քաղաքական իշխանու-
 թյուն նվաճելու համար:

I-ին ինտերնացիոնալի առաջնորդն եր կարլ Մարքսը: I-ին
 ինտերնացիոնալը վորոշեց պատերազմ ծագելու դեպքում կոչ անել
 բանվորներին՝ ընդհատել աշխատանքները և բանթող կազմակերպել
 պատերազմի դեմ:

I-ին ինտերնացիոնալը վոչնչացավ Պարիզյան Կոմմունայի ջախ-
 ջախումից հետո, Նա հսկայական դեր խաղաց և շարունակում եր
 ապրել բանվոր դասակարգի մեջ, չնայելով վոր կազմակերպված
 ձեռվ նա այլևս չկար:

Յերկրորդ ինտերնացիոնալը ծնունդ առավ Պարիզում 1889 թվին:
 Նա սահմանեց մայիսի մեկի միջազգային տոնը: 25.ամյա գոյու-

թյան ընթացքում համախմբեց բոլոր յերկրների սոցիալիստական կուսակցություններին բանվորական դասակարգի միացման համար։ Բոլոր սոցիալիստներից, վորոնք մտնում եյին Ինտերնացիոնալի մեջ, պահանջվում եր ուժեղ ագիտացիա մզել և բոլոր միջոցներով կռվել պատերազմի դեմ, իսկ չեթե նա ծագելու լինի, այդ դեպքում ոգտագործել նրան կապիտալիստական պետությունը տապալելու համար։

Բայց յերբ հարկավոր յեղակ խոսքից գործի անցնել, այսինքն՝ յերբ 1914 թվին ծագեց համաշխարհային պատերազմը, Ա-րդ ինտերնացիոնալը մոռացավ իր վորոշումները և փոխանակ կոչ անելու բանվորությանը դուրս գալու ընդգեւմ պատերազմի, Ա-րդ Ինտերնացիոնալի առաջնորդները կոչ եյին անում բանվորներին բուրժուազիայի հետ մի միացյալ ճակատ կազմելու:

1914 - 18 թվականների իմպերիալիստական պատերազմի ժամանակ Արդյունաբերության գավաճանեց բանվորական դասակարգին. իր այդ դավաճանության համար նա կոչվում է «գեղին»:

Նա դարձավ բուրժուազիալի պատվարը, և նրա առաջնորդնելը համարյա ամեն տեղ աջակցում են նրան ու նրա հետն ել աշխատակցում:

Թեև նա գեռես գոյություն ունի, այնուամենայնիվ բանվորական դասակարգի հեղափոխական ժամանակեն յերես և թեքելնը անից:

III. ԲԴ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ ՀԻՄՆՎԵԼ Ե 1919 ԹՎԻ ՄԱՐՏԻՆ, ԽՈՐՀԾՐԴԱՅԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ:

III-ըդ ինտերնացիոնալը կոչվում է կոմմունիստական (կոմին-տերն), վորովինեան միացնում և բոլոր յերկրների կոմմունիստական կուսակցությունները:

Կոմինտերնը մշակել և 21 պայման իր շարքերը մտնողներին համար։ Այդ պայմանները պահանջում են, վոր կուսակցություններն ամեն բանում կոմմունիստական ազիտացիա և պրոպագանդ մղեն բանվորների, հոտաղների ու գյուղացիների մեջ, դուրս կորդեն արհեստակցական միություններն ու կոոպերատիվները համաձայնողական կուսակցությունների ազգեցությունից։

Կոմինտերնը կոիվ ե մզում պըոլետարիատի դիկտատուրան
հաստատելու համար։ Կոմինտերնի դրոշակի տակ մտած՝ բանվոր-
ները խորտակում են կապիտալի իշխանությունը։

Կարլ Մարքս

Մարքսը ծնվել և Գերմանիայում, 1818 թվի մայիսի 5-ին:
Մանուկ հասակից կարև Մարքսն աչքի յեր ընկնում իր խոշոք
ոնդունակություններով:

Մայրը նրան «բախտավոր» եր ասում, վորովհետև ինչ վոր ձեռնարկում եր, հաջողվում եր նրան:

Համալսարանն ավարտելուց հետո Մարքսը մասնակցեց բար-
մանիայի հեղափոխական կռվին՝ կամավորության դեմ:

Նա լրագրեցում գրում եր Փե
բանվորների ծանր գրության մասին:

ԲՆՉԳԵՍ ԵՐ ԱՇԽԱՏՈՒՄ ՄԱՐՔԱՀ

Մարքսն ամերող որեւով աշխատում եր առավոտից մինչև ուշ
գլուխ:

Շատ ուշեր պառկում, բայց միշտ առավոտը ծառը արդեն վոտի վրա յեր, լրագրերը կարդում ու սկսում եր աշխատել եւ մեռջանում եր գիշերը՝ ժամը 2 ին, 3 ին:

Ա զբրշացնում եր ուշւ Սարքով, վոր հաճախ սա
Աշխատանքն այսպես եր տանում Մարքով, վոր հաճախ սա
ուտելու ժամանքն չեր մտածում։ Շատ անգամ ստիպված եյին լինում
նրան միքանի անգամ ճաշի կանչել, մինչև վոր վերջապես գալիս
եր։ Բայց վերջին պատառը հաղիկ կուլ տված՝ Մարքով կը կին
մտնում եր իր սենյակը։

Մարքսը մտածելիս սովորաբար սենյակում առաջ քայլում։ Գորգը՝ դոնից մինչև պատոհան այնպես եր տրորված ու այնպես աշքի յեր ընկնում, վոր կարծես մարդագետնի շավիդ լիներ կարձ բոպեներով Մարքսը նստում եր սեղանի մոտ, վորպես ոի մտածածր գրի առնի։

Յերբեմն-յերբեմն Մարքսը ձգվում եր գարավորակը զրա և եր կարդում, Նա հաճախ միքանի գիրք տիասին եր. կարդում, հերթով

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՏԵՐՆ ՅՈՒՐԻԵՎԱ
ՀԻՄՆԱԴԻՐՆ Ե

Մարքսն իր գրվածքներում ապացուցում էր, վոր պրոլետարիատը կոիվ մղելով՝ վերջը հնադիմի բուրժուազիայն:

Մարքսը բանվորներին ցույց եր տալիս այն ճանապարհը, վո-
րով կհասնեն այդ հաղթության:

Նա կենինի և բոլոր կոմմունիստների ուսուցիչն ե:

Մարքսը միայն իր ուսմունքը մշակելով չեր զբաղված. նա
հաճախ թողնում եր այդ գործ՝ պրոլետարիատի պալքարին մաս-
նակցելու համար. Յեզ հաճախ կառավարությունների կողմից հա-
յածանքներ եր կրում:

Աշխարհի բոլոր ծայրերից հեղափոխականները գալիս ելին նրա
մոտ՝ խորհրդակցելու:

Նա սովորեցնում եր, թե բանվոր դասակարգն այնքան ավելի
շուտ կհասնի իր նպատակին, վորքան վոր միացած, խմբված կգոր-
ծի:

— «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»:

Այս բառերը, վոր այժմ դուք հաճախ լսում եք ու կարդում,
առաջին անգամ Մարքսն ե ասել:

Կարլ Մարքսի նախաձեռնությամբ հիմնվեց հեղափոխական
բանվորների առաջին միջազգային միությունը:

Այդ առաջին հստերնացիոնալն եր:

ՄԱՐՔՍԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Ինտերնացիոնալում ունեցած չափազանց ծանր զբաղմունքները
քայլեցին նրա առողջությունը:

Ազգեցություն ունեցան և այն ծանր պայմանները; վորոնց
մեջ ապրեց Մարքսն իր ամբողջ կյանքը. Մինչև մահն ել նրան չա-
ջողվեց մարդավայել ապրուստ ձեռք բերել:

Առողջությունը վերականգնելու համար Մարքսն ստիպված եր
միքանի անգամ ընդհատել իր տարապմունքները:

Բայց չնայելով վոր բժշկվում եր, սակայն նա չեր առողջա-
նում: 1863 թվի մարտի 14-ին Մարքսը չկար այլու:

Նա մեռավ իր գրասեղանի մոտ, իր բոլոր ուժերը և իր մեծ
խելքը նվիրաբերելով բանվոր դասակարգի գործին:

Նրա անունն ու նրա գործերը դարեր կապըն:

Առաջին Մայիսյան տոնը Թիֆլիսում

1900 թվի ապրիլի 18-ն եր (Մայիսի 1-ը), Առավոտան ժա-
մի 11-ին պետք ե հավաքվելինք Նախալովկայից 7 վերստ հեռու
մի դաշտում, վոր գտնվում եր սարի յետեռում: Գիտելինք, վոր կը-
սկատվենք ժանդարմերի կողմից, և մեր ցույցը կխանգարվի:
Խաղաղության մեջ մեկ գնալ նախորդ գիշերն սկսեցինք մեկ-մեկ գնալ նա-
խալովկա: Նախորդը մարդիկ ելինք նշանակել վորոշ տեղերում,
վորոնք ցույց ելին տալիս բանվորներին ցույցի տեղը:
Ժամը 11-ին արդեն բաց դաշտումն ելինք: Կլինեյինք 300
հոգի, կազմեցինք շրջան, մեջտեղը բավական մեծ տարածություն,
վորի կենտրոնում ցցեցինք մեր կարմիր դրոշակը, վրան գրված՝
«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք», և «Կեցցե 8-ժամյա
բանվորական որբ»:

Չնայած անձրևային յեղանակին, հրձվանքով ելինք լսում ճա-
ռախոսներին. մեր վոգեորությանը չափ չկար, Հանդիսավոր դասակար-
գային յերդումից այնքան բարձրացավ մեր տրամադրությունը,
վոր ուզում ելինք հենց կարմիր դրոշակներով գնալ բաղաք և շրջել
վողոցները: Բայց մեր հեռատես ընկերների խորհուրդը մեզ յետ
կանգնեցրեց այդ մտադրությունից: Յերեք ժամ հետո սկսեցինք
դարձյալ գաղտնի կերպով վերադառնալ քաղաք, տանելով մեզ հետ
այդ տոնի քաղցը հիշողությունները:

Հետաքրքիր եր ավելի 1902 թվի Մայիսի 1-ի տոնակատարու-
թյունը:

Կաղակներն ամեն տեղ բռնել ելին, և մենք հնարավորություն-
չունելինք կատարելու Մայիսի 1-ը, բայց ուզում ելինք անպատ-
ճառ կատարել:

Տեղեկանալով, վոր դալավինսկի պրոսպեկտով մի մեռել ելին
տանելու, վորոշեցինք միանալ հուղարկավորությանը: Այդ բանը
տեղի ունեցավ աննկատելի կերպով: Նսջեցյալի ազգականները զար-
մացել ելին, վոր հետզհետե նրա հարգողների թիվը շատանում ե:

Բայց լերը բարձրացավ կարմիր դրոշակը, և կազմակները վրա
հասան իրենց մտրակներով, ու սկսեց տուրուղմափոցը, հուղար-
կավորները դադաղը վայր գրին ու փախան, անիծելով այդպիսի-
հարդողներին:

Ահա թե ինչպես եր կատարվում Մայիսի 1-ը ցարական կա-
ռավարության ժամանակ:

Ինտերնացիոնալ

Յելիք, ում կյանքը անիծել ե,
ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ:
Սրդեն վառվում են մեր սրտերը,
արդեն կափի յենք մենք ձգտում:
Եյս հին աշխարհը կփորենք մենք
մինչև հիմքերը և հետո
մեր նոր աշխարհը կշինենք մենք,
ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:
Սա յե վերջին կոփվը
և պայքարը մեծ:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

Վոչ վոք չի տա մեր փրկությունը,
վոչ խենթ հերոսը, վոչ արքան.
մենք պետք ե մեր ազատությունը
կռենք ձեռքով մեր սեփական:
Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը
և յետ խլենք վողջ հողը մեր—
խփենք մուրճերը, տանք մեր ուժը,
բանի յերկաթը տաք ե դեռ:

Սա յե վերջին կոփվը
և պայքարը մեծ:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

Լոկ մենք, ճորտեր ու բանվորներս
ունենք անխախտ մի իրավունք՝
ասել, վոր հողը մերն ե, մերն ե:
կորչի հարուստը թող տզրուկ:
Յեկ յերբ պայթի մեծ փոթորիկը,
և կուշտ շները չքանան,
նորից յերկիրը և յերկինըը
մերն ե ու մերը կման:

Սա յե վերջին կոփվը
և պայքարը մեծ:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

Դարբնի յերգը

Զարկ, զարկ, ընկեր, մեզ բախտ կռենք—
թնդ դողդողա մեծ սալը.
շանթի տարափ մեր շուրջ փռենք—
յուսափորի աշխարհը:

Զարկ, զարկ, ընկեր, ել կանգ չառնենք—
մոտ ե ահա լավ որը...
այնպես թափով սալին զարկենք,
վոր դողդողա աշխարհ...

Արոր

Ահա ծագեց կարմիր արև,
տաք և պայծառ ե որը,
դեհ, բաշեցեր, սիրուն յեզներ,
առաջ տարեք արորը:

Վարը վարենք, ակոս փորենք,
խոր ակոսներ հողի մեջ,
սերմը ցանենք, վոր հունձ հնձենք,
խուրձեր դիզենք կալի մեջ:

Կգա ձմեռ, մենք վախ չունենք,
ուրախ կանցնի մեր որը,
ուտելու միշտ պաշար ունենք,
յերբ լիք լինի մեր հորը:

Դեհ, բաշեցեր, սիրուն յեզներ,
տաք և պայծառ ե որը,
ահա ծագեց կարմիր արև,
առաջ տարեք արորը.

Լեռնականի արտը

Կովկասի լեռներում շատ լեռնականներ են ապրում. ձորեր, վիճեր, ժայռեր ու կիրճեր շատ կան այնտեղ, և բախտավոր են նա, ով այդ քարերի ու ժայռերի արանքում մշակելու համար մի փոքր հողամաս կճարի: Այդ հողամասը շատ թանգ արժե նրա համար:

Պատմում են, վոր մի լեռնական լեռեք փոքրիկ արտ ուներ: Մի որ նա գնաց իր հողերը ցանելու:

Ցանեց մեկը, ցանեց յերկրորդը, իսկ յերրորդը չի գտնում: Զքացել ե կարծես: Շրջում ե, փնտոռմ—չկա ու չկա: Հուսահատված՝ պատրաստվում ե տուն գնալու. վերցնում ե գետնից իր յափրնջին և յափնջու տակին գտնում իր կորցրած արտը:

Մաճկալ ես

Մաճկալ ես, բեզարած ես, առը շնուռ տուր, շնուտ արի. ծովի պես բրտնած ես, յեղներն արձկի, տուն արի: Կաթի սերը քաշել եմ, դրել եմ հովին՝ սառի, ալ-գոզնոցս փուել եմ, արի, թառլան, թըռռո, արի:

Տեղ եմ քցել շվաբում, քամին կուգա, զով կանի. լուսնի շողբն ե մեր ծոցում, չափ տուր, չափ առ, շնուտարի: Դաղրած, բեզարած յար ջան, ամպերն յելան, դեհ, արի. բեզարած ջանիդ զուրբան, ծտից թէ՛ առ, թեղ արի...

Շահումյանի ջրանցքը

Սա Յերևանի մոտիկ ջրանցքն ե: Հարյուր տարուց ավելի յե, վոր նրա աչք ու յերակները հոր ու տիղմ եր լցվել, ջուր չեր հոսում:

Չկար գեղեցկուհի Մամրին, նախկին խանի սիրած հարեմականը. չկար նաև նրա ջրանցքը: Ո՞ւմ սիրտը շահելու համար հոսեր նա, ում յերեսին խնդար: Ել չեր վագում, չեր հոսում, չեր խոխոջում... Ու հանկարծ... նոր ջրանցք, պատերը քար ու կըից:

Խորում. Բուլաղի հենց մուտքի առաջ ջրանցքը բուրդույի պես յերկի կուրծքն ե խրվում: Նա անցնում ե բերդի կողքով, բայց ել ջուր չի տալիս նախկին խանի ասլարանքին, վոչ ել նրա սիրուհի Մամրին: Նա մտնում ե բաց դաշտի ծոցը և գնում խառնվելու Թոխմախան լճի ջրերին:

Միասմանակ նա հանգիստ ե առնում լճի գրկում. չե՞ փոքրինչե տեղ հասնելը նա գործել ե, աշխատել, կյանք տվել բոլորին,

Ջրել արտ ու դաշտ, այզի ու պարտեզ... Բայց նրան կանչում են ծարաված հողերը: Նա դուրս ե գաւ լճից և ջուր տալիս անպտուղ և ամայի լեռնալանջերին, անվար լիս լճից և ջուր տալիս անպտուղ և ամայի լեռնալանջերին:

Առաջին անգամ եյին ջրի հոսանքն ուղղում դեպի ջրանցքը: Ցեղ նա քմահաճ ու կենդանի ժապավենի պես կոտրատվելով կլլթ-կլլթոցով առաջ եր վազում:

Ժողովուրդը ծափահարում եր վոգեորված, աշուղը թառ ածում և յերգում: Ու յերգն ել միախառնվում եր ջրանցքի ջրին, տրոփում յերգչի սրտի պես և կըկնում ժողովրդական հերոս Շահումյանի անունը:

Շահումյանի ջրանցք... նա յել պետք ե աշխատավորի շահերին ծառայի: Շեներ, ավաններ, Շահումյանի ջրանցքը ձերն ե, Այդ ջրանցքը ձեր բարեկամներն են շինել և այժմ կրկին ձեղ են նվիրում:

Շիրակի ջրանցքը

Շիրակի յետ ընկած մի խուլ, փոքրիկ գյուղում ենք: Կյանքը յեռում ե անսովոր թափով. մուրճի ու սղոցի ձախն իրար խառնված մի կատարյալ հերդաշնակություն ե կազմում այդ կուսական մըթնոլորտում:

Տոննելներ, տոննելներ, մեկը մյուսի յետեից... № 1, № 2, № 3 և № 4, վորոնցից № 2-ը 700 սաժեն յերկարություն ունի:

Աշխատում են բանվորները մեղի ժրաշանությամբ: Նրանք պարզ գիտակցում են, վոր խորհրդային շինարարությամբ են զբաղ-պարզ գիտակցում են, վոր ջրանցքի ձանապարհն են պատրաս-ված: Նրանց հայտնի յե, վոր ջրանցքի ձանապարհն են պատրաս-ված: մի ջրանցք, վորի շուրը բանեցնելու յե ապագա մեծ ելեկարոկայանը և ջրելու յե 18 հազար գեսիատին հող:

Այդ ընդհանուր շահը շաղկապում ե բոլոր բանվորներին-հային, թուրքին, հույնին, պարսկին, ուռուսին և նույնիսկ իտալացուն:

Հեռվում յերեսում են բանվորական կացարանները: Ահա և բժշկական պունկտը, փոքրիկ հիվանդանոցը, բաղնիքի շինությունը, ճա-շարանը, խանութը և, վերջապես, գրադարան-ընթերցարանը զա- շարանը, խանութը և, վերջապես, գրադարան-ընթերցարանը զա- շարանը, լրագրությունը հայերեն, ուռուսերեն և թուրքերեն: Խորհրդային նազան լրագրությունը հայերեն, ուռուսերեն և թուրքերեն: Խորհրդային իշխանությունը հոգացել ե իր բանվորների ֆիզիկական և կուտու- թական կարիքները:

Կապս. ահա Շիրակի ջրանցքի և ելեկտրիֆիկացիայի արդանդը:
Մանում ենք տոննելները:

Անցնում ենք առաջ. խավարը խտանում ե. գնում ենք լուց-
կիներով, բայց նրանք հազիվ թե լուսավորում են իրենց բռնող
մատները:

Տոննելի հեռավոր խորքում յերեսում են ճրագներ. աշխատում
են:

— Բարի հաջողում:

— Այ բարի հաջողում, — ասում են նրանք միաձայն:

— Վարոս, վերցրու ճրագը և գնա հետերնին, թող թամա-
շա անեն, — ասում ե նրանցից մեկը, ըստ յերեսութին վարպետը:

Գնում ենք վարոսի հետքերով. նրա ձեռքին ձիթե ճրագ ե: Հաս-
նում ենք մի տեղ, ուր տոննելի պատերը դեռ ցեմենտած չեն:

— Ել ձանապարհ չկա, — ասում ե Վարոսը և կանդ առնում:

Դուրս ենք գալիս տոննելից և շարժվում դեպի շախտաները:
Հսկայական մի փայտե չարի շարժվում ե աջ կամ ձախ յերկու
ձիու միջոցով: Հսկա դուզն իջնում ե ներքե ջուր վերցնելու, մինչե
մյուս դույլը լեցուն բարձրանում ե վեր:

Նայում ենք ներքե. ճրագները հազիվ թե յերեսում են. ներ-
քեսում, հատակին թուրք բանվորներ են աշխատում:

* *

Շարժվում ենք դեպի Արփաչայ:

Հրաշակի բնություն. ուղղաձիգ ժայռեր, պատերի նման. այս-
տեղ-այնտեղ թառել են բանվորները և քար են պոկտում. Դինա-
միտներ են դրել. պայթեցնելու յեն:

Բարձրանում ենք հանդիպակաց քարոտ ժայռերի վրա: Նայում
եմ դեմ. բանվորները հեռացել են, ել չեն յերեսում:

— Բում, բում, բում...

Մի ըոպե ինքնամոռացության գիրկն եմ նետվում. թվում ե,
թե պատերազմ ե, քաղաքացիական կոիվ...

— Բում, բում, բում...

Բանվորները առաջ են վագում. յեր սթափվում եմ: Ժայռերը
դլորվում են:

Աշխատանքի կոիվ ե...

Մենք սկսում ենք բարձրանալ:

Ու յերբ հասնում ենք կասլ, իմ դեմ պայծառ կանգնում ե
մեր յերկը ներկան և ապագան, — առողջ, կենսունակ սերունդ,
ջրանցքներ, ելեկտրոկայաններ, բանվորի ու գլուղացու կուլտուրա,
վերածնված մշակույթ.

Ջեռքի տեղ մեքենա

Զերքի ԴԱԶԳՅԱՀԻՑ ԴԵՊԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Այժմ աշխարհի վճր տեղից ասես, վոր գործարանի ծուխ Հը-
րարձանա. մեկը չի, յերկուսը չի-հազարներ. նրանք են պատ-
րաստում համարյա ամեն բան, ինչ վոր մեզ պետք ե գալիս:

Հում, անմշակ նյութերից՝ յերկաթից, փայտից, բամբակից,
կաշվից և այլն, գործարաններն ամեն որ ահազին քանակությամբ
կատար աստում են տեսակ-տեսակ ճոթեղեններ, զանազան մետաղյա,
փայտյա իրեր և կաշվերն ապլանքներ:

Բայց մի հարյուր, հարյուր հիսուն տարի սրանից առաջ այս
բոլոր բաները գործարաններում չեյին պատրաստվում, այլ փոքրիկ,
ձեռքի արհեստանոցներում — տանը. մեծ-մեծ ինքնաշարժ մեքենա-
ները չեյին բան անողը, այլ՝ ձեռքի փոքրիկ գաղգյանները:

Ի՞նչպես տեղի ունեցավ այս փոփոխությունը:

Քանի դազգյաններ չկային, մարդկանց վողջ աշխատանքը
ձեռքով եր կատարվում. հասարակ գործիքներ եյին նրանց ձեռքին,
վոնց վոր հիմիկվա տանու կոշկակարի ձեռքում՝ իր ասեղն ու կտրիչը,
դարբնին՝ իր մուրճն ու զնդանը: Բայց չե վոր ձեռքով շատ բան
չես կարող անել, շուտ բեզարում ես, գործդ դանդաղ ե գնում:
Այնինչ վոտնաման լինի, մեխ, թե կտորեղեն կամ թե շատ ու
շատ այլ բաներ, պետք ե շատ լինեն, վոր ամենքին հերիք տա:

Դրա համար ել հնարեցին փոքրիկ գաղգյաններ, վոր ձեռքերին
սովության յեկան, և ձեռքերով ել բան են անում: Այսպես, կտո-
ռեղեններ գործելու համար դուրս բերին գործըար գաղգյանը իրեն
բոլոր սարքով:

Սրա քառակուսի փայտե շրջանակի յերկայնքով ձգում են
թելի հինվածքը, իսկ գործըար թելը, վոր հինվածքի լայնքով պետք
ե հյուսվի նրա հետ, մքուքով պատ տված, հատուկ լծակ-վոտքերի
և հարվածներից վաղեվագ ե անում հինվածքի լայնքով մի փոսուկ և
սոթիկ փայտի միջով ու մեկումեջ հյուսվում նրա հետ: Մըուքը
բան ե անում գործըարի ձեռքով, իսկ շրջանակները՝ նրա վոտքերով:
Այս գաղգյանով գործըարը 10 ժամում գործում ե 10-15 արշին

կտոր, իսկ առանց գաղգյանի՝ ձեռքով — 3 արշին միայն:

Բայց տեսան, վոր դա յել քիչ ե: Կարիքը, պահանջը ասում
եր. «Տուր, ինչքան կարող ես ավելի տուր, շատ տուր, ամենքին
չի հերիքում», իսկ ձեռքի գաղգյանով վճնց կարող ես. ձեռք ե՝
բեզարում ե, վոտքերն ել խոմ կրակ չեն կտրելու:

Միտք արին, միտք արին՝ ինքնիրեն բանող մեքենա դուրս

բերին, վոր մարդու վոտների ու ձեռների տեղը բոնեց, — մարդուն մնաց, վոր նրան բան գցի, աչքը վրան պահի և գործելու նյութը միշտ կարգի բերի:

Սակայն դրա վրա յել կանգ չառան: Քանի գնաց, այնքան ավելի նոր նոր հարմարություններ դուրս բերին, հեշտացրին գործն այնպես, վոր, համարյա թե, ամեն բան հիմա մեքենան ե անում:

Մի բանվորն այժմ կարող ե միքանի մեքենա աշխատեցնել միաժամանակ և միքանի պատիկ ավելի բան արտադրել: Առաջները մի բանվորը ձեռքի դաշտահով կարող եր պատրաստել որենը 10 քորոց, այնինչ հիմա, Ամերիկայում, 5 բանվորն աշխատում ե 7 մեքենայի վրա և միասին պատրաստում որեն 7½ միլիոն քորոց, ասել ե՝ մի բանվորին որենը ընկնում ե 1½ միլիոն քորոց:

Հետո, թելքաշ մեքենան հիմա 15 ժամում դուրս ե բրում գայնքան թել, վոր ձեռքի թեշին դուրս կբերի 2700 ժամում, ասել ե՝ 200 անգամ ավելի ժամանակ, ավելի աշխատանք ե պետք:

Դուսաստանի Դոնեցի շրջանի այժմյան մի մետաղաձուլարանի հնոցհալոցը կարող ե վեց անգամ ավելի շատ թուշ հալել, քան ամբողջ Անգլիան 150 տարի սրանից առաջ,

Այսպես՝ որ որի վրա մենք առաջ ենք գնում, առաջադիմում. ձեռքի աշխատանքին հետզհետե փոխարինում ե մեքենայի աշխատանքը, մարդու տեղ բռնում ե մեքենան, վոր շուտ ե արտադրում, շատ և լավը, իսկ մարդուն ասում ե.

«Դու ֆիզիկապես հանգիստ մնա, մի աշխատիր, միայն ուժ տուր խելքիդ և ուսումիդ, վոր ինձ լավ կառավարես, յես քո տեղը կաշխատեմ»:

Յեվ իրոք, ապագայում ձեռքի աշխատանքի տեղը միանգամայն մեքենան կբռնի, և մարդունրա միջոցով այնքան իրեր ու առարկաներ կարտադրի, վոր ամենքին ել կհերիքի ու բոլորի կարիքը կհոգացվի, յեթե նրանց արտադրությունն ու բաշխումը կատարվի կանոնավոր:

Այսպես՝ մենք բոլորս ել ձեռքից—մեքենայի անցնենք, դադոյահից— դործարանի, գործարանային արդյունաբերության:

Տրակտորը

Գյուղն առաջին անգամ տրակտոր պիտի տեսներ: Դեռ ամիսներ առաջ խոսում եյին այն «չարխով սատանի» մասին, վոր «վաթսուն գոմշի ուժ ունի»: Միայն հասակավորներն եյին՝ ծերերըն ու պառավերը, վոր կասկածելով եյին վերաբերվում: Ճուռեյնց Մուքելը հուկի չեր հավատում, թե անգուեց, անձի մաշինին վար կանի:

— Տն, թող մի գա, յես իմ Մարալն ու Զեյրանը լծեմ, դուք ձեր տրակտորը խողի գցեք, տեսնենք՝ ով կզո՞րի. — ասում եր նա յերիտասարդներին:

Ու այդ որն ել յեկավ:

Գյուղխորհրդի նախագահը հայտարարել տվեց վողջ զյուղում, թե վաղը տրակտորը վարելու յե դպրոցավատկան հողը:

— Ի՞նչ լավ ելավ, — մտածեց Ճուռեյնց Մուքելը. արտս հենց եղ հողի կողքին ա. բաս յես եգուց տրակտորի հետ մրցելու յեմ:

Առավոտը Մուքելը վաղ վերկացավ:

— Այ կնիկ, շաւտ արա, հաց տներ, վռազ վար եմ գնում:

Մի ժամ չանցած՝ Մուքելը Մարալն ու Զեյրանը գութանին լծած՝ արտի գլխին կանգնած եր: Ի՞նչ տեսնի. ահազին բազմությունը շրջապատել ե «չարխով սատանին» ու հետաքրքրությամբ մտիկ ե տալիս:

Մեկ ել «չարխով սատանան» վնչացրեց, վնչացրեց ու սկսեց շարժվել՝ մի շարք ահազին խոփերով գետնի կուրծքը խորը ձեղելով:

Ամբոխը քարացել մնացել եր:

Ճուռեյնց Մուքելն այնպես եր սառել մնացել, կարծես արձան լիներ:

Իսկ տրակտորը վնչացնում եր և արագ արագ արտի ես գլխից հն գլուխն անցնում:

— Հրաշք ա, ախպեր, դրուստ վոր «չարխով սատանա»:

— Ինսանի ձեռից խկի բան կպրծնի: Ինչին ասես՝ հոգի կոտ, գործի կղնի:

— Հը, Միքի բիձա, ի՞նչ ես պաղել, ել մրցելու ախորժակ չունեմ, — ծաղրում եյին յերիտասարդները:

— Ախպեր, մենք փաս, մեր դարն անցավ. աշխարքը հմի ջահելներին ա, — պատասխանում եր Միքի բիձան:

Իսկ տրակտորը շարունակում եր իր գործը:

Ընդամենը յերկու ժամում հոկայական արտը վարած պատրաստ եր:

Ժողովուրդը սկսեց ցրվել՝ ճանապարհին խոսելով «չարխով սատանի» մասին:

Ի՞նչ ե կոռալերացիան

Միքանի տասնյակ տարի առաջ Ռոչդել քաղաքի անգլիացի բանվորները վորոշեցին ընդհանուր ջանքերով աղատվել խանությունների խաբեբայությունից, վորոնք նրանց թանգ գնով վատապարնք եյին վաճառում:

Գեղ կանգնի՝ գերան կկոտրի

Ով ինչքան կարող եր՝ փող վեր յեկավ, վոր հավաքած փողով ապրանք գնեն ու իրենց բանվորական խանութը բանան և այնտեղից ազնիվ կերպով, առանց չարչիների խաբերայության վաճառեն այն ամենը, ինչ վոր բանվորներին անհրաժեշտ եւ Այդ նոր գործը կոչվեց կոռպերացիա: Այդ գործն սկսող մարդկանց անվանեցին Ռոչդելի կոռպերացիայի պիոներներ:

Դժվար եր նրանց գործը, բայց և այնպես նրանք իրենց գործն արին, բանվորական կոռպերատիվն սկսեց աճել ու տարածվել բոլոր յերկրներում:

Թե Ռոչդելի կոռպերացիայի դեկավարները և թե ուրիշ կոռպերատորներ չափազանց մեծ հույսեր ելին դնում կոռպերացիայի վրա. նրանք կարծում եյին, թե կոռպերացիան հետզհետե զարգանալով, կարող եր կապիտալիստների ու կալվածատերերի բոլոր գործարաններն ու հողերն իր ձեռքն առնել. և այն ժամանակ կարելի կլինի կյանքը արդար հիմքերի վրա դնել. այնպես վոր մարդ մարդու չի ճնշի: Շատ կոռպերատորներ կան, վոր մինչև հիմա յել այդպես են մտածում:

Նրանք չեն հասկանում այն պարզ բանը, վոր քանի բուրժուացիան ուժեղ ե, թույլ չի տալ, վոր կոռպերացիան աճի այնպես, ինչպես պետք ե:

Կոռպերացիան շատ շատ բան կարող ե անել բանվորների համար, բայց քանի վոր յերկիրը կառավարողները բուրժուաներն են, նրանք թույլ չեն տալ և այն կոռպերատիվը, վոր լավ կպաշտպանի բանվորների շահերը, կփակեն:

Ուրիշ բան ե մեր աշխարհում: Մեզանում կոռպերացիան շատ բան կարող ե անել:

Դուք բոլորդ ել զիտեք, վոր գյուղացին ու բանվորը պետք ե մոտենան իրար. բայց պետք ե իմանաք, վոր ամենագլխավոր մոտեցումը այն ե, վոր գյուղացին հեշտ ու մատչելի գներով առնի այն, ինչ վոր բանվորը պատրաստում ե գործարանում:

Յեվ այդ մոտեցումը պետք ե կատարի կոռպերացիան:

Այդ մոտեցման խանգարում են առևտրականները, վորոնք մեծ վաստակ ունենալու համար բոլոր ապրանքները թանգ են վաճառում:

Բայց վորովհետև մեզ մոտ իշխանությունը բանվորների և գյուղացիների ձեռքն ե անցել, և բուրժուազիան չի կարող խանգարել կոռպերացիայի զարգացման, կոռպերատիվներն արագ բազմանում են, ուժեղանում ու դրանով ամրացնում բանվորի և գյուղացու կապը:

Ամբողջ գյուղն իրարանցման մեջ եր. կին ու տղամարդ, աղջիկ ու տղա, մեծ ու փոքր՝ շտապում եյին մոտիկ դաշտը:
— Յեկեք, յեկեք թաղա բան տեսնելու, — ձայն եյին տալիս վոմանք:

— Յեկեք ու մի տեսեք՝ ձառվաշենց Մուքելը, Բուղաղենց Անտոնը, Մելիքենց Մատոն—վաթսուն-չոթանասուն տարեկան մարդիկ, վոնց են թոքուն-թոքուն աշխատում:

— Տն բա են Պառավենց Սահակը. ասում ա՝ ձեղ հաղարին տակս կծալեմ: Կռներն ինչպես ա քշտել, ոյին բան ա:

Յերեկ-մեկել որը յեկան, իսկի չոփ ել չունեյին, գաղթականներ եյին. հիմի կառավարությունը նրանց հող ա տվել, տուն ա տվել, կաղը-մյուս որը մեզնից կանցնեն ու կանցնեն. ինչ նրանք են մեկտեղ աշխատանքի կպել, քար կճղեն:

— Ախպեր, խալիս կոմմունա յա, մարդիկ իրար թև ու թիկունք են. բա մեզ պես իրարու չուզնի:

Գյուղում մարդ չնաց. հարսանքավորի պես, արտի բոլորը մտիկ ելին տալիս, թե վոնց են տասից տասնըհինգ ընշարված՝ մտիկ ելին տալիս հոգի մի ահագին տարածության վրա տանիք՝ ութսունից ինսուն հոգի մի ահագին տարածության վրա աշխատում՝ վոնց վոր մի տուն, մի ընտանիք:

Մեկ կողմը ութ-տաս գութան, ամեն մեկը յերկու զույգ յեղ լծած—ինչ յեղներ՝ ամեն մեկը մի ջանավար, խալիս մալականի յեղներ, կառավարությունից ստացած, — ենպես ելին գետինը վրում, ենպես ելին ճմբերը շուր տալիս, կարծես խաղ ու հարսանիք լիներ:

Մի ուրիշ տեղ հնգից տաս հոգի տափնում ելին վարածը, մի այլ տեղ՝ ութ-տաս հոգի փոցխում: Պառավ ու կին, աղջիկ ու տղա «չայիր» ելին հավաքում, վարած հողը մաքրում: Զահելներն իրանց զիւ յերգերով մըցում ելին գութանավորի հոռովելի հետ:

— Ախպեր, եսպես վոր գնա, սաղ գեղով մի տուն կդառնանք.

— Ել իմ ու բո չի լինի: Կեցցե կառավարությունը, երեսում ա լավ պլաններ ունի, հա: Առաջ հի եր տեսել եսպես բան:

— Մի որվա մեջ ես ահագին դաշտը կվարեն, կմաքրեն, կը տափնեն, զըաղ կկանգնեն, ենպես են վոգեորվել:

— Բա վճնց ես իմանում, — մեջ ընկավ մի յերիտասարդ կարդացվոր տղա: — Մահն ընկերով՝ հարսանիք ա, բա աշխատանքն ընդունեց մոտիկ ելին կինի: Են ել դժւ տես ու իմացի: Են կողմ նայիր, տես, կերով ինչ կինի: Են ել դժւ տես ու իմացի: Են կողմ նայիր, տես, կոյեցոնց Մակարը մենակ ա վար անում. տես վոնց ա ճլորել:

պինչը բանեա՝ հոգին կտաւ Մարդ մարդու թիկունք պիտի լինի:
ԶԵս լսել՝ «Գեղ կանգնի՝ գերան կկոտրի»:
— Դրուստ ա, ախակեր ջան, դրուստ. ջոկ. ջոկ աշխատելը հա.
ըամ ա: Մենք ել միանանք:

Արևն արգեն թեքվել եր, բայց զյուղացիք դեռ մտիկ եյին տա-
լիս աշխատողներին ու հիանում: Ու բոլորի սրտով մեկ ցանկու-
թյուն եր անցնում իրանք ել միանան, միասին աշխատեն, միա-
սին կռվեն, մեկտեղ հավաքեն, նոր կյանք ստեղծեն:

ՑԱՆԿ

1. Վողջույն ամենքիդ	Սլազան	3	29. Մարդու ծագումը	44
2. Դաշտ	Ա. Խնկոյան	4	30. Մարդը և աշխատանքը	47
3. Բերքի տոնը	Խնկո ապեր	4	31. Յերբ են ավելի ուտում	48
4. Առաջ ու հիմա	Պետրոսյան	4	32. Միկրոբներ	50
5. Ճանձ		5	33. Թագավորի զինվորը	51
6. Կարտոֆիլը		6	34. Կարմիր զինվորը	53
7. Ցորեն ու կարտոֆիլ պահելը		6	35. Կարմիր զինվորի յերգը	54
8. Մեր բարեկամը		7	36. Ինչու յե մեզ հարկավոր	
9. Ծառի կյանքը		8	մշտական բանակը	54
10. Հողը		9	37. Կարմիր յերդում	56
11. Սերմի մասին		10	38. Հանդարս, ընկերներ	57
12. Կենդանի գործարաններ		11	39. Մարտի ութը	57
13. Անասնաբուժի զրույցներից		12	40. Գեղջկուհին	Խնկոյան
14. Մեր ժողովրդական տնտեսութ.		16	41. Մանիշը	60
15. Յերեք նամակ		23	42. Նոր կյանքի շեմքին	62
16. Ստեփան Շահումյանին		23	43. Յերկուշաբթի	62
Հ. Հակոբյան		25	44. Մի որավար հող ԲաթՖի	64
17. Շմբռատի մահը	Վ. Փափազյան	25	45. Գիշերն անտառում	66
18. Մեռան՝ չկորան	Հ. Հակոբյան	28	46. Փորձանք Ստ. Զորյան	68
19. Կամո		29	47. Պարիզի կոմմունայի որը	72
20. Բանվորունու որորը		32	48. Ինտերնացիոնալ	73
Ա. Ծանուցյան		32	49. Կարլ-Մարքս	75
21. Հունվարի 9-ը		33	50. Առաջին մայիսյան տոնը	
22. Լենին		34	Թիֆլիսում	77
23. Լենինին	Հ. Հակոբյան	36	51. Ինտերնացիոնալ	78
24. Հոկտեմբերը—գեղջուկին		36	52. Դարբնի յերգը	79
Սլազան		53. Արոր	79	
25. Գեղեցիկ հեքիաթը	Արագի	37	54. Լեռնականի արտը	80
26. Կոմմունիստական կուսակցու- թյունը		39	55. Մաճկալ ես	80
27. Սոց. Խորհրդ. Հանրապետութ. Միություն		42	56. Շահումյանի ջրանցքը	80
28. Աշխատավորների իրավունք- ները		43	57. Շիրակի ջրանցքը	81
		61. Գեղ կանգնի՝ գերան կկոտրի	87	
		64. Գեղ կանգնի՝ գերան կկոտրի	87	



ՀՀ Ազգային գրադարան



NL0248236

7878